Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24718

891·99
9-28

891.99 | Գարեգին | 1001/3202
Գ-28 | Բանաստեղծություններ-
ՅՈՒՇԱՐՁԱՆ

18	17/ի 43		
55	27/III 46		
96	18/II 46		
268	24/II 47		
268	8/IV 48		
121	7/III 49		
1458	28/IV 50		

157 - 23/I 78

19 NOV 2011

891.99
Գ-28
Կգ

ԱՐԱՄ ԶԱՐԸԳ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՕՏՏՕ!

— « ... Ցաւն է բընուլթեան ձայնը հիմնական.
Ցաւ է մըրմընջում սօսաւող անտառ.
Ցաւ է կարկաչում թաւալող վըտակ.
Մարդկանց ծիծաղի ձայնը հիմնական
Լոկ ցաւ է հընչում չատ ու չատ անգամ » :

ԵՈՒՍ. ԿԵՐՆԵՐ

1001
3909

1897 ՅՈՒՆԻՍ 12 — 1900 ԱՊՐԻԼ 15

ՏԻՒԲԻՆԳԵՆ. ԼԱՅՊՅԻՒ. ԲԵՐԼԻՆ. ԼՈՋԱՆ. ՓԱՐԻԶ.

Հ.Ս.Խ.Հ. ՀՈՒՐՈՅԻՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Столичная Библиотека
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1900

16 JUL 2013

ԲՈԼՈՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Խորին շնորհակալութիւնս եմ յայտնում Գերապատիւ Հ. Սիմէոն Երեմեանին, իր ցոյց տուած բարոյական աջակցութեան համար։

ՄԵԾԱՊԱՏԻՒ

ՊԱՐՈՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎԱՂԵԱՆՑԻՆ

ՍԻՐՈՎ, ՈՒ ՅԱՐԳԱՆՔՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ՀԵՂԻՆԱԿԸ

ԻՄ ԵՐԳԵՐԸ

Խո՜ր տանջանքի բոսորավառ արգանդից
Ծընունդ առել են երգերըս տանջանքի.
Տառապանքի օրօրոցում ցաւ, կըսկիծ
Օրօրել են նոցա երգով մըրըրկի.
Իսկ իմ խեղճ սիրտն, օ՜, նա վեր է մի մօրից,
— Կա՛թ է տըւել ամենախո՜ր վէրքերից։

ՀԱՅՐԵՆԻ ՓԵՆՋԻԿ

ՀԱՅ ԵՐԳՉԻՆ

Կ՚ուզէի՝ որ դու երգէիր անլուռ
Իմ թշուառ եղբօր հալածանքն անվերջ.
Կ՚ուզէի նորա չարչարանքն անլուր
Արցունքով կարդալ քո երգերի մէջ.

Բայց չէ՛, այս չէ՛ ես լոկ ցանկանում:

Կ՚ուզէի՝ որ դու երգեր հիւսէիր
Սուրբ իրաւունքի կըռուի դաշտերից,
Եւ այդ երգերով պըսակ կապէիր
Հրպա՛ռտ մահացած զինուորի ճակտին.

Բայց չէ՛, այդ չէ՛ դեռ իմ իղձը բոլոր:

Կ՚ուզէի տեսնել քո երգում ամփոփ
Ինչպէս մեր ընկած կեանքի վըկաներ՝
— Խո՛ր թշուառութիւն, մինչ ծաղր անամօթ,
— Եղբօր սև՛ դաւաղ, մինչ լըպիրշ պարեր.

Բայց չէ՛, այս էլ չէ իմ իղձը բոլոր:

Կ՚ուզէի կարդալ քո երգերի մէջ՝
Թէ ի՞նչ է մի մօր արցունքներն աղի,
Կամ թէ օտարի շէմքերը մաշող
Բոկոտնն որքի աղերսանքն հացի.

Բայց չէ՛, այս չէ դեռ իմ իղձը բոլոր:

Գ՚ուզէի՝ որ քո ազգու երգերով
Նոր կեանքի ուղին դո՛ւ մեզ հարթէիր,
Սուրբ իդէալի յաղթութեանն անսուտ
Ի՛նքդ հաւատացած մե՛զ քարոզէիր.

Եւ այդ կը լինէր իմ իղձը բոլոր։

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Քընիր մանուկ, իմ սիրասուն,
Օրօր եմ ասում.
Պայծառ լուսինն էլ չի՛ նայում
Քո օրօրոցին։

Այն օրուանից, երբ հայրդ ընկաւ
Քուրտի գընդակից,
Պայծառ լուսինն էլ խաւարաւ
Անարդար գործից։

Արիւնթաթախ հայրդ խանութից
Տարան գերեզման,
Այն տե՛ղ տըւին շինած հողից
Մի հանգըստարան։

Բայց նա չ՚ունի ոսկորներին
Մի փոս առանձին.
Ժողված միատեղ թաղեցին
Բոլո՛ր հայրերին։

Մի խո՛ր հողէ տուն է ծածկում
Նոցա բոլորին.
Այն տեղ ցաւից ազա՛տ հանգչում
Քընած միասին։

Ամբողջ երեք օր շարունակ
Արիւն էր հոսում.
Քընիր քանի ես անտեղեակ,
Օրօր եմ ասում։

Մեր տունն ամբողջ կողոպտեցին,
Ես մերկ մընացի.
Բարի մարդիկ մի չուլ տուին՝
Միսրս ծածկեցի։

Գիշեր — ցորեկ օտարների
Շէմքը թըրջեցի.
Թուք, հայհոյանք շատ կուլ տուի՝
Կաթ պատրաստեցի։

Եւ այդ կաթով, իմ սիրասուն,
Քեզ սընունդ տուի,
Ես անօթի նըստած անքուն՝
Քեզ օրօրեցի։

Հազարաւոր ուրիշ մայրեր
Ինձ հետ միասին՝
Սեղմած կըրծքին որբ մանկիկներ,
Սև՜ հաց մուրացին։

Թէ խընայեց քեզ թըշնամին
Եւ դու մեծացար,
Ուխտ դիր երբէ՛ք քուրտ մայրերին
Արտասուել չըտալ։

Այդ կ'իմանաս ապագային՝
Երբ հայր կը դառնաս,
Մօր սև օրին, արտասուքին
Երբ ծանօթանաս։

Հօրդ վրէժը նման զէնքով
Քուրտից չընհանես.
Եղբայրութեան՝ այդ վարմունքով
Կը դաւաճանես։

Նոքա այնքան մեղաւոր չեն՝
Որ մեզ են մորթում.
Քընկիր, այդ քեզ յետոյ կ'ասեն,
Օրօր եմ ասում։

Մեր բոլորի ցաւը մէկ է,
Նոքա չըգիտեն.
Մեր թըշնամին սև խաւարն է,
Նոքա տըգէտ են։

Դու քարոզէ տըգէտ քուրտին
Լոյս, ազատութիւն.
Դու քարոզէ անգութ քուրտին
Սէր և հաշտութիւն։

Եւ նորա հետ կըռուիր անվերջ
Տըգիտութեան դէմ,
Որ ցանեց հայ և քուրտի մէջ
Թըշնամութեան սերմ։

Հայ, թուրք ու քուրտ, դուք միացած՝
Մութը վանեցէք,
Լոյսի մէջ «եղբայր» մըկըրտուած՝
Ազատ ապրեցէք։

Քընկիր քանի դեռ ծանօթ չես
Խորին ցաւերուս,
Քանի հոգուդ դեռ անյայտ է
Քո վիճակն անյոյս։

Քընենք լացով ու աղօթքով
Մինչև լուսանայ,
Տըզէտ քուրտը խելքի գալով՝
Գուցէ մեզ խըղճայ։

ՈՐԲԵՐԻ ԱՂՕԹՔԸ

Գըթա՛, ո՞վ Տէր, մենք անհայր ենք ու անմայր,
Մեր հայրերը կոշկոճատան մեռուցին.
Մեր մայրերը ցավից դարձան խելագար,
Մոխիրներում մեզ մեն-մենակ թողուցին։

Անգութ քուրտից մի փըշո՞ւր հաց խընդրեցինք,
Մեր հօր հող սիրտն առաջարկեց մեզ ուտել.
Ցո՞ւրտ գիշերին մի տաք անկիւն խընդրեցինք,
Գերեզմանում առաջարկեց մեզ նիրհել։

Գըթա՛, ո՛վ Տէր, գըթա՛ Յիսուս մարդասէր՝
Դու՛, որ մանկանց Քե՛զ կանչեցիր սիրաբար,
Կանչի՛ր մեզ էլ, կանչի՛ր Քո ծոցն, ով Հայր մեր.
Աշխարհից ենք, բայց աշխարհին ենք օտա՞ր։

ՄԱՅՐԵ՞ՐՆ ԵՆ ԽՕՍՈՒՄ

Մայրե՞րն են խօսում արեա՞ն ծովերից
Պըղտո՞ր արցունքի երգերով ազգու՝
Քեզ հե՛տ, ո՞վ Աստուած. անմատոյց վերից
Ձե՞ս լըսում արդեօք կըսկիծը մարդու!.

Մայրե՞րն են խօսում արեա՞ն ծովերից։

ԵԿԷՔ, ԵՂԲԱՅՐՆԵՐ!

Անօթի էիք ու եղաք շատ լաց,
Բայց բաղդը ծաղրեց ձեր արցունքն ազդու.
Եկէք, եղբայրներ, բաղդից հալածուած,
Սըրտիս հանգըստեան հովտում նիրհելու։

Ա՜խ, դուք մերկ էիք, ծարաւ ու յոգնած.
Բա՜ղդ, Բա՜ղդ գոչեցիք, նա փախաւ հեռու.
Եկէ՛ք, եղբայրներ՝ բաղդից մոռացուած,
Սըրտիս հանգըստեան հովտում հանգչելու։

ՄԱՅՐԻ՛Կ, ԱՆՕԹԻ ԵՄ

Մայրիկ, սաստիկ անօթի եմ, հա՜ց տուր ինձ,
Ձեռքիս չոր հացն ատամներըս չեն կըտրում.
Մայրիկ, քունը փախել է իմ աչքերից,
Ճըրագ վառիր՝ վախենում եմ ես մընենում։

Մայրիկ, մի՞թէ այսքան շուտով լուսացաւ...
Օ՜, նա ո՞վ է, նայի՛ր, դըրան մօտ կանգնած...
Ա՜խ, հայրիկս է, նա ո՞ր տեղից տուն մըտաւ,
Մայրիկ, նայի՛ր, ինչո՞ւ է նա դալկացած։

Մայրիկ, ինչո՞ւ նա մեզ հետ չի խօսակցում,
Ինչո՞ւ կարմիր երկար շապիկ է հագել.
Մայրի՛կ, մայրիկ, տե՛ս նա ձեռքն է ինձ պարզում,
Օ՛, նա թարմ հաց — մեծ լաւաշներ է բերել։

Մայրիկ, մայրիկ, ինձ կանչում է՝ որ հաց տայ,
Բայց չեմ կարող ես իմ տեղից շարժուել...
Տե՛ս հացի հետ պանիր, կարագ և միս կայ,
Օգնի՛ր ելնեմ, ա՜խ ես շատ եմ կարօտցել։

Մայրիկ, մայրիկ, դու չե՞ս տեսնում հայրիկին,
Ինչո՞ւ դեռ լաց լինում գըլխիս վերևում.
Անօթի իմ, կարօտցել եմ լաւաշին.
Մայրիկ, դու բեր, ես շարժըւել չեմ կարող։

Մայրիկ, մայրիկ, տե՛ս հայրիկը տըխրաղէմ
Մեզ է գալիս՝ երգելով մի շարական...
Մայրիկ, մայրիկ, հայրիկը ծոցս է մըտնում.
Մայրիկ, մայրիկ . . . . .

ՊԱՏՄԻ՛Ր ԱՍՏԸԾՈՒՆ

Մըշտալուռ լուսին, որ համբերատար
Լըսում ես ամեն թըշուառի ձայնին,
Լըսիր նաև ինձ, ես էլ եմ թըշուառ
Ճակատագրով, — որդի եմ Հային։

Երբ շըրջան կ'առնես իմ հայրենիքով,
Աւերակներում, մոխիրների մէջ՝
Անտէր ու անտուն նիրհող քովէքով
Որբ եղբայրներս համբուրիր ինձնից։

Մեղմ օրօր երգիր սիրասուններուս,
Անուշ զըրուցներ պատմիր խոր քընում.
Ա՜խ, նոցա թըշուառ վիճակը անյոյս՝
Եթէ պատահես՝ պատմի՛ր Աստըծուն։

ՀԱՅՐԻ՛Կ, ԻՆՉՈ՞Ւ

Հայրիկ, հայրիկ, ինչո՞ւ ամեն իրիկուն
Արտասուալի աչքերով ես տուն մըտնում.
Հայրիկ, ինչո՞ւ խո՛ր «ախ» ու «օֆ» ես քաշում,
Ճանապարհին քեզ Քուրտե՞րն են միշտ ծեծում։

Եղբայրներիս ինչո՞ւ քեզ հետ չես բերում,
Որ Քուրտերը վախենան՝ էլ չընծեծեն.
Գիշերն ի բուն խանութումն են աշխատում,
Որ ինձ համար մի գեղեցիկ ծի գընեն։

Հայրիկ, ինչո՞ւ տաք կերակուր չենք ուտում.
Էլ չի եփում մեր մայրիկը թանապուր.
Հայրիկ, ինչո՞ւ ցամաք հաց ենք միշտ ուտում,
Բաժանելով սմեն մէկիս մի կըտոր։

Ինչո՞ւ այժըմ դըրսի հաց ես դու գընում.
Էլ մի՛ գընիր, չենք կըշտանում այդ հացով.
Մեր մայրիկը ինչո՞ւ լաւաշ չի թըխում,
Տան լաւաշը շատ է լինում և համով։

Ինչո՞ւ, հայրիկ, էլ չեմ հագնում կօշիկներ.
Զէ՞ որ ցուրտ է և մըրսում են իմ ոտքեր.
Ինչո՞ւ էլ չես բերում կարմիր խընձորներ՝
Երբ գիշերը տուն ես գալիս խանութից։

Հայրի՛կ, ինչո՞ւ միշտ լըռում ես ու լալիս,
Ինչո՞ւ դարձեալ «ախ» ու «օֆ» ես դու քաշում.
Շատ են ծեծել, որ տեղըդ է ցաւ տալիս.
Ինչո՞ւ, հայրիկ, մայրիկն էլ է արտասուում.
Հայրիկ, ինչո՞ւ ես էլ ձեզ հետ եմ լալիս։

Ե՛Ի ՔԵԶԻ ՀԱՄԱՐ

Ե՛ւ քեզի համար ես կ'ուզեմ երգել,
Դու տառապեալ մօր տարաբա՛ղդ զաւակ.
Կ'ուզեմ երգերով քո վիշտն ամոքել,
Քեզ հետ լալ – յուսալ խոնաւ յարկի տակ։

Թէև չէ՛ ծընել ինձ թըշուառ մի կին,
Ցընցոտին ինձ չէ՛ եղել խանձարուր,
Ոչ էլ օրօրել մայրըս լալագին
Անքուն գիշերներ երգերով տըխուր,

Սակայն բաղխում եմ իմ կամքով ազատ՝
Թըշուառութեան տան արցունքոտ դըռներ,
Որի բընակչաց վիշտն է հարազատ,
Ուր ողբում են լուռ նոքա կիսամեռ։

Ընդունիր, եղբայր, յարկիդ տակ ինձ հիւր,
Տո՛ւր խըրճիթիդ մէջ մի խոնաւ անկիւն,
Ուր երգեմ — պատմեմ քո ցաւերը բիւր
Լալահառաչ մօր գիշերներն անքուն։

Մերթ ողբամ քեզ հետ, մերթ խուլ յուզմունքով
Լեցուած ներշընչմամբ մարգարէական,
Անյոյս սիրելդդ խորհն հաւատով
Երգեմ ցաւերից ազատ ապագան։

ԴԷՊԻ ԽՐՃԻԹՆԵՐ

Դէպի խըրճիթներ գնենք մենք, եղբայր,
Աշխատաւորի ցուրտ կայանն անշուք,
Ուր վիճակել է կեանքը անարդար
Օրոցքից — շիրիմ լոկ զըրկանք ու սուգ։

Ա՛յն տեղ, ուր նիհար դէմքեր անարև
Թո՛ր թըշուառութեան բաժակը քամած,
Սև մահն են խընդրում երկընքից պարգև,
Բայց մահը անգամ չի լսում նըրանց.

1001 3909
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. Խ. Հ. Պ. Հ. Պ. Հ. Պ

Ուր խոնաւ գետնին կիսամերկ ընկած
Մայրը՝ դառնագին արցունք է թափում,
Որի չոր կըրծքին մանկիկը փարուած՝
Կաթի փոխարէն արիւն է ծըծում.

Ուր հայրը թըշուառ, օ՜ ճակատագիր!
Տընքում է հիւանդ մերկ գետնին անտէր,
Մաշուած կըրծքի տակ սըրտից կարեկիր
Կաթեցնում արեան վերջին կաթիլներ...

Անարատ սիրով մեր սըրտերը լիք,
Դէպի այդ տունը ուղղենք մեր քայլեր,
Ուր անյոյս ընկած նոքա վիրալիք՝
Կարօտ են անկեղծ բարեկամների։

Մեզ հետ է զարնան ջերմ՝ պայծառ արև,
Թըշուառութեան տուն! բա՛ց մեզ քո ցուրտ ծոց.
Բերում ենք անվիշտ նոր կեանքի բարև
Ցարկիդ տակ հեծող տարաբաղդ որդոց։

10

ԻՆՉՈ՞Ի ԶԱՐԹԵՑԻ

Ինչո՞ւ զարթեցի. հազիւ մի վայրկեան
Ես հանգչում էի երազած կեանքում,
Այն տեղ, ուր անենեզ սէրն է մընչական,
Ուր մարդիկ իրար եղբայր ճանաչում։

Շուրջս ողբում են թըշուառներն անլուռ,
Մոռացուած նոյն խակ հարազատներից.
Արիւնոտ ներկան խաւա՛ր ու տրխո՛ւր,
Անյոյս ապագան խիստ ճընշում է ինձ։

Ինչո՞ւ զարթեցի, է՛հ ինչո՞ւ ես էլ
Երազի հետ չըվիժեցի անդարձ
Դէպ ի այն աշխարհն, որից նա եկել.
Ա՜խ երազ անուշ, երազ անմոռա՜ց։

ԱԶԱ՜Տ ԼՈՒՍԻՆ, ՔԵԶ ԳՈՂԳՈԹԱ Կ՚ԸՆՏՐԷԻ

11

Ինձ կեանք տըւող զօրութիւնը թէ ուզէր
Արդար զոհով խեղճի արցունքը սըրբել,
Կ՚աղերսէի, որ ինձ սըրբած զոհ ընտրէր
Եւ իրաւունք տար երկընքում ինձ խաչուել։

Անտուն, անտէր խեղճերին ծայն կու տայի. —
Էլ վե՛ր չ՚ցաւի, վե՛ր չ՚զըլկանքի, արտասուաց...
Ազատ լուսին, քեզ Գողգոթա կ՚ընտրէի,
Մեղսոտ երկրից քո կոյս գիրկը սաւառնած։

Կըրծքիդ խաչուած՝ իմ արիւնը թող քամուէր
Կաթիլ կաթիլ, ներկէր դէմքը քո պայծառ,
Եւ շողքերդ իմ արիւնը թող ցողէր
Երկրի վերայ, երկրի անգութ, անարդար։

Դիակների վերայ պալատ կառուցող
Հալածողը թող ինձ նայէր ու սոսկար.
Իսկ անարդար կեանքում ցաւով շունչ քաշող
Հալածեալը՝ ինձ նայելով մի՛շտ յուսար,

Մինչ այն ժամին, երբ իմ հայեացքը մարած
Խաչի ծայրից տեսնէր խեղճին ազատուած.
Թող արիւնոտ իմ դիակը ցուրտ, անշունչ
Գահավիժուէր կըրկին երկիր սըրբացած։

10

ԸՆԿԵՐԻՍ

Թող վերջին անգամ մեր հայրոյրը սուրբ
Նրւիրագործէ ուխտն անդաւաճան,
Որ մենք կընքեցինք երդումով անսուտ
Ազատ տաճարում անկաշառ ուսման.
Եւ խոր հաւատով դէպ ի ապագան,
Սիրոյ քարոզը մեր շրջթունքներին՝
Մընենք կեանքի մէջ անվախ, համարձակ,
Միշտ հաւատարիմ մեր դրրոշակին։
Թող որ մրթագնի երկինքը պայծառ
Փըշերով խեղդուած մեր ուղու վերայ,
Եւ թող ահարկու անթափանց խաւար
Արար աշխարհի վերայ ծանրանայ.
Դարձեալ անվրհատ՝ մեզ յոյսը ընկեր՝
Մենք շարունակենք սէրը քարոզել։
Թող ժայթքէ ամպրոպ որոտ կատաղած՝
Թօլ խաւարի մէջ շանթեր շընչելով,
Ողջ տիեզերքը կուրծքը պատառած՝
Մեր օրհասն երգէ ահեղ ծայներով.
Իսկ մենք սարսափած՝ մեր վիզը երբէք
Տարերքի առջև չընտնարհեցնենք,
Այլ մեր կըրծքերը սիրոյ յաղթութեան
Ազատ երգերով արձագանգ թող տան։
Կամ կէս գիշերին խուլ անապատի
Հեռաւոր ծայրից՝ երբ լըսենք մեր մօր
Հեկեկանքն ազդու... առանց արցունքի
Ինչպէս կըռւում քաջ ճըշմարիտ զինուոր,
Սուրբ գործին զոհած մեր մօր լացն ու կոծ՝
Մենք շարունակենք մեր ըսկըսած գործ։
Եւ երբ վաստակած մի խեղճ անկիւնում
Ընկած ենք կարօտ նոյն իսկ փըշրանքի,
Երբէք չանիծենք օրն այն սըրբազան՝

Երբ մենք այս ուղին ազատ ընտրեցինք։
Իսկ երբ նրատած մեր աչքեր փակուում,
Գերկախառնուած վերջին համբոյրով՝
Ահա մենք մեռնում ենք... օ՛ կրուռի ընկեր,
Փակե՛նք մեր ուխտը՝ հրպարտ մեռնելով։
Թէ մենք կ'ունենանք մահուանից յետոյ
Մի մի հողակոյտ աւեղին ծերի,
Կամ թէ արցունքներ կը թերջե՞ն նոցա,
Կամ անգերեզման կը մընանք ընդ միշտ
Անյայտ անկիւնում մի շերտ հող դարձած,
Թաղումից, շիրմից անգամ որբացած,
Դա՛ մի և նոյնն է, այդ մենք լաւ գիտենք.
Միայն մե՛զ հետ է, ո՛ւր որ էլ լինենք,
Գիտակցութիւնը այն անխոցելի,
Որ մենք մեռել ենք ընկերի համար...
Մի ընկեր, որի արցունքը սրբել՝
Դեանքի կուռ շղթան ցանկացանք փշրել։

ԱՆԴՐՇԻՐՄԵԱՆ ԻՂՁ

(ՏԱՊԱՆԱԳԻՐ)

Թէ հրնար լինէր!
Երբ զրօշն է պարզուած եղբայրակցութեան,
Եւ մարդկութիւնը եղբայրաբսպան
Դաշոյնը կոտրած՝ յաւիտենական
Սիրոյ դաշն կընքում անսուտ երդումով, —
Դերախտում անգամ, իբրև մի ըմբոստ՝
Արարչի կամքին կ'հակառակէի
Եւ կեա՛նք կ'առնէի... Սրբրազան սիրոյ,
Եղբայրակցութեան տօնին մասնակից,
Կերկնակի մահով դրժուիք կ'երթայի։

ԼԵՌՆՑԻՆ

Անմատոյց լերան ժայռերի գըրկում
Նիրհում է անո՛ւշ՝ զէնք գըլխի տակին,
Ինչպէս արծիւն իր սեփական բընում,
Հի՛ն հի՛ն դարերից անկախ լեռընցին։

Նորա կընճըռոտ դէմքն արևակէզ
Քընի շըղարշով թոյլ վարագուրուած՝
Պատկառելի է և աղդու այնպէս,
Ինչպէս կուռ ժայռեր շուրջը բարձրացած։

Հողածին մի մայր նորան չէ՛ ծընել,
Այդ չէ՛ երևում հասակից, դէմքից.
Կարծես տիտանեան լեռն է դուրս վիժել
Ժայռերով խեղդուած ամուլ արգանդից։

Լուռ է ամեն ինչ, զեփիւռ ու վըտակ
Օրօր են երգում լեռների որդուն.
Մամռապատ ժայռեր, երկինք կապուտակ
Հըսկում են որպէս պաշտպաններ արթուն։

Եւ նա նիրհում է խաղա՛ղ, անտըրտում՝
Հայրենի լերանց ժայռերի գըրկում,
Ուր ամենայն ինչ սուրբ է և ազատ
Լեռների որդոց հոգուն հարազատ։

ԱՍԱՑԷՔ ՆՈՐԱՆ

Խորհ՛ն գիշերով, երբ աշխարհն հանուր
Նիրհում է գըրկած ժըպիտ, մահ ու սուգ,
Ես ծե՛զ եմ դիմում, ատողե՛ր մըշտալուս,
Գուցէ օտար չե՛ն ծեզ մեր արտասուք։

Ասացէք նորան, ով կեանքն ստեղծեց,
Որ երկրի վերայ հայութիւնը հէգ
Թե՞ղն է ու թշուառ, և ցաւերին մեծ
Զունի կարեկից բարեկամ աննենգ։

ԿՈՒ ԳԱ՛Յ ԴԱՐՁԵԱԼ ՎԱՌ ԳԱՐՈՒՆ

Էլ սոխակը չի երգում
Հայաստանի պարտէզում.
Հայ աղջիկը կուրծքն հասուն
Վարդով էլ չի զարդարում։

Կոպիտ ձեռքեր խլեցին
Կոկոն վարդերն մայր թըփից,
Այրեցած վարդենին
Զըրկեցին թարմ ճիւղերից։

Տիրեց ծըմեռ, աղջամուղջ
Ամայացած պարտէզին.
Սոխակն երգով սըրտառուչ
Տըւեց բարևն իր վերջին։

Այժըմ լուռ է և աւեր
Սիրուն պարտէզն այն դալար.
Զըկան զոյնզոյն վարդիներ,
Զըկայ սոխակ սիրալար։

Աւերակաց թագուհին՝
Մահազուշակ տըխուր բուն՝
Տէր է դարձել պարտէզին
Եւ վայում է օրն ի բուն։

Հայ աղջիկներն հերարձակ
Այն տեղ սև խաչ կըրծքերին,
Թափառում են միայնակ
Եւ երգում են լալագին։

— «Էլ չի՛ ծագիլ վառ արև,
» Տիրեց խաւար անվարատ։
» Սոխակն էլ չի՛ տալ բարև,
» Էլ չի՛ ծաղկիլ կարմիր վարդ»։

Անուշ քոյրեր, վառ գարուն
Կու գայ դարձեալ շուտ օրում.
Դարձեալ սոխակն երգ սիրուն
Կ'երգէ հայի պարտէզում։

Կը բողբոջին ծաղիկներ,
Վարդին կոկոն կ'արձակէ,
Եւ ամայի մեր պարտէզ
Կըրկին դալար կը հագնէ։

ՀԱՅՈՒՀՈՒ ԱՉԵՐ

Տո՛ւր ինձ հայեացքըդ, այդ խորութեան մէջ
Կարդամ խո՛ր վըշտեր տառապեալ հայի.
Հայի հաւատի և յուսոյ անշէջ
Հըրեղէն ովկիանն իմ առաջ բացուի։

Հայուհու աչեր, սիրոյ ցողիկներ,
Ուր քիւրեղ փայլով հաւատարմութեան
Ցոլում է հուր սէրն ուժգին, անձնուէր,
Աղբիւր էք հայի ազնիւ ներշընչման։

Հայուհու աչեր, աչեր սևորակ,
Ուր անսուտ հաւատն երազի գրկում
Նիրհում է յուսոյ կրնքով անխորտակ,
Աստղեր էք հայի խաւար երկրնքում։

Տո՛ւր ինձ հայեացքդ, այդ խորութեան մէջ
Կարդամ դարևոր վիշտը հայ ցեղի.
Հայի երջանիկ ապագան անվէճ
Իմ հոգու առաջ շքեղ նրկարուի։

ԾԱՆՐ Է ՔՈ ԵՐԳԸ

Ծանր է քո երգը, տառապեալ եղբայր.
Նա չի՛ սրլանալ աստղերից վերև
Դէպ ի բարձունքներ, դէպ ի հայրն արդար.
Նա մի՛շտ կը սողայ ոտքերի ներքև։

Ծանր է քո երգը, արցունքով պրղտոր
Նորան հիւսեցիր... Դու երգի՛ր անլաց,
Կուրծքդ դէ՛մ տրւած հոսանքին հրզօր,
Նա կը սրլանա՛յ այնժամ առ Աստուած։



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԷՊԵՐ

I. ՄՈՒՐԱՑԿԻ ԶԱՒԱԿԸ

Մայրական սիրոյ պաշտպանութեան տակ
Նա եկաւ հասաւ մի անծանօթ վայր,
Որի երկնքից չէր թափւում կրակ,
Ուր չէին շողում սուր, դաշոյն երկսայր։

Իսկոյն մոռացաւ երեկը անգութ...
Մօրը վախթեռուած, երկուս միասին
Վաղ առաւօտից մինչ արևամուտ
Ապրելու համար սև հաց մուրացին։

— «Ողորմեցէ՛ք մեզ, որը ենք ու թշուառ,
» Մեր կեանքն ենք միայն ազատել մահէ.
» Փշուր հացի տեղ Աստուած տայ հազար,
» Ու յանկարծակի վտանգից պահէ» —։

Միշտ այսպէս էին նոքա մրմնջում՝
Օտարների վակ դռներ զարնելիս,
Ողբով, օրհներգով սև հաց աղերսում,
Իրենց արկածներ պատմում ու լալիս։

— «Մայրի՛կ, էլ չերթանք սև հաց մուրալու,
» Մեր պրոստոր արցունք ծաղրում են մարդիկ.
» Մեզ հայհոյում են առանց խղճալու.
» Խընդրում եմ՝ չերթանք մուրալու, մայրիկ»,

Ասում էր յաճախ մանկիկը լալով։
Մայրն ըսկըսում էր լուռին արտասուել
Եւ աւելացնել. — «Մկայն մուրալով
» Երկուսիս կեանքը կարող ենք պահել»։

— «Ա՛խ գոնէ ասա այն անգութ մարդկանց,
» Որ երբ հաց չեն տալ, թող չասեն նաև
» Մուրացկի զաւակ»։ Դողդոջում կէսլաց
Մբրբրկում խամրող կոկոնն անարև։

Բայց մոռանալով ծաղր ու հայհոյանք,
Դուրս էին գալիս՝ պարկերը ուսին՝
Դէպ ի քաղաքի մեծ հրապարակ՝
Կըրկին մուրալու սև հաց միասին։

Մի խիստ ծրմեռ էր. իսկ նոքա բոբիկ,
Ըզգե՛ստների տեղ ծրէ՛ններ միայն.
Անկիւն մ՚ունէին խոնաւ ու փոքրիկ,
Ուր և լուսացնում գիշերներն երկայն։

Շատ երկար չանցաւ՝ ու հիւանդացաւ
Դըժգոյն զաւակը սև աղքատութեան...
Մայրը օր — գիշեր քաղաք շըրջեցաւ,
Ո՛չ ըրժիշկ գտաւ, ո՛չ էլ օգնութիւն։

Կորսվի՛զ, յոգնա՛ծ մայրն անմըխիթար՝
Տուն դարձաւ կապտած սոսկալի ցըրտից,
Սիրասուն որդուն արդէն հոգեվար
Գիճակում գըտաւ ու կողքին նըստեց։

— «Ո՞ւր էիր, մայրիկ», — հազիւ լըսելի
Հիւանդը ծայնեց անփայլ ժըպիտով.
— «Հայրիկն այս տեղ էր. ա՛խ նա լըսել է,
« Որ մենք ապրում ենք մուրացած հացով»։

— «Կանչեց իրեն մօտ, ասում էր՝ այն տեղ
« Իմ աշխատանքով սընունդ կը ստանաք։
» Գընանք, մայրիկ ջան, գընանք միատեղ՝
» Որ էլ ինձ չասեն մուրացկի զաւակ»։

Լըռեց հիւանդը. միայն մերթ ընդ մերթ
Դողդոջում էին շրթունները կապտած՝
Ինչպէս աղքատի սըրբազան մի երգ՝
— «Էլ ինձ չե՛ն ասի մուրացկի զաւակ» —։

Լըսում էր մայրը, լըսում էր անլաց
Մահամերձ որդու ազդու խօսքերին.
Ապուշ հայեացքը անթարթ սևեռած
Նայում էր նորա հալտող աչքերին։

Ցանկարծ ծիծաղեց, ու վազի նըման
Սեղմեց կիսաշունչ կորիւնը կըծքին.
Մի քանի վայրկեան՝ և ... ընդ միշտ քընան
Իրար պինդ սեղմած, իրարու կողքին։

II. ՄԱՅՐԸ

Գաղթում էին հայրենիքից՝
Տուն անդաստան թողնելով
Անգութ քուրտին՝ շատ ընտանիք,
Լոկ կեանքերը փրկելով։

Նոցա հետ էր նաև մի մայր
Իր միամօր զաւակով,
Որը տէր էր եղել անծայր
Հարստութեան ատենով։

Բայց թշնամին ահեղ մահով
Թալել էր իր ամուսնուն,
Թալանումով ու հրդեհով
Քար քանտ արել տեղ ու տուն։

Երեկոյ էր, հանգչում էին
Լեռնադաշտի փեշերում,
Ու լալագին կանչում էին
Արդար տիրոջն օգնութեան։

Ցանկարծ թընդաց խուլ ծորերում
Հրացանի պայթիւններ,
Ու շրւարած խումբը վերում
Ուր դիմելը չգիտէր։

Երկրորդուեցին, երրորդուեցին
Հրացանի շաչիւններ.
Կամաց կամաց լսուում էին
Նաև ընդհատ բարբառներ։

Իրար անցաւ խումբը բոլոր,
Էլ լաց, աղօթք վերջ չունէր.
Թելակորոյս, քայլամոլոր
Ամեն մէկը փախչում էր։

Քիչ էլ անցաւ, երևացին
Լեռնադաշտի մի ծայրից
Ձիաւորներ, ու սուրացին
Դէպ ի խումբը ցաւալից։

Փոշի ու ծուխ, լաց, կոծ, հառաչ
Թառնըւեցաւ իրարու.
Ոմանք յետին, ոմանք առաջ
Փախչում էին խուճապով։

Բայց այն մայրը իր զաւակով,
Ամ՛ս սովոր չէ՛ր այդ կեանքին.
Ճամբին մընաց, ուշքը գընաց
Ու տարսածուեց չոր գետնին։

Երբ թըշնամիք մօտիցն անցան
Իրեն մեռած կարծեցին.
Ու զաւակը կըրծքին փարուած
Իրենց հետը վերցուցին։

Կէս գիշերին զարթեց յանկարծ
Թոլ խաւարում մեն մենակ,
Բաց աչերը հեռուն յառած
Նայում էր աննըպատակ։

Քար լըռութիւն։ Լոկ ծորերում
Հողմերը խուլ ոռնոցով
Շըրջում էին ու խանգարում
Լըռութիւնը անվըրդով։

Նա դեռ լուռ էր, նա նայում էր
Խաւարի մէջ անդադրում.
Ու կարծես թէ շոշափում էր՝
Շուրջը մի բան որոնում։

Յանկարծ ցատկեց, ու դառնագին
Ողբի ձայնով նա կանչեց.
— «Վահէ՛, Վահէ՛, ո՞ւր ես անգին».—
Բայց Վահէն ձայն չըտըւեց։

— «Վահէ՛, Վահէ՛», — նա ձայնում էր
Խաւարի մէջ իր զաւկին.
Մերթ վազում էր, մերթ կանգնում էր
Եւ փարում էր քարերին։

Գոռաց յանկարծ բոլոր ուժով,
Կանչեց կորած իր զաւկին.
Լոկ այս անգամ յոգնած ձայնով
Ձորերն արձագանգ տուին։

Ցամքեց արցունք, ժըպիտ խաղաց
Որդեկորոյս մօր դէմքին,
Վազրի նըման ցատկեց ժայռեր,
Կորա՜ւ ձորում խո՜ր, մըթին։

Այն օրուանից մինչև այսօր
Երբ կէս գիշերն է անցնում,
Խո՜ր ձորերից մի ձայն անզօր
«Վահէ՛, Վահէ՛» է կանչում։

ՎԵՐՋԱԼՈՅՍԻՆ

Վարդգոյն ներկել է արևը կարմիր
Իմ հայրենի տան լուռ աւերակները,
Ուր տըխուր տեսքով արևն ու մոխիր
Հանգչում են որպէս անխօս վրկաները։

Խոնաւ աչերը դէպ ի վերջալոյս՝
Այն տեղ իմ այրի մայրը անխընտում,
Լալագին ողբով մըրմընջում անոյշ,
— «Այն իմ արևն է, որ մայր է մընում»։—

Եւ վերջին անգամ մահուան տագնապում՝
Նա ձայն է տալիս իր պանդուխտ որդուն,
Բուռը կարօտով կըրծքին սեղմելու,
Նոյա բազկաց մէջ շունչը փըչելու։

Օ՜ մայր իմ անգին, դու մեռնելու չե՛ս,
Այն չէ՛ քո ալև՝ որ մայր է մընում.
Արտասուիր քիչ էլ, որդիդ կը տեսնես՝
Որ բերում է քեզ օրեր անտընտում։

Իսկ թէ թողնում ես որդիդ անազատ,
Բաղդի խաղալիք, ծառայ օտարին,
Այնժամ ես քե՛զ հետ, մայր իմ հարազատ,
Խաւար գերեզման կ՚ինջնեմ միասին։

ԱՄԵ՛Ն ԳԻՇԵՐ, ԵՐԲ ԱՆԿՈՂԻՆ ԷՔ ՄԸՏՆՈՒՄ

11

Ամե՛ն գիշեր, երբ անկողին էք մընում,
Աղօթեցէ՛ք տառապանքի Աստծուն,
Քոյր, եղբայրներ, որ իր գըթով անհատնում
Զորացընէ մեր մօր վէրքը կըսկըծուն.

Նորան կեանք տայ, պայծառ ու վարդ օրերով,
Որ նա տարի տանջանքներից ազատուած,
Տեսնէ մի օր թափառական ու մոլոր
Զաւակները կըրկին իր շուրջն հաւաքուած։

ՄՐՐԿԻ ՍՈՅԼԵՐ

ՄԸՐԻԿՆԵՐԻՆ ԴԱՐՁԱՑ ՈՐԴԵԳԻՐ

Մըրըրիկներին դարձայ որդեգիր,
Տառապանքի սև կաթով սընուեցայ.
Կըսկիծն ու տանջանքն եղան ինձ ընկեր,
Ծովից ու մութից անենեզ սիրուեցայ։

Եւ երբ խաւարի ցուրտ ծոցում կու լան
Մըրըրիկները ալիքների հետ,
Սըրտիս թելերն էլ արձագանգ կու տան
Հըզօր արցունքի երգերին ահեղ։

ԿԱՐ ՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Կար մի ժամանակ, երբ վարդն ու աղջիկ
Սիրահար սիրտըս ինչպէս մի կիթառ
Մեղմ զարնում էին, ու երգով գողտրիկ
Հետևում աստղիս շողերին պայծառ։

Իսկ այն օրուանից՝ երբ նոքա խամրան,
Մարաւ և աստղըս այն դըժխեմ գիշեր.
Ցուրտ մըրըրիկներ սըրտիս տէր դարձան,
Ըսկըսան զարնել տանջանքի երգեր։

Ա՜Խ, ԵՐԲ ԾԱՂՐՈՒՄ ԵՆ

Ա՜խ, երբ ծաղրում են փոքրոգի մարդիկ
Գիրաւոր սըրտի ցաւն ու արցունքներ,
Ուզում եմ դառնալ սարսափ, մըրըրիկ,
Որոտալ ահեղ վառն անկման երգեր։

Օ՜ ԵԹԷ ՄՆԱՆ

10

Ա՜խ, իմ սըրտի խոր ըզգացմունքներում
Նիրհում են ամուլ երազներ անթիւ.
Սակայն ո՞րքան քիչ կեանքիս տարիներ,
Ովկիանի մօտ կաթիլներ հազիւ։

Օ՜, եթէ մընան գերեզմանից յետ
Իմ ըզգացմունքներն անեղծ ու անմահ,
Ես պիտի ապրիմ երազներիս հետ,
Պիտի լամ, յուսամ ու զըրկեմ նոր մահ։

ԹՈ՛Ղ ԱՆԴՈՒԼ ՍՈՒԼԵՆ

10

Թո՛ղ անդուլ սուլեն կործանման երգեր
Մըրըրիկները խաւարի ծոցից,
Մի պահ խըլանան նոցա մօտ կերկեր
Վիրաւոր սըրտի քարոզներն անբիծ.

Ես պիտի լըսեմ մինչև վերջին օր
Ցաւատանջ սըրտի անկաշառ ձայնին.
Պիտի հաւատամ իմ ուժով բոլոր
Նոր կեանքի գարնան վառ ծիածանին։

ՇԱ՛Տ ՕՐԵՐ ԱՌԱՋ

10

Աւերակ սըրտիս փըլատակներում,
Ուր չարագուշակ բուերն են վայում,
Ա՜խ, դեռ լըսում եմ արծագանգը ես
Շա՛տ օրեր առաջ երգած մի երգիս։

Ա՜խ, այդ այն օրն էր, երբ վարդն էր ծընում,
Երբ երկինքն երկրին համբոյր էր տալիս.
Ա՜խ, երբ իմ սիրտն էլ վարդի կոյս ծոցում
Նիրհելու կ'երթար, գինով էր հոգիս։

Օ՜, ԳԷԹ ԴՈ՛ՒՔ ԼԱՑԷՔ

Ինչպէս թառամած չոր տերև աշնան՝
Ընկած է սիրտս հողմերից դաժան.
Ցոյսերս վաղուց մըտել են ցուրտ հող,
Եւ սիրտս չունի, ա՜խ, անգամ լացող։

Օ՜, գէթ դուք լացէք, սև մըրըրիկներ,
Որդիք տանջանքի, տարակուսանքի,
Երբ գաք տանելու ձեր մեռած ընկեր՝
Տալու Լեռայի մընթին հոսանքին։

ՇԱ՜Տ ՈՒՇԱՑԱՆ

Մըրըրիկները, ա՜խ, շատ ուշացան,
Որոնց ճամբեցի աստղերից վերև,
Ահեղ հըրդեհից յաւիտենական
Կայծեր բերելու սըրտիս անարև։

Օ՜, պիտի այրեմ առնե՛ն յիշատակ
Կոյս երազներիս անիւնին վերայ,
Որ նոցա անկայծ մոխիրներին տակ
Տառապանքներիս մութ ծովը չորնայ։

ԷԼ Ո՞ՒՄ ԱՂՕԹԵՄ

10

Պատկեր մ՚ունէի սըրտիս խորանում,
Պատկերն անուրջի անարատ դըստեր.
Լոկ նորա՛ն էի, ա՜խ, ես աղօթում,
Նորա՛ն էր յայտնի իմ թագուն վըշտեր։

Էլ ո՞ւմ աղօթեմ, երբ մըրըրիկներ
Սըրտիս սուրբ խորանն աւեր դարձուցին,
Ա՜խ, երբ իմ պաշտած սուրբ կըռոջ պատկեր
Տառապանքներիս ծովը նետեցին։

ՍԷՐՍ ԵՐԳԵՑԻ

10

Սէրըս երգեցի սիրուն աղջանկին,
Նա ցուրտ լըռութեամբ, ա՜խ, ինձի հեգնեց.
Սէրըս երգեցի վառ ծխածանկին,
Բայց նա ճակատիս կամար չըկապեց։

Սէրըս երգեցի արշալոյսներին,
Վարդին ու զարնան, խոտերին դալար,
Սէրըս երգեցի և՛ աղջիկներին,
Բայց չեղաւ մէկը որ արձագանգ տար։

ԵՍ ԴԱԼԿՈՒԹԻՒՆ ՍԻՐԵՑԻ

7

Ես դալկութիւն սիրեցի.
Ալ վարդի տեղ ես նորան
Ճակտիս պըսակ ընտրեցի.
Ես դալկութիւն սիրեցի։

Ես դալկութիւն սիրեցի·
Թոր տանջանքի այլ շողով
Սիրտս ու հոգիս լեցուցի·
Ես դալկութիւն սիրեցի։

ԵԹԷ ՉԼԻՆԷՐ

Եթէ չլինէր ժըպտի մօտ արցունք,
Մանկան մօտ ծերուկ, կամ վարդի մօտ փուշ,
Ցաւի տակ հեծող կեանքը վաղանցուկ
Զըպիտի լինէր օ՛ այսքան անուշ։

Սիրել, լալ, յուսալ, մաքառիլ յամառ
Յանուն սըրբազան իդէալների,
Հող մըտնիլ խըղճով մաքուր ու արդար,
Այսքանն էլ բաւ էր՝ որ ապրիլ արժէր։

ԹՈՒՆԱՒՈՐ ԻԺԻ ԳԱԼԱՐՈՒՄՆԵՐՈՎ

Թունաւոր լժի գալարումներով
Շատ մըրըրիկներ սողացին դաւով,
Աւերը դարձուցին անցած շէն ճամբան,
Ճակտիս դալկութիւն չըտարան սակայն։

Նոր կեանքի տենդից կիսախելագար
Արևն համբոյրով հալեց ամէն սառ·
Տերև ու ծաղիկ կըրկին ժըպտեցան,
Կուրծքիս ժեռ սառոյց չըհալեց սակայն։

ԾՈՎ ՈՒ ՄՐՐԻԿ

Ծո՛վ ու մրրրիկ՝ սրբոտիս հարազատ
Զոյգ ընկերներն են տարար աշխարհում.
Ա՛խ, ես սիրել եմ նոցա երգն ազատ,
Ու խորհրդաւոր լացը գիշերում։

Իսկ երբոր մեռնիմ, ես պիտի չուզե՛մ
Ո՛չ տրխուր կոչնակ, ո՛չ խումբ երգեցիկ.
Թող մութ ալիքներն իմ մահը զուժեն
Ու մրրրիկներն ինձ սուլեն հանգիստ։

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՆՈՒԱԳՆԵՐ

Լռութեան մէջ վեհ ու հրպա՛ռտ ծայն տալիս,
Ու չի առնում պատասխանը Անմահին։

ԱՆՈ՛ՒՇ ՎԱՅՐԿԵԱՆ

Ահա ինչան հոյլ երազներն աստղերից
Ու փոշու պէս ցանուան կեանքի վէրքերին.
Անո՛ւշ վայրկեան, երբ մոռացած ցաւ, կրսկիծ,
Ամե՛ն մի վէրք անծնատուր է թըմբիրին։

ՄԻ ՀԻԻԱՆԴ ԱԿԿՕՐԴ

Հոգուս խորքում, այն տեղ ուր լուռ է խոկում
Մոռացման մութ ծովն իր գիշեր պատանքով,
Նոճիատունկ խուլ ափերին բողոքում
Մերթ մի հիւանդ ակկօրդ հիւսուած արցունքով։

Մերթ գալարւում անխօս ծովի ցուրտ կուրծքով,
Մերթ սողոսկում նոճեաց անլոյս խորքերում.
Ու ծա՛յն տալիս հոգևարվի աղերսով՝
Ցիշատակա՛ց, որ մոռացումն են ապրում։

ԳԻՇԵՐ

Խորհն լռութիւն։ Ինչպէս անխօս ժայռ,
Ինչպէս մի մեռեալ հագած իր պատանք,
Ծանր աշխատանքից յոգնա՛ծ, ուժասպառ,
Կեանքը նիրհում է սև վերմակի տակ։

Ու ինչպէս մայրեր նորա մահճի շուրջ՝
Անցա՛ծ, զընացա՛ծ դարերն են արթուն,

Որ խաւարի մէջ լուռ ու անշըշունչ
Հըսկում են որպէս պաշտպաններ անքուն։

ԶՄՐԱՆ ԳԻՇԵՐ

Զըմրան գիշեր է։ Փափկիկ անկողնում
Տատը ծոցն առած սիրուն թոռնիկին,
Պատմում է անվերջ, ու չի էլ յոգնում,
Համեղ հեքեաթներ անմեղ գառնուկին։

Ցոգնած թոռն արդէն վաղուց է նիրհում,
Սակայն ծեր տատը պատմում է կըրկին...
Պատմում է անվերջ, ու չի՛ էլ յոգնում,
Համեղ հեքեաթներ նիրհող գառնուկին։

ՀԱՒԻ ԵՐԳԸ*

Խոր գիշերով հաւն է կանչում
Ու ծեր տատին արթնացնում.
— «Գիրգո՛ր, Գիրգո՛ր» — տատն է ծայնում
Ու մեծ որդուն վեր կացնում։

— «Մոմը վառիր ու ցած իջիր,
» Հաւն է կանչում իր բընից.
» Տէ՛ր, գոչելով ճիտը քաշիր,
» Որ ազատինք փորձանքից»։

Ցած է իջնում որդին խոնարհ՝
Կատարելու մօր պատուէր,
Պառաւ տատը սարսափահար
Մըրմընջում է աղօթքներ։

* Էրզրումում պառաւ տատերի փիլիսոփայութեամբ, հաւի կանչելը մի մօտալուտ փորձանքի նշան է համարուում։

ՄՈՒԹԻ ՀԱՄԵՐԳԸ*

10

Խորհ՞ն զիշեր է. անթափանց խաւար!
Շլներն են ոռնում սարսափից պատած,
Եւ մերթ հասնում է հեռուից հողմավար
Զանգերի տարտամ զողանջը յոգնած։

Մութի խոլական ծայներից զարթնած՝
Անձկոտ նայում է տատը թոռնիկին.
Խաչակընքելով մանկիկը քընած,
Աղօթքն է խառնում մութի համերգին։

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՆՈՒԱԳԸ

11

Մերթ լսում եմ ես ակկօրդներ սարսռուն
Կէս զիշերուան մեռելալուռ մի պահին.
Հոգիս տենդով սաւառնում է դէպ հեռուն
Դէպի վայրը խորհրդաւոր նուագին,
Երբ հասնում են ինձ ակկօրդներ սարսռուն։

Կէս զիշերուան մեռելալուռ մի պահին
Ինձ թվում է՝ թէ երգում են շա՛տ հեռում
Պալատազուրկ կոյր հարսները սև մահին,
Հի՛ն դագաղներն ինչպէս կիթառ ձեռներում,
Կէս զիշերուան մեռելալուռ մի պահին։

Հոգիս տենդով սաւառնում է դէպ հեռուն
Ուր զարնում են դագաղների լարերուն
Փառքի, սիրոյ, տանջանքի ու խընդութեան.

* Էրզրումի տատերը նոյն փիլիսոփայութեամբ՝ շների ոռնոցը գիշերում ընդունում են իբրև մահագոյժ։

Ու տեսնում է՝ ուրուականներն են պարում,
Երբ զարնում են դագաղների լարերում։

ԱՌԵՂԾՈՒԱԾՔ

Ինձ թվում է, թէ լսում եմ մահճիս մօտ
Մերթ մի հընշուած լացի խուլ ձայն մարմնրում,
Ու նորա հետ մի ձեռք չոր ու մահահոտ
Շոշափում է իմ ցուրտ ճակատն անդադրում։

Ո՞վ է լալիս, ո՞վ շոշափում, չըգիտեմ։
Երբ զարթում եմ, հեռանում է ձեռքն խսկոյն.
Սակայն լացի ձայնը երկար առնում եմ,
Կու. լայ մէկը իմ մահճի մօտ անընկում։

ՍԻՆ ԻՄԱՍՏԸ

Ահա ինչան խօլ խաւարներ ծալ ի ծալ,
Ծառ ու ծաղիկ, հող ու ջրեր սև հագան.
Լաց ու ժըպիտ քընի հողմից հալածեալ՝
Նուաղելով մրշուշին մէջ լուռ հանգան։

Խո՛ր լըռութիւն։ Մի ձայն միայն սարսըռում
Մեռելների յաւերժամութ աշխարհից՝
Փըսփըսում է խոր քուն կեանքի ականջին
Սին իմաստը տիեզերքի անուրջին։

ՈԳԻԴ

Սըրտիս հովտում, նոճեաց լըռին խորքերից
Երբ ծայն կու տան բուերը սև վարդերին,
Ոգիդ կախուած հովտի մամռոտ մի ծերպից՝
Խուլ արձագանգ կու տայ նոցա վայիւնին։

Եւ երբ յոգնած բուերը խոր քուն մըտնին,
Ոգիդ կ՚ինչնէ կըրկին խաւար գերեզման.
Լըռիկ կ՚ողբայ նորա ծոցում դառնագին
Ալ վարդերըս, որ ծեռքիդ մէջ սևացան։

ԱՆՄՈՌԱՑ ԵՐԱԶՆԵՐ

Կան երազներ, որ անմոռաց են մընում
Եւ յուշերում կ՚ապրին անզարթ խոր քընով.
Կարօտի մէջ հոգին անխօս ու տըրտում,
Լուռ լալիս է՝ ջոքած նոցա մահճին քով։

Կան երազներ, որ անմոռաց են մընում։

ՁԱՅՆԸ

Երբ կէս գիշերին աշտարակներից
Մի ժամն է խըփում ազդարար շեշտով,
Եւ հեռո՛ւ անլոյս անտառի խորքից
Պատասխան կու տայ բուն հակիրճ կանչով,

Կարծես թէ մի ծայն մեղմ ու մարմըրուն՝
Անցնում է սառած օդի խաւերով՝
Լալիս է, երդւում... ու լուռ խաւարում
Կըրկին յե՛տ դառնում եկած շաւիղով։

Եւ լնծ թըւում է, թէ գերեզմանից
Գալիս է այդ ձայն. և թէ հողացած
Մի սըրտի անմահ սէրն է ու կարօտ,
Որ քուն սիրելոյն ձայն տալիս կամաց։

ԴԱԳԱՂՆԵՐ 11/11/3

Բիւր կերոններ պըլպլում են խաւարում՝
Ցուրտ ու աղօտ ճաճանչներով մարմըրում՝
Թունկ մէգում.

Մի տըխուր ողբ խուլ հևում է ու փարում
Ճաճանչներին, ու երկուսով մարմըրում՝
Լուռ հանգում։

Գիշերական այդ խոլական ու անեղ
Տեսարանին ես նայում եմ սարսափով՝
Ու անվերջ.

Եւ կարծում եմ՝ թէ դագաղներ կան այն տեղ՝
Բիւր սըրտերի անիւնացած յոյսերի
Օրուան մէջ։

ԱԶԴԱՆՇԱՆԸ 11

Ամե՛ն անգամ կէս գիշերին մարմըրուն
Ցոգնած մի ձայն կ'առնեմ օդում սարսափով.
Ազդանշանն է իմ ցաւի աստրծուն,
Որ անցնում է այդ իսկ պահին եթերով։

Անհուն դողով նայում եմ վառ երկընքին.
Վառ երկինքը սև դաշտի է վերածւում.
Աստեղակուռ արև կառքով փուշ ճակտին
Սըլանում է իմ աստուածը մըրըրկում։

ԱՆՁՐԵԻՈՏ ԳԻՇԵՐ

Դէս գիշեր է։ Դուրսը ցուրտ է լուռ ու մութ,
Նուրբ անձրևի խուլ քայլերգն է լոկ լըսւում.
Ես նըստած եմ տաք խուցիս մէջ, և անփոյթ
Հին դարերի առասպելները եմ կարդում.

Ու թըմրում եմ ... Սըլանում է իմ հոգին
Դէպի մեռած զըրուցաշատ հին դարեր,
Ու մասնակցում նոցա երգին, հաւատին...
Ըսթափում եմ, – ցուրտ, անձրևոտ, մութ գիշեր։

ԱՌԵՂԾՈՒԱԾԸ

Զայն են տալիս բուերը մութ անտառից,
Մի փըսփըսոց խառնըւում է վայլունին.
Համըր քայլեր կ'առնեմ անշունչ փողոցից.
Կը մօտենայ մէկը կամա՞ց իմ խուցին...

Դուրս եմ նայում. քա՜ր լըռութիւն... Բայց նուրից՝
Երբ դառնում եմ դէպի թողած անկողին՝
Համըր քայլեր կ'առնեմ անշունչ փողոցից.
Կը մօտենայ մէկը կամա՞ց իմ խուցին...

ԱՐԻՒՆԱՑՕՂ ՍԵՒ ՎԱՐԴԵՐ

Կէս գիշերին, երբ սարսափն է արթնանում
Անդընդային մահակարկաչ մըռունչով,
Արիւնացօղ սև վարդեր են տատանում
Սառա՜ծ օդում՝ դազաղահոտ բուրումով,
Կէս գիշերին՝ երբ սարսափն է արթնանում։

Անդընդային մահակարկաչ մըռունչով
Խաւարին մէջ դըժոխք աչքը լայն բացած,
Ցար նայում է՝ մոռացումի երազով
Նիրհող կեանքին, սև սարսափը արթնացած՝
Անդընդային մահախոխոչ մըռունչով։

Արիւնացօղ սև վարդեր են տատանում
Խաւարին մէջ արհաւիրքի պարտէզում.
Հուր ցօղ լալիս պատրանքը լուռ ու տըրտում,
Եւ սողում է մահուան քամին՝ երգելով
Անդընդշիրմեան երանութիւնն անվըրդով։

ԱՆՄԱՅՐ ՈՒ ԱՆՏՈՒՆ

Սուլում է հողմը խաւարի խորքում
Կէսգիշերային լըռութեան պահին.
Ամպոտ երկինքն էլ ռնում է՝ պայթում
Անվըրդով նիրհող աշխարհի գըլխին։

Եւ կարծես հեռու ու խուլ անկիւնում
Մի մայր լալագին ծայնում է որդուն,
Որ արհաւրալի մըրրկի ծոցում
Արցունք է թափում անմայր ու անտուն։

Սուլում է, կոծում հողմը խաւարում
Կէսգիշերային լռութեան պահին.
Մօր անյոյս կանչը՝ կլսկիծը որդուն
Տանում է յանձնում պըղտոր Լեդային։

ՍԵ՛Ի ԳԻՇԵՐ

11

Հուրհուրում են սև փըշերը խաւարում,
Նոճեաց խորքում բուերն են խուլ աղօթում.
Կիսատ հառաչն է մարմնըրում մըրընկում,
Բոց աստղերը դալկանում են, աղօտում...

Իսկ իմ սիրտը, կարծես ապրել է դարեր՝
Հազիւ խրփում... Շուրջս եմ նայում, սև՛ գիշեր։

ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ

1

8/7

Սիրուն աղջիկ, արի՛ ընտրիր
Ինձ պարտիզպան շէն սըրտիդ,
Սուր արօրով վարեմ ընտիր
Անփուշ հողը կոյս արտիդ։

Ակօս բանամ խոր գալարուն
Կոյս արօտում անմեղակ,
Օրհնեմ անվերջ վարդն ու գարուն,
Օրհնեմ հողն ու սուրբ վաստակ։

Կեանքից խլած՝ վառ անուրջի
Լոյս ծովին մէջ լըւացած,
Սերմեր ցանեմ անդ, ուր անի
Սիրուն եղեմ անթառամ։

Մերթ լուռ ցօղեմ ջինջ արցունքով
Քընքուշ հողը եղեմին.
Խոր հայեացքիս ջերմ արևով
Կեանք ներշընչեմ սերմերին։

Երբ ծաղկել է մի բուրաստան,
Երգերըս գուրգուրալով՝
Գրգուեն դալար, ցօղ, համբոյր տան
Ծաղիկներին խայտալով։

Ու մենք ապրինք՝ գըրկա՜ծ երար
Եղեմի խունկ բուրմունքով,
Լանք ու յուսանք՝ մինչև խաւար
Դամբան կ'ինչնենք երկուքով։

2

Վարդ կապեցիր իմ ճակատին,
Ուր առաջ սև ճոճեաց ըստուեր
Թրրթրռում էր, և դալկագին
Մեռնում էին զարնան հովեր։

Իսկ սրտիս մէջ շունչդ դրիր,
Ուր փրթթեցան ծաղկունք հազար.
Սիրուն աղջիկ, արդ ընդունիր
Վարդից, ծաղկից քեզ պրսակ վառ։

3

Ամե՛ն ցաւ, հոգս ես սուզեցի
Կուրծքիդ տակի ծովին մէջ,
Ա՛յն օրուանից, երբ ուզեցի
Հոգիդ ծրծել մինչև վերջ.

Ու միացնել իմինիս հետ՝
Քեզ հետ ապրիլ մի հոգով,
Մինչև հասնելն աշխարհն անհետ՝
Յոգնած պառկիլն իրար քով։

4

Թող հայեացքիդ տիեզերքից
Թըլեցի իմ աստղ անուրջներ,
Որոնք շարած իրարու կից՝
Արի խաւար հոգուս ջահեր։

Եւ սոսկում եմ արդ նայելիս,
Ո՞րքան վիհեր դեռ կան այն տեղ.
Քանի՞ աստղեր դեռ, նազելիս,
Պիտի անեմ հոգուս կանթեղ։

5

Լարի՛ր սիրտս, սիրուն աղջիկ,
Նա կանգնում է բաղխելուց.
Օ՜, յոգնել է այնքան սաստիկ
Շուտ իմ ժամերն հաշուելուց։

Լարի՛ր, հոգեակ, լարիր երկար՝
Որ նա խրփէ յաւիտեան.
Կ'ուզեմ շիրմում պատից կախ տալ,
Երբ քուն մտնեմ հանգըստեան։

6

Կաթի՛ր սիրտս մի կաթիլ սէր,
Կըրկին յուզուի ծովն այդ նիրհող,
Ու փըրփըրի, ժայթքէ յոյսեր,
Ցայտէ գարնան թըրթիռ ու դող.

Եւ ողողուի ցամաքն այրած՝
Շընչէ դալար, ու ես ապրիմ.
Ապրի՛լ կ'ուզեմ, աղջիկ աստուած!
Մի կաթի՛լ սէր կաթի՛ր սիրտն իմ։

7

Կամենում ես, սիրուն աղջիկ,
Որ քեզ պատմեմ այն բոլոր,
Ինչ իմ սըրտում լռիկ մընջիկ
Կատարուում է ամեն օր։

Դիր ականջդ սըրտիս, ու դու
Կը լսես զարկ մ'անուշիկ.
Այն հայեացքդ է խո՞ր ու ազդու
Որ ճեմում է մեղմ, յուշիկ։

Եւ երբ տրոփէ, այն մի երգ է,
Որ երկինքն իր Աստըծուն
Օրհներգներով գովէ, կ'երգէ,
Կ'երգէ փառքն ու սուրբ անուն։

Երբ թրրթրուայ ու ժըպտի պէս
Մարի, կարծես էլ չըկայ,
Գիտցի՛ր՝ որ դու հեռացել ես
Եւ որբ սիրտըս քեզ կու լայ։

8

Ձեռքըդ դըրած սառոյց ճակտիս՝
Հանդարտ շըփուում երկինքն այդ պաղ,
Որ անփայլակ սև հուր լալիս՝
Մըրմըռալով մահ ու դագաղ։

Հոգիս յիշում մութի դարեր՝
Երբ կ'ապրին մեր զոյգը նիրհող.

Երբ չըպիտի կըրնաս փարել
Կուրծքիդ ընկած ճակատըս հող։

9

8/7

Երբ ժըպտում ես, ջիղերիս մէջ
Հեշտանքն ախորժ թըրթռում,
Ու խենթ վազքով սիրտըս փախած՝
Խընդութիւնից արտասւում։

Եւ այդ պահին շողեր ցոլուն
Լոյս հայեացքիդ հուր ծովից
Ծիածան են կապում սիրուն
Հեշտանքիս յորդ անձրևում։

10

8/7

Իմ նազելին կըրծքում ունի
Անմահական մի աղբիւր,
Եւ աղբիւրը սանդուղք ունի
— Մի սըրտագին ջերմ համբոյր։

Երբ ծերանում է իմ հոգին,
Հիւանդ տընքում, զառանցում,
Շալկած տանում չար ծերուկին
Եւ այդ ջրից խըմացնում։

11

Քեզ հիւսել է այգը զարնան
Արշալոյսի նուրբ շողերից,
Շունչ պարգևել ծով մի ամրան
Վառ անուրջի մեղկ դողերից,

Ու նուիրել անարշալոյս
Գիշեր սրտին, հոգուն անքուն.
Ի՜նչ անուշ է, երբ սիրտը լոյս,
Հոգին երազ ունի թաքուն։

12

Տեսայ նորան, երբոր տրտում
Լրնի մէջն էր նայում անձկոտ.
Ա՜խ, անուրջներն էր որոնում,
Որ կորսընցուց ջուրերին մօտ։

13

Թունաւորեց ինձ ցաւն ու վիշտ,
Որ ծրծեցի մայր կեանքից.
Օ՜, իմ հոգին կապտել է խիստ,
Սիրտս պատել մութ թախիծ։

Սիրուն աղջիկ, հասի՛ր, հասի՛ր,
Տուր սրտիդ կաթն ինձ ծրծել.
Օ՜ սրտի կա՜թ, հոսի՛ր, հոսի՛ր
Վիրոտ հոգուս խորքն ու ծիլ։

14

8/7

Օ՜, սըրտիս մէջ ծիւն է գալիս
Ու նիրհում են ամե՛ն իղձ.
Սիրո՛ւն աղջիկ, իմ նազելիս,
Մի՛ ուշացիր՝ արի՛ ինձ։

Արի սեղմենք սըրտերը մեր
Իրար ամուր ու երկար,
Հալենք սըրտիս միջի ծըմեռ,
Որ իղձերըս բըռնեն պար։

15

8/7

Մեր սըրտերը ծառայում են
Ջերմաչափներ մեր սիրուն,
Որ երբ սիրով լի լեցւում են՝
Ջարկերն են միշտ թըրթըռուն։

Ո՛վ կասկածի ականջն իսկոյն
Գամում է այդ գործիքին,
Ու համարում մըտքում թաքուն
Թըրթիռն ու դող զարկերին։

Մենք ամե՛ն օր ենք կասկածում,
Կարգով քընում իրար սիրտ.
Ամե՛ն օր էլ ջերմ ենք զըտնում
Ու համբուրում իրար բիրտ։

16

Երբ շողում են հոգուս աստղեր
Կուրծքիդ տակի տիեզերքում,
Ու նոցա հետ սլրտիս դողեր,
Երբ սիրելոյդ սէրս համերգում։

Անիծում եմ այն մեծ զիշեր,
Երբ կուրծքդդ ցուրտ այրէ խաւար.
Մոխիրներում մարին աստղեր,
Ու երգերս էլ տարուին աւար։

17

Սիրո՞ւն աղջիկ, արի՛ ինձ մօտ,
Քեզ զբրոյցներ ես պատմեմ.
Զբրոյցներ վարդ ու անուրջոտ,
Որ զարունից հիւսել եմ։

Եւ երբ թըմրած աչքդդ փակես,
Կըրծքիս վերայ կ'ամեմ տեղ,
Օրօր երգող բարձ կու տամ քեզ,
Որ քիչ նիրհես դու այն տեղ։

18

Օ՜, ինչ սիրուն ես դու հիւսեր
Շէկ մազերդդ, արև կոյս.
Վառ ժրպտիցդդ կաթում յոյսեր,
Բոց աչերիցդ հուր ու լոյս։

Բիւր ափսոս, որ դու սիրտ չունիս,
Տիեզերքի մե՛ծ ընծան.
Թէ չէ՛, արև, հաւատա՛ խօսքիս,
Կը սիրէի քե՛զ միայն։

19

Թէև գիտեմ, ով չէ՛ Աստուած՝
Նա մեռնում է յետ իր կեանքից,
Բայց քե՛զ համար էլ է ասուած,
Աստուածների դու դատակից.

Դո՛ւ, որ մի թոյլ ժըպտիդ շողով
Գերեզմանի կուրծքն ես պատռում,
Որիդ առաջ անհուն դողով
Տիեզերքն է երկրըպագում։

Սիրուն կին — մահ, ի՞նչ անգութ զոյգ,
Մահացու սեղքն արարչութեան!
Որ թէ տիեզերք հոսէր արցունք՝
Քաւման համար չէ՛ր բաւական։

Անարդար զոհ! անարշալոյս
Գիշերըդ թող լամ քանի կամ.
Բայց այդ ի՞նչ է ... Օ՛, մեռնելուս
Դարեր հողին տակ կը սղամ։

20

Դալար հովտում վարդեր բոլոր
Բլբուլների մշտամուլ

Սիրուց խաբուած, որք՝ սրգաւոր
Քե՛զ կարօտում են անդուլ,

Սիրո՞ւն աղջիկ, որ գոնէ քո
Սիրող կուրծքը կուսական
Փարեն մի պահ, հոգ չէ՛ յետոյ
Թէ ցեխ նետուին կէսկենդան։

21

Ծերացել եմ, էլ չե՛մ նայում
Հայելու մէջ, որ չըտեսնեմ
Թառմած դէմքըս, որ մի՛շտ տըրտում,
Եւ չըյիշեմ փոսն այն դըժխեմ։

Պատկերիդ եմ նայում անվերջ,
Ու քո գըրած տողերին բիւր,
Որ տեսնեմ ինձ թարմ նոցա մէջ
Եւ վարդ, գարուն, դող, նազ, համբոյր։

22

Յիշո՞ւմ ես այն օրն անմոռաց՝
Մութ անտառում մեն – մենակ
Նըստել էինք իրար գըրկած՝
Մի դարևոր կաղնու տակ։

Եւ թէ ի՛նչպէս տերև, ծաղիկ
Մըշտադալար կոյս ծոցից
Տուներ էին կըրկնում մեղմիկ
Մեր համբոյրի համերգից։

23

Մի կաթիլ ցող դու կաթեցիր
Իմ սըրտի մէջ մենաւոր
Խամրող վարդին, և ուզեցիր
Կեանք պարգևել նորան նոր։

Սիրո՞ւն աղջիկ, բայց շատ է ուշ,
Ցողըդ կ'անցնի անօգուտ.
Նա ծրծել է աշնան մըշուշ,
Սիրել նորա օրը մութ։

24

Ես ուզեցի մի վարդ քաղել
Կուրծքիդ վերայ բուսած թուփից.
Նորա վերայ հոգիս ցողել,
Հուր սընունդ տալ սըրտիս խորից։

Բայց չուզեցիր դու, աղջիկ խե՛նթ,
Անապատի մի բոյս դարձար,
Ուր արևը նայէ մի՛շտ խեթ
Աւազուտի զարդին օտար։

25

Հոտոտեցի վարդ ու մեխակ,
Շուշան, յասմիկ, մանուշակ.
Բուրում էին նոքա անուշ,
Սակայն խամրան մի օր ուշ։

Բայց ես զրտայ ուրիշ ծաղիկ,
Որ բուրում է շատ երկար.
Այդ համբոյրդ էր, որից, աղջիկ,
Անմահութեան հոտ կու գար։

26

Դու չե՛ս կարող խորխորատներ
Անհետացնել իմ ճակտից.
Դա հետք թողին կարաւանները՝
Որոնք անցան այդ ճամբից։

Բայց կարող ես սրփռել շողեր
Քո այդ մատաղ արևով,
Որ գէթ գալիք կարաւանները
Ճամբան անցնին ապահով։

27

Ցուրտ են ծորում երկինք, երկիր.
Հիւսիսի սառ հողմը դըրսում
Հեծկըլտում է մահուան երգեր.
Ես ու սիրտս շատ ենք մըրսում։

Սիրո՛ւն աղջիկ, շուտո՛վ արի,
Անօգուտ են շոր, վառարան.
Սիրտս ցուրտ է. նա կը սառի
Երազելով սըրտիդ քուրան։

28

Սև արծիւը թևատարած
Սաւառնում է մեր գլխին.
Մի օր մե՛զ էլ թևին առած
Կը տանի կեր ծագերին։

Մենք աներկիւղ սիրենք մինչև
Այդ օրն լրար հուր սիրով.
Մինչև կու գայ արծիւը սև՝
Մեզ կը տանի թևերով։

29

(ԸՍՏ ԳՈՒԻԵԱՆԻ)

Երբոր սառին շրթներս ու ես
Խաւարի սև հարսն համբուրեմ,
Թէ ինձ գրկած սրգալ ուզես,
Գիտցի՛ր որ դեռ կենդանի եմ։

Երբ պատանքի մէջ մահահիւս
Յոյսերիս հետ դագաղ մըտնեմ,
Թէ արցունքով օծել ուզես,
Գիտցի՛ր որ դեռ կենդանի եմ։

Երբ չորս թշուառ դագաղակիր
Անլաց տանին ինձ դէպ շիրիմ,
Թէ դու միայն լինես ընկեր,
Գիտցի՛ր որ դեռ կենդանի եմ։

Երբ անաղօթք ինձ փոս նետեն
Հարթավայրի խուլ անկիւնում,
Արցունքներդ թէ հող փոփկեն,
Գիտցի՛ր որ դեռ կենդանի եմ։

Երբ ծածկել է ինձ հող վերմակ,
Դագաղակիրք էլ մեկնել են,
Թումբիս փարուել դո՛ւ մեն – մենակ,
Գիտցի՛ր որ դեռ կենդանի եմ։

Դալար խոտով, ծաղիկներով
Երբ զարդարես հողակոյտս իմ
Ու միշտ ցօղես արցունքներով,
Գիտցի՛ր որ դեռ կենդանի եմ։

Երբ վառ գարնան կոյս վարդերից
Պըսակ կապես հող գըլխին իմ,
Ինձ լուռ նայես արտասուալից,
Գիտցի՛ր որ դեռ կենդանի եմ։

Երբ այց չըգան ծանօթ մարդիկ,
Ցիշատակներս էլ մոռացուին,
Ինձ ուրանայ իմ հայրենիք,
Գիտցի՛ր որ միշտ կենդանի եմ։

Իսկ երբ դո՛ւ ինձ մոռնաս, այլոց
Սիրես, դառնաս սերտ մըտերիմ,
Մահն ըմպելիս չըգաս իմ ծոց,
Այդ ժամանակ ես կը մեռնիմ։

30

Մի՛թէ դո՞ւն էլ, սիրո՛ւն աղջիկ,
Պիտի մեռնիս ու դառնաս հող,
Պիտի քաղուի ճակտիդ փընջիկ,
Շոգիանան աչերդ ցող։

Մի՛թէ քո լար շրթնե՞րն էլ վարդ
Պիտի ներկեն կապոյտն ու սև,
Անկուշտ որդեր լուռ ու հանդարտ
Պիտի սողան նոցա ներքև։

Մի՛թէ թրթիռն ու ելևէջ
Սրտիդ, կրծքիդ մեղմ ու դողդոջ՝
Պիտի չերգե՞ն և՛ հողին մէջ
Ամենայաղթ սէրը կրնոջ։

31

Երբ քարը վերմակ, սև հողն անկողին,
Եւ ես դագաղում գրկել ենք իրար,
Պիտի չայցելէ՞ և մէջը հողին
Անցա՜ծ օրերից զոնէ մի երազ։

Օ՜, ես յաւիտեան պիտի կրէի
Մոխրացած սրտիս սմե՛ն հիւլէում
Նորա քաղցր անուն՝ ով տար երազել.
Աղջիկ, այդ մէկը լինել չէ՞ս ուզում։

32

Քանի դիտեմ զանգուրդ նոխ,
Ինձ թըւում է, թէ արդարև
Արշալոյսի են նոքա շող,
Որ բոլորեն մի վարդ արև։

Եւ երբ փաթեն ձեռքերըս հեզ,
Նուրբ շողերից կարծես բոցեր
Հոսին սիրտս, որ բոցակէզ
Փոթթի ախորժ վէրքի խոցեր։

Իսկ երբ գըրկած մունջ զորովով
Սիրուն գըլուխդ եմ համբուրում,
Օ՛, ըզգում եմ, որ քեզանով
Միայն իրօք կեանքն եմ ապրում։

33

Թափառական անցորդի պէս,
Որ չունի տեղ, չունի տուն,
Եկայ զարկի սըրտիկըդ հեզ
Ու խընդրեցի մի անկիւն։

Զըմերժեցիր. նաև թոյլ տուր
Այդ հիւրասէր յարկի տակ
Խե՛ղճ անցորդիս թողնել տընտուր
Իր կեանքի վէպն յիշատակ։

34

Հոգ չէ թէ իմ մահուան ժամին
Պիտի մարին յաւիտեան
Երազ ու սէր, յոյսերս ամեն,
Եւ ինձի հետ չըքանան։

Բայց կ'ուզէի, որ ապրէին
Դեռ ցաւ, կըսկիծ իմ սըրտին,
Սև ամպ դարձած արտասուէին
Թըմբիս վերայ ցաւագին։

35

Մեզ ինչ փոյթ թէ ժըպիտն, արցունք,
Կեանքը դաժան մի ունին.
Հեռու մեզնից կասկած ու սուգ,
Անէծք նոցա անունին։

Սեղմիր սիրտըդ, ամուր սեղմիր
Իմ սըրտին, որ մէկ դառնան,
Ցուզուի այդ խոր ծովը կարմիր՝
Երկնային երգէ դիւթական։

Իսկ մեր հոգին սուգած յատակ՝
Լըսենք լըռին. մեր շըրթներ
Ծըծեն իրար շունչը անյագ,
Ծըծեն զարուն ու վարդեր։

Ծո՜վ արցունք, մի անտա՜ռ դաժան
Անկարո՜ղ են վըրդովել

Ա՛հ մեր ծովի ծուփը խաղաղ,
Նորա երգն ու երազներ։

36

Վարդի՛ կոկոն, ծաղիկն ըստիր
Սիրո՛ւ, ժըպտի՛, կո՛ւյս անուրջի,
Արի կըրծքիս վերայ նըստիր,
Որի տակ ծով սիրտըս ուռչի։

Մի՛ վախեցիր, դու չե՛ս խամրիլ
Կըրծքիս խանձած ոսկրին վերայ.
Մինչ առկայծիլ, մինչև մարիլ
Սիրտըս քեզ բոց սընունդ կու տայ։

37

Գլուխիկըդ ճակտիս յենած՝
Երեսիս ես անուշ շընչում.
Ես հոլանի դաստակդ առած՝
Ախորժ դողով զարկին նայում.

Ու գետնափոր տունն եմ յիշում,
Երբ բըռնել եմ դաստակըդ հող.
Քուլրս պառկած դու չե՛ս շընչում,
Ես էլ չունիմ այս ախորժ դող։

38

Առաւօտեան պէս թարմ, մաքուր
Մի սիրտ ունիս, աղջիկ սիրուն.
Այդ քո գոհարն ե՛կ ինձ պահ տուր,
Որին կըրեմ սըրտիս խորում։

Վըստահ եղիր, քան ժըպիտ, լաց,
Քան գանձ, այդ տուփն է ապահով.
Նա կը մընայ այն տեղ փակուած,
Մինչև սիրտըս փըշրի մահով։

39

Ծարաւ էի, ինձ ջուր տըւիր
Այն աղբիւրից անապակ,
Որից մի օր մութն անըստուեր
Գինովնալով ծընաւ կեանք։

Մինչև չորնալ տո՛ւր ինձ խըմել
Այդ սուրբ ջըրից յաւենալ.
Ձե՛մ ուզում հող ծարաւ մընել,
Ուր ծով դարեր պիտ՝ կենալ։

40

Ծրծե՛նք իրար մինչև յաղուրդ,
Ու գինովցա՛ծ մընենք հող,
Ուր անփարատ խաւարն ու ցուրտ
Պիտի գըրկեն մեզ անթող։

Է՛հ, մեզ ի՞նչ փոյթ, երբ դատարկ ենք՝
Թող նոքա էլ մեզ ծրծեն,
Երբ մեր կեանքը խրմել ենք մենք՝
Թողել երկու շիշեր սին։

41

Ի՞նչ բան թողնենք մահուանից յետ
Նուէր կեանքի հիւրանոցին,
Որ չընչնչեն գրքից անհետ
Անունները մեր երկուսին։

Ե՛կ, երբ թողնենք մեզ պատկանող
Օթևանը, մեր անուանց տակ
Կարմ և ազդու գրենք այս տող՝
Թէ — «Խենթի պէս սիրել գիտցանք»։ —

42

Արիւնած է սիրտըս յոգնած,
Խուլ տրնքալով նուաղում.
Սիրո՛ւն աղջիկ, սըրտիս սիրած,
Հասի՛ր, սիրողդ է մեռնում։

Զոյգ արշալոյս քո աչքից ծով
Շողեր քաղիր, հիւսիր կապ,
Որ կըսկըծիդ մէջ թաթխելով
Կապի՛ր սըրտիս վիրակապ։

43

Սիրո՛ւն աղջիկ, դու տեսե՞լ ես
Ծովափ, լճափ կամ գետափ.
Եւ կամ այն տեղ դու դիտե՞լ ես
Մակոյկների մի բանակ։

Թէ յիշում ես՝ նոքա ունին
Տարբեր անուն, մեծութիւն.
Ոմանք նոր են, ոմանք էլ հին,
Ոմանք անգամ ղեկ չունին։

Նոյնն է և մեր կեանքը — մի ծո՛վ,
Որի ափին մեզ համար
Մակոյկներ կան կանգնած խըմբով՝
Մեծ ու փոքրը՝ շարիշար։

Մենք կը նըստինք իրար կողքի
Անե՛ր կի՛ւղ այն նաւակում,
Որ թէև հի՛ն, առանց ղեկի,
Սակայն «ոէր» է իր անուն։

44

Սիրո՛ւն աղջիկ, խո՛ր սիրիր ինձ,
Որ մենք ապրինք վարդերես.
Խո՛ր սիրոյ մէջ ամե՛ն կըսկիծ
Թառամում է ծաղկի պէս։

Եւ երբ մեռնինք մեր խոր սիրով,
Գերեզմանի մո՛ւթ ճամբան

Կ'երթանք լուսով, ու ապահով
Կը հասնինք մեր քընարան։

45

Կուրծքիդ հովտում, սիրո՛ւն աղջիկ,
Վըտակներ են թաւալում.
Համբուրելով խոտն ու ծաղիկ,
Անո՛ւշ երգեր ողորում։

Թո՛ղ որ իմ խեղճ յոգնած հոգին
Մի պահ նիրհէ այդ հովտում.
Ա՜խ յոգնածը ջըրի ափին
Շատ անուշ է քուն մըտնում։

46

Տեսայ նորան, պարտէզին մէջ
Վարդ էր քաղում ծեռքով քընքուշ.
Որբ բըլբուլիկն էլ սիրատենչ
Մելոդին էր սուլում անուշ։

Դայլայլի հետ կըրծքի անծայն
Ելևէջը յարմարում էր.
Արշալոյսն էլ վառ ծիածան
Կոպերի տակ մերթ կապում էր։

47

Տեսայ նորան, երեկոյ էր,
Ծովի ափին, ուր կէս մընթնում՝
Վերջալոյսի ծարուած շողեր
Ափին չոքած՝ լուռ ջուր ծընում.

Ինձ թըւում էր նազելիս կոյս
Թէ հող չէր, այլ երգի կըտոր,
Ծովի աղջիկ, կամ արշալոյս,
Որ թափառում էր անդ մոլոր։

48

Ինչո՞ւ կու լաս, սիրո՛ւն աղջիկ.
Մի՞թէ արցունք կամ վիշտ ունի՞ն
Արշալոյսն ու սիրոյ աստղիկ,
Բընակիչներ լոյս անհունին։

Մի՞թէ շողերն արեգակի
Գիտե՞ն հեծել, մի՞ թէ ցօղեր
Կ՚այրե՞ն անուշ բոյրը ծաղկի,
Կամ ծիածանն ունի՞ ցաւեր։

49

Ասա՛ ինձի, աղջիկ սիրուն,
Ինչո՞ւ դէմքդ է այդպէս գունատ.
Մի՞ թէ կեանքում կա՞յ մի գարուն,
Որ չունենայ բըլբուլ ու վարդ։

Մինթէ գարնան զեփիւռը զով
Մըրմընջո՞ւմ է մահուան երգեր։
Արշալոյսը մինթէ լացով
Համբուրո՞ւմ է աստղ ու երկիր։

50

Սիրո՛ւն աղջիկ, դո՛ւ ես դարձեալ՝
Որ այդ կու գաս այս գիշեր,
Ու քեզանով զարթնում անցեալ
Հին երազներս ու յուշեր։

Եկ, իմ հոգեակ, անլաց նըստիր
Մահճիս մօտին, ու քընքուշ
Ձեռքըդ կըրակ ճակատիս դիր,
Տո՛ւր երազե՛լ ինձ անուշ։

Разобрать труду
отнести от времени

ՀԱՆՆԱ

ԱՐՋԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Մբրիկներն ինձ ծով նետեցին և ալիքներին ես ընկեր դարձայ։ Սովորեցի ալիքի պէս գոռալ ու մռնչել, գուրգուրալ ու լալ։

Բայց իմ ցասուկի և ցաւի երգերը ծաղրուեցին. Սիրոյ երգերս ամուլ մնացին. և ես տառապեցի երկար ու մենակ։

Սակայն գթաց Աստուած յուսահատ թափառականիս վերայ։ Օ՜ Աստուած եմ! որքան գթառատ ես դու, որքան շնորհակալ եմ քեզնից։

Ահա դու մի օր վերջալոյսի մեռնող շողերի մէջ՝ կեանքիս կոյս արշալոյսը ինձ տեսնել տուիր։

Դու ինձ պարգևեցիր քո ստեղծագործութիւնների ամենավսեմը, ամենակատարեալը։ Դու ինձ հաննան նուիրեցիր, կիների ամենամաքուրը, ամենագեղեցիկը։

Աստուած իմ! որքան գթառատ ես դու, որքան շնորհակալ եմ քեզնից։

II

Նաւարկում էի քնիս մէջ հանդարտ ծովին վերայ։

Սէրն էր ղեկը պահում ու երազները թիավարում։

Հեռու, խոր մթութեան մէջ թաղուած հորիզոնից անուշ ձայներ էին հասնում ականջիս։

Երազները նաւակս դէպի այն կողմերն էին թիավարում։

Թիերը պատռում էին ալիքների բիւրեղ կուրծքերը, որոց վէրքերից շուշաններ էին փթթում,

Եւ երկարում ձգւում մեր ճանապարհով։

Ես երգում էի խոր գինովութեան մէջ նաւակիս մէջ պառկած, աչքերս աստղերին։

Զգիտեմ թէ ես ինչ էի երգում. սակայն ինձ ծայնակցում էին ալիքներն ու աստղերը։

Եւ իմ երգը մաքուր էր։

Իմ երգը մաքուր էր ու ազատ։

Շուշանների միջով էր իմ ճանապարհը...

Արշալոյսի առաջին շողերի հետ ողջունեցի անուշ հորիզոնը։

Երազներն ինձ ափ իջեցրին։

Աստուած իմ! այդ աշխարհն ինձ ծանօթ էր!

Տաճարներն իմ անուշ սիրուհուն էին նուիրուած.

Ծառերն ու ծաղիկները նորա անունն էին օրհնում անվերջ.

Վտակներն ու աղբիւրները նորանից էին պատմում, նորան զովում.

Բոլոր թռչունները «Հաննա», «Հաննա» էին ծայնում։

Եւ այդ ծայներից արթնցայ։

Ա՜խ, ես իմ սեփական սրտում էի նաւարկում!

III

Արշալոյսին մտայ բուրաստան.

Երգում էին բլբուլները ցողազարդ վարդերին.

Հաննան քաղեցի.

Նորա զոյգ ջինջ ցողերը Անհունն էին արտացոլում։

IV

Իմ Հաննան է գալիս! Իմ Հաննան է գալիս!

Դե՜հ սիրուն երգեր, մաքրեցէք սիրտս իր հին վշտերից ու կասկածներից։

Լեցուցէք վիհերը հին երազների փլատակներով, ու բերկրութեամբ ողողեցէք սրտիս անդաստանը։

Զորացուցէք սրտիս թոյնի բոլոր աղբիւրները սիեզերքի ամենաուժեղ թոյնով — Սիրով.

Եւ սրտիս ամենանուրբ թելերից աստուածային աթոռ հիւսեցէք սիրունիկիս համար։

Դրէ՛ք այդ աթոռը սրտիս կենդրոնի կենդրոնին մէջ, և շուրջը բոլոր թարմ ծաղիկները բոլորեցէ՛ք։ Եւ երբ պատրաստ է, թռէք ուրախ գնացէք սիրունիկիս, իմ կողմից նորան բարևելով ասացէք, որ — «Տիրուհի և աստուած! ամե՛ն բան պատրաստ է»։ —

Եւ յետոյ ձեր թևերին վերայ առած՝ երգելով բերէք նորան և բազմեցուցէք սրտիս կրկնակենդրոնում՝ իր գահի վերայ։

Հանեան սորանից յետոյ ձեր տիրուհին է և իմ աստուածը։

V

Ե՛կ, իմ հանեաս, ե՛կ խառնենք մեր ուրախութիւնն ու վշտերը իրար, ու չմտածենք՝ թէ արևն հորիզոն, կեանքը գերեզման և բաղդը անիւ մ՝ունեն։

Արշալոյսի շողի, մայիսի ցօղի նման մաքուր ու անարատ հոգիդ, ե՛կ խորասուզիր իմ սրտի զով վարդաստանների մէջ, ուր նա թող ներհէ երազների, ամրան անո՛ւշ երազների ու վարդերի գրկում։

Իմ հոգին բաւական է երկուսիս։

VI

Սիրտս յուզուած է։ Երկիրս եռանդով իրենց սիրելի

տիրուհու հարսանիքին պատրաստութիւններն են տեսնում։ Սիրտս յուզուած է. և խնդութիւնից ջերմ արտասուում։

Երգերս իրենց տիրուհու անուշ ու տաք հայեացքից խլած շողերով ծիածաններ են կապում սրտիս արցունքին, վճիտ արցունքին մէջ։

Իմ թագուհին այդ կամարների տակով պիտի առաջնորդեն դէպի սրտիս կենդրոնը, դէպի ծիրանի առաքաստը։

VII

Ե՛կ, իմ Հաննաս!
Ե՛կ, իմ թռչնիկս,
Իմ բլբուլ!
Սրտիս մէջ գարնանն անուշ հովերն են շընչում.
Փթթում են մանուշակները, ու վարդենները կոկոն արձակում։
Թռի՛ր սրտիս մէջ, թռի՛ր վարդենների վերայ, և անաբատ ու անձնուէր սէրդ երգիր կարմի՛ր վարդերին։
Դո՛ւ ես սորանից յետոյ իմ սրտի երգիչ — թագուհին։

VIII

Առաւօտեան դէմ երազների հետ միասին Հաննաս լինձ այցի եկաւ։
Եկաւ Հաննաս ու նստեց գլխիս քով։
Քնքուշ երեսը իմ այրող երեսին սեղմեց. ու լալ սկսեցինք միասին։
Լալիս էինք, և մեր արցունքները հոսում էին միասին։
Երգում էին երազները։

Եւ մենք յատիտենական սիրոյ և հաւատարմութեան երդումները խառնում էինք
Արցունքներին ու երգերին։

IX

Երազների ամենից վսեմը և ամենից անուշը տեսայ այս գիշեր։
Հաննան ամբողջովին ինձ էր պատկանում, ինձ միայն։
Եւ ես էի նորա երջանկութեան աղբիւրը։
Ա՜խ, երազների ամենից վսեմը, ամենից անուշը տեսայ այս գիշեր. և երբ արթնցայ,
Հաննայի պատկերը արցունքներով ու համբոյրներով ծածկեցի։

X

Ե՛կ, Հաննաս, մի՛ ուշացիր։
Ե՛կ մտիր սրտիս խորքերը։
Թագուհի՛ս, այն տեղ են քո պալատները։
Ե՛կ, ե՛կ մտիր սրտիս խորքերը, որպէս զի կեանքի խորշակները չխամրեցնեն սիրուն վարդիդ։
Իմ սրտի մէջ միայն՝ դու պիտի տեսնես կեանքիդ ամենաանուշ երազները.
Եւ սիրտս քեզ տիեզերքի մեծ երգը պիտի երգէ։

XI

Տեսայ Հաննայիս!
Նա դժգոյն էր ու տխուր։
Հաննաս դժգոյն էր ու տխուր,
Աշնան վերջին տերևաթափ վարդի պէս։

XII

Երազիս մէջ այս գիշեր
Սիրտս պատռելով՝ մի թռչուն դուրս սլացաւ։
Նա արիւնոտ էր։
Ճանաչեցի ես նորան իր ծայնից։
Նա մի ծիծաւ էր։
Նա փախաւ՝ կարօտ գալնան ու վարդին։

XIII

Երազիս մէջ Հաննայիս հետ լալիս էի.
Լալիս էինք, և մեր արցունքները հոսում էին առատ։
Մեր արցունքի տակ խամրեցան վարդն ու շուշանը.
Ծառերն ու գերեզմանները ծածկուեցան...
Եւ մի լիճ գոյացաւ,
Արցունքի՛, սիրահարների արցունքի՛ լիճ։
Շուշանները կարապներ դարձած սկսան երգել լճի խորերում.
Եւ երբ երգը աւարտեցաւ,
Նոքա ընկղմեցան յոգնած։

XIV

Մեռաւ սրտիս սիրածը,
Մեռաւ իմ Հաննան!
Թե՛ղն սիրտ, ոյժ և կորոդութիւն եմ ցանկանում այդ անմոռանալի ու անդարձ կորուստդ մոռանալու համար։
Օ՜ երազներ, ա՛լ ու կանա՛չ երազներ!
Ո՞ւր կորաք դուք։

Դուք, որ զարնան սուրբ երգը հնչեցնելով՝ զեփիւռների հետ ճամբորդում էիք սրտիս դալարազուրկ հովիտներում.
Վարդիներ տնկելու համար փոսեր փորում...
Օ՛, դարձէ՛ք, դարձէ՛ք մի բոպէով յետ, ու տեսէ՛ք սիրտս։
Վարդիներն ընկան!
Բայց փոսերը մնացին, և ես խո՛ր ցաւ եմ զգում։
Դարձէ՛ք, ու երանութիւնով լեցուցէ՛ք այդ փոսերը։

XV

Մեռա՜ւ իմ Հաննան!
Ա՜խ, մեռաւ սրտիս սիրածը!
Նորան պիտի թաղել արտակարգ շքով,
Սրտիս խորքում,
Տառապանքի ծովի ափին՝ մամռապատ ժայռերի տակ,
Ճի՛շդ այն տեղ, ուր նա մի անգամ վերջալոյսին նըստած՝ իր սիրոյ առաջին երգը երգեց և տառապանքիս ծովը շաբաթներով ցամքեցաւ։
Նա լալկանները է ուզում։
Ո՛վ իմ տառապանքի երգեր,
Հետևեցէ՛ք ձեր մօտ սիրածի դագաղին։
Ո՛վ ցաւի ալիքներ,
Շրջեցէ՛ք սրտիս ամե՛ն անկիւնները,
Եւ Հաննայիս մահը գուժեցէ՛ք։
Ամենաազդու շեշտերով՝
Հաննայիս ոսկորներին
«Հանգի՛ստ» մրմնջեցէ՛ք։



ԻՄ ՍՐՏԻՆ

Ա.

Քանի՞ վէրքեր քեզ հասցուցին
Եւայի չար աղջիկներ.
Քեզ այրեցին, քեզ խաչեցին,
Սակայն ապրա՛ր դու կըրկին։

Բաւական է հինգ կամ վեց վէրք
Որ մի հըսկայ տապալէ.
Հինգ, վեց հազար ըստացար վէրք,
Նըւաղեցար, բայց ապրար։

Մե՛ծ հըսկայ ես. ափսո՞ս միայն,
Որ հընար չէ՛ քո գըլխին
Մի թաց կապել, սուր հըրացան
Քո կըռնակին ու մէջքին,

Ու կըռուի դաշտ ղըրկել խսկոյն,
Որ քաջ կըռվու տաս արդար՝
Նաև խըլուած իրաւունքի
Եւ ազատութեան համար։

Շա՜տ պարզ է, որ այն տեղ նոյնպէս
Կը կըռուէիր դու անվերջ,
Կատաղի ու յամառ, ինչպէս
Դու կըռուեցար սիրոյ մէջ։

Բ

Ա՜խ, ինչո՞ւ ունիմ մի սիրտ այսքան խո՛ր
Ու բիւր երազներ յաւիտեան անյուշ,
Երբ սողալու եմ այս կեանքում տըխուր,
Ա՜խ, նոյն իսկ մարդկանց ոտքի տակ ըզզոյշ։

Գ.

Քեզ օրհնում են, օ՜ սիրտ, մութի պարտէզում
Արհաւիրքի զարնան կարմիր բլբուլները.
Քե՛զ ըսպասում նոճիների խորերում
Անդրշիրմեան անվախ կոյսերն անհամբեր։

Դ.

Ինչո՞ւ դու, սիրտ, երբ կէս գիշեր է լինում,
Երգ մ'ես երգում խո՜ր ու ազնո՛ւ շեշտերով.
Այդ ի՞նչ երգ է, և ո՞ւմ համար ես երգում.
Օ՜ սիրտ, հի՜ն սիրտ, ծերացել ես յուշերով։

Ե

Բոց աստղ դարձած կ'ուզէի որ սըլանար
Վերջին երգըս կըծկող սըրտիս վէրքերից.
Մահուան ժամիս բոսորավառ շողշողար
Արև ցոլքով տիեզերքի բարձունքից.
Ու զիլ ձայնով յայտնէր անգէտ աշխարհին,
Թէ ի՜նչ սիրտ էր կըրում մեռնող իր որդին։

ՇՈՂ ՈՒ ՑՈՂ

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

1

Պայծառ արև, կայտառ հովեր,
Առուի կարկաչ ու խոխոջ,
Կոյս դայլայլներ, հուր լոյս շողեր,
Վարդի կոկոն ու բողբոջ,

Անվէրք սըրտեր, անվերջ երգեր,
Սիրոյ արցունք ու հառաչ,
Սար ու ձորում կազմած խըմբեր՝
Կ'երթան գարնան ընդ առաջ։

2

Քընքուշ ծեռներ, մատաղ մատներ,
Վառ պըսակներ ոլորէք.
Լոյս ճակատներ, վըճիտ աչեր,
Գարնան շուրջը բոլորէք։

Կոկոն սըրտեր, շուշան կուրծքեր,
Անուշ երգեր բուրեցէք.
Վարդ լեզուներ, յակինթ շըրթներ,
Գարնան վեհ մուտքն օրհնեցէք։

3

Արև ծագեց, գարնան արև,
Արար աշխարհ կեանք առաւ.

Սիրո՛ւն աղջիկ՝ հոգո՛ւս տերև,
Իմ զիշերը դար դառաւ։

Արև ծագեց, գարնա՛ն արև,
Վարդ ու ծաղիկ բացուեցան.
Սիրո՛ւն աղջիկ՝ սըրտի՛ս արև,
Կոկոնները չորացան։

4

8/7

Մատա՛ղ գարնան, խաղա՛ղ գարնան
Հովեր կու գան ու կ'երթան.
Մատղա՛շ գարնան, անո՛ւշ գարնան
Երգ ու ծիծաղ կը թընդան։

Մատա՛ղ գարնան, զարդո՛ւտ գարնան
Մանուշակը կը փընթթի,
Վա՛ռդ աղջըկան, կո՛յս աղջըկան
Կոկոն սիրտը կը բացուի։

5

8/7

Նուրբ կապոյտում, լո՛ւռ եթերում
Պայծառ աստղեր են ցոլում.
Դալա՛ր երկրում, ծաղկո՛ւտ երկրում
Երգ ու ծիծաղ կըկըլում։

Հո՛ւր եթերում, ծո՛վ եթերում
Բիւր ասուպներ են շողում.
Վարդոտ երկրում, խոտո՛ւտ երկրում
Կո՛յս սըրտեր են խուլ դողում։

Երկինք, երկիր տօն են սարքել,
Ալ գարնան գալն են տօնում.
Երկինք, երկիր, աստղ ու երգեր
Գարնան սիրուն են ծօնում։

6

Անո՜ւշ համով, եղե՜մ հոտով
Արար աշխարհ լեցուցիր.
Պայծառ շողով, ջերմո՜ւ հովով
Ձիւն ու սառոյց հալեցիր։

Կըրա՜կ սիրով, բո՜ց յոյզերով
Ծո՜վ սըրտերը խառնեցիր,
Նոցա խորքից ցաւի հողմով
Մարգարիտներ հանեցիր։

7

(ԾԵՐՈՒԿԻ ԵՐԳԸ)

Բարո՜վ եկար, հազա՜ր բարի,
Անո՜ւշ գարուն, ջա՜ն գարուն.
Հող չըմնտայ և՛ այս տարի,
Ըսպասեցի քո գալուն։

Բարո՜վ եկար, հազա՜ր բարի,
Անո՜ւշ գարուն, ջա՜ն գարուն.
Քանի ողջ եմ՝ ինձ հիւր արի.
Մեռնիմ տեսքիդ ես սիրուն։

8

Կոյս աղջիկներ վարդ ու շուշան,
Կարմիր, ճերմակ շորերով
Կ'երթան անտառ ու յետ կու գան
Մանուշակի փունջերով։

Ծիր մանուկներ սուրբ ու արդար՝
Ուրա՜խ անվէրք սրբտերով,
Վազվազում են դաշտում դալար՝
Գարնան անո՛ւշ երգերով։

Հի՜ն ծերերն էլ մարա՜ծ ժըպտով
Օրհնում՝ յենած հաստ փայտին՝
Ուրախութեան արցունքներով՝
Գարնան գալը վերըստին։

9

Արտ ու արօտ դալար հագան,
Ծառ, թուփ, սաղարթ ու տերև.
Սև՜ ամպերն էլ ճամբայ ընկան,
Անո՛ւշ ժըպտում է արև։

Սիրո՛ւն աղջիկ, մենք ի՞նչ հագնինք
Գարնան առաջ գընալու.
Վա՜րդ սէր հագնինք, սա՛լ սէր հագնինք՝
Գարնան տօնը տօնելու։

10

8/7

Արևն ելաւ, զարթան հաւքեր,
Ծաւին, ծաղկին ծայն տրին.
Ծառ ու ծաղիկ սուրբ օրհներգներ
Զօնեցին լո՛յս արևին։

Արևն ելաւ, սիրո՛ւն աղջիկ,
Զարթի՛ր քընից. միտաան,
Ես երգիչ հաւք, դու վառ ծաղիկ,
Օրհներգ երգենք ալ գարնան։

11

8/7

Փետուր ամպեր պար են բռնել
Լինչ կապուտակ պարզ օդում.
Ինչպէս գարնան երաժիշտներ՝
Արտոյտ, սարեակ նըւագում։

Ջրշուշանը խո՛ր ծորերում
Առուի ափին կըկըզած,
Անո՛ւշ անո՛ւշ ջուր է ծըծում՝
Խոտերի հետ գըրկըւած։

Եթերում պար, ծորերում պար,
Երաժիշտներ ամե՛ն տեղ.
Տօնում, օրհնում են անդադար
Գարնան մուտքը փառահեղ։

12

Ակ ու վրտակ կարկաչներով,
Ծառ ու ծաղիկ սօսիւնով,
Վառ արեգն էլ հուր շողերով,
Հաւք ու թռչուն երգելով,

Անո՜ւշ գարնան, պրճնո՜ւտ գարնան
Բարի գալուստ մաղթում են.
Իսկ սըրտերը՝ կանա՜չ գարնան
Ընդ մլչտ մընալ խընդրում են։

13

Գառ ու ոչխար արօտներում
Մայում են ու արածում.
Հովիւներն հով զով տեղերում
Սըրինգներ են նըւագում։

Բիւր աղբիւրներ պաղ ու յըստակ
Թուլ ու անո՜ւշ կարկաչում.
Թունկ զեփիւռներ մեղմիկ շընչում,
Գարնան գալն են ողջունում։

14

Դու լըսո՞ւմ ես, աղջիկ սիրուն,
Անո՜ւշ երգերն անտառից.
Նորան հիւր է եկել գարուն
Մըշտադալար հարաւից։

Գընա՛նք, հոգեակ, ու մասնակից
Լինենք տօնին սրբազան.
Մեր խո՛ր սիրոյ անմահ վարդից
Վառ փունջ տանենք հիւր գարնան։

15

8/7

Գետ ու վրտակ թաւալում են՝
Գարնան երգեր շրթներին.
Սիրո՛ւն աղջիկ, մեզ կանչում են
Նրատիլ դալար ափերին։

Գընա՛նք, աեզին, գընանք պարկենք
Վրձիտ ջրի կոյս ափին,
Նորա մաքուր երգին խառնենք
Արցունքն ու երգ մեր սրտին։

16

8/7

Սիրուն ժրպտով, յուշիկ քայլով
Վառ գարունը ճեմում է.
Կոխած տեղով, անցած ճամբով
Վարդ ու ծաղիկ բացում է։

Ղրկի՛ր սէրդ, սիրո՛ւն աղջիկ,
Թո՛ղ իմ սրտում նա ճեմէ.
Անցած ճամբով վարդ ու ծաղիկ
Ծրլեցընէ, բուսցընէ։

17

Արտոյտները քաղցրիկ կ'երգեն
Պայծառ օդում ճախրելով.
Արտոյտները անլուռ կ'երգեն
Գարնան գալը յայտնելով։

Սիրո՞ւն աղջիկ, իմ արտուտիկ,
Ինչո՞ւ լուռ ես դու այդպէս.
Գարնան երգիչ, խօսուն թռչնիկ,
Մի երգ երգիր որը սրտիս։

18

Խաղա՞ղ օդում, վրնի՞տ օդում
Վառ երգեր են թրթռում.
Կանա՞չ դաշտում, դալա՞ր հովտում
Արտոյտ, ծիծառ ճրուողում։

Բեհեզ օդում, բիւրեղ օդում
Գինով շողեր են շրջում,
Մետաքս դաշտում, թաւիշ հովտում
Առուն «Սէ՛ր» է մրմնջում։

19

Գարունն եկաւ՝ ցանեց սերմեր
Արտ՝ արօտում ու հովտում.
Ծլան, ծաղկան, և վարից վեր
Ծաղիկ, դալար են պատում։

Գարո՞ւն աղջիկ, մի հատիկ սէր
Ցանիր սրտիս ծալքերում.
Ծլի, ծաղկի, ու խունկ վարդեր
Բուրեն սրտիս ծորերում։

20

Հով ու զեփիւռ անո՞ւշ երգով
Արտ՝ արօտում շրջում են.
Հով ու զեփիւռ անլուռ երգով
Գարնան գալը յայտնում են։

Ծառ ու ծաղիկ, շող, ցօղ, եթեր
Մասնակցում են սուրբ երգին.
Երկինք, երկիր են ունկընդիր
Թռունիկների համերգին։

21

Քար կարկուտը դաշտը ծեծեց,
Թոտ ու ծաղիկ լաց եղան.
Անցաւ մի քիչ, արև փայլեց,
Բայց ծաղկունքն էլ չըտեսան։

Կարկուտ եկաւ և՛ իմ սրտում,
Ա՜խ, երբ նա ինձ մոռացաւ.
Յետոյ թէև տրւեց երգում,
Սակայն սիրտս սառեցաւ։

22

Ասա՛, ո՞ւր են, անո՛ւշ անտառ,
Մեր արցունքներն ու երգեր,
Որ պահ տըվինք անցեալ ամառ
Ես ու սիրած իմ ընկեր։

Արդեօք հողմեր ու սառը ցո՞ւրտ
Եկան տարան յաւիտեան
Արցունք ու երգ քո ծոցից սուրբ,
Եւ նետեցին խո՛ր Լեռան։

23

Կանա՛չ դաշտում, ծաղկի ծոցում
Բիւր մեղուներ խայտալով,
Անո՛ւշ անո՛ւշ մեղր են ծըծում՝
Թոտն ու ծաղիկ օրհնելով։

Սիրո՛ւն աղջիկ, դառն է հոգիս,
Բացի՛ր քո սիրտն ինձ անմեղ.
Սիրտըդ պարտէզ, սէրըդ նարգիս,
Թո՛ղ մեղր ծըծեմ ես համեղ։

24

Կո՛յս երազով, վա՛ռ պատրանքով՝
Վարդ ու ծաղիկ նիրհում են.
Հով ու վըտակ բոյրից գինով՝
Բըլբուլի հետ երգում են։

Լո՜յս ժըպիտով, հո՜ւր ժըպիտով
Դու նիրհում ես իմ գըրկում.
Քո սուրբ շընչից սիրտըս գինով՝
Քեզ իմ սիրուցն է երգում։

25

8/7

Քեզի մատաղ, կանա՜չ գարուն,
Եկած ճամբիդ ես մեռնիմ.
Քեզի մատաղ, ալ վարդ գարուն,
Կոխած հողիդ ես մեռնիմ։

Անցած ճամբադ, անո՜ւշ գարուն,
Մետաքս խոտով ծածկեցիր.
Կոխած հողըդ, անվնա՜ս գարուն,
Թաւիշ ծաղկով լեցուցիր։

Քեզի մատաղ, կանա՜չ գարուն,
Մատաղ հովիդ ու շողիդ.
Քեզի մատաղ, ալ վարդ գարուն,
Մատաղ ծաղկիդ ու ցօղիդ։

26

8/7

Սիրո՜ւն աղջիկ, վարդի՜ թերթիկ,
Գարուն եկաւ իմ սըրտին.
Ծաղկի՜ ցօղիկ, գարնա՜ն հովիկ,
Է՛լ օտար չե՛մ քո շընչին։

Ես վարդի թերթ, դու զով զեփիւռ,
Ինձ զուրգուրա այսուհետ.

Ես ծաղկի ծոց, դու ցող ու բոյր՝
Ապրիր, ցընդի՛ր գարնան հետ։

27

Սև՜ ամպերի անձրևին մէջ
Հուր փայլակներ կը սողան.
Սև՜ ամպերի անձրևին մէջ
Ծիածաններ կը շողան։

Տրւած վէրքիդ մո՜ւթ արեան մէջ
Թո՜ւլ կրսկիծներ կը սողան.
Տրւած վէրքիդ մո՜ւթ արեան մէջ
Թո՜ր վայելքներ կը դողան։

28

Ալ ու կանաչ շողերի մէջ
Սէգ լեռները կը ծրփան,
Ալ ու կանաչ շողերի մէջ
Արուսեակներ կը ժրպտան։

Արև՜ սիրուդ շողերին մէջ
Իմ յուշերը կը ծրփան.
Սրրտիս գարնան կոյս այգին մէջ
Քո շրրթները կը ժրպտան։

29

8/7

Լոր ու ծիծառ եկան կըրկին՝
Սիրտըս մըտան ճախրելով,
Սիրո՜ւն աղջիկ, ծաղի՜կ անգին,
Քեզնից բարև բերելով։

Լոր ու ծիծառ եկան կըրկին՝
Սիրտըս մըտան ճախրելով,
Վալդ ու շուշան համբուրեցին՝
Քաղցր անունըդ օրհնելով։

30

8/7

Բըլբուլն անուշ դայլայլելով
Գարմիր վարդը օրհնում է.
Վարուժանը մարմա՜ծ ձայնով
Իր ընկերոջ կանչում է։

Սիրող սըրտերն իրար հոգում
Անո՜ւշ անո՜ւշ նիրհում են.
Ա՜խ, իմ սիրտը մենակ, տըրտում,
Ցուրդ ձըմրան մէջ կապտում է։

31

8/7

Լուռ պատմում է երկինքն երկրին
Թորի՛ն սէրը ցօղերով.
Սէ՜ր երգում են ալ վարդերին
Բըլբուլները դայլայլով։

Ես էլ քեզի, աղջիկ սիրուն,
Անկեղծ սէրըս՝ սէրըս ծո՜վ
Լուռ պատմում եմ, խոստովանում
Արցունքներով, երգերով։

32

8/7

Կանա՜չ հովտում ու անտառում
Մանուշակը ծաղկում է.
Հասուն կըրծքում, յըղի սըրտում
Մատաղ սէրը ծընում է։

Հասո՜ւն աղջիկ, հոգուս հատոր,
Ծաղկած կուրծքըդ լաւ ծածկիր.
Խորշակներ կան, ա՜խ, թունաւոր,
Ծաղիկներըդ պահպանիր։

33

8/7

Ծիծառները պայծառ օդում
Անհա կըրկին նախրում են.
Մետաքս մարգում արտ — արօտում
Վարդ ու ծաղիկ բացում են։

Իսկ իմ սըրտից նոքա թըռան,
Թըռա՜ն դէպի տաք սըրտեր,
Ու իրենց հետ առա՜ն տարա՜ն
Վերջին դալարն ու վարդեր։

34

Կոյս երկիրը հագաւ դալար,
Վարդեր անցուց մազերուն.
Ու սիրեցին մի պահ իրար
Կանաչ հողն ու սալ գարուն։

Երբ շատ չանցաւ ու ծերացաւ,
Կանաչ հողը դեղնեցաւ.
Զա՛ր գարունը թողեց փախաւ՝
Տաք հարաւում կին առաւ։

Սիրո՛ւն աղջիկ, սակայն ես քեզ
Չե՛մ թողնելու՝ թէ սիրեմ.
Թեկուզ դարեր պառաւ ապրես,
Պիտի սիրե՛մ ու սիրե՛մ։

35

Մութ ամպերը շարան շարան
Ճամբայ ընկան դէպ հիւսիս,
Ու իրենց հետ առան տարան
Դէզ ամպերը մութ սըրտիս։

Ժամանակ է, աղջիկ սիրուն,
Ե՛կ բընակուիր սըրտիս մէջ.
Անո՛ւշ գարուն, մատղա՛շ գարուն
Պիտի ծաղկի սըրտիս մէջ։

36

8/7

Ալ վարդերով, թարմ վարդերով
Անկողին եմ յարդարել.
Սիրող սըրտիս արցունքներով՝
Մարգարիտներ եմ շարել։

Անտէ՛ր թըռչնիկ, ո՞ւր բըլբուլիկ,
Արի՛ ընկՋիր վարդի մէՋ.
Կոկո՛ն աղՋիկ, անմահ ծաղկիկ,
Արի՛ բացուիր հոգուս մէՋ։

37

8/7

Բարի՛ գարուն, ասա՛ ինձի,
Իմ տիրուհին ո՞ւր մընաց.
Խո՛ր կարօտը ծընե՛ց ինձի,
Է՛լ արտասուք չըմընաց։

Եղբա՛յր գարուն, քոյրի՛կ գարուն,
Աստուածուհիս ո՞ւր մընաց.
Իմ ցաւ ու վիշտ դարձան անհուն,
Սըրտումս է՛լ տեղ չըմընաց։

38

8/7

Անո՛ւշ անո՛ւշ քուն են լինում
Վարդ, մանուշակ անտառում.
Ծառ ու վըտակ օրո՛ր երգում
Ու զեփիւռներն օրօրում։

Անո՜ւշ անո՜ւշ քուն են լինում
Երգերըս քո կոյս սըրտում.
Հասուն կուրծքըդ օրօր երգում
Ու սէրըդ մեղմ օրօրում։

39

Գարնա՜ն արև, պայծա՜ռ արև,
Շողե՛ր ղըրկիր իմ սըրտին.
Գարնան արև, ջերմո՜ւ արև,
Հալի՛ր սառոյցն իմ սըրտին։

Աղջի՛կ արև, աստուա՜ծ արև,
Դալա՛ր բուսցուր սըրտիս մէջ.
Կեանքի՜ արև, սիրո՜յ տերև,
Վարդե՛ր բուսցուր սըրտիս մէջ։

40

Վարդե՛ր կապեց շուշան ճակտին
Մատա՜ղ սէրըս սըրտիդ մէջ.
Աստղեր կապեց արև՜ ճակտին
Քո անունը հոգուս մէջ։

Մաքո՜ւր ու ջինջ ցօղեր կաթեց
Երկինք սէրըս սըրտիդ մէջ.
Անմահ գարուն ու վարդ շընչեց
Քո անունը սըրտիս մէջ։

41

8/7

Գարունն եկաւ ու հրաշքով
Սառը ջուրի վերածեց.
Գարունն եկաւ ու հրաշքով
Տերև, ծաղիկ ըստեղծեց։

Հրաշագո՜ւրծ աստուա՛ծ աղջիկ,
Հրամայի՛ր իմ սրտին,
Քար սառերը դառնան լրճիկ,
Վարդեր ծաղկին ափերին։

42

8/7

Վա՜րդ աղջիկներ ծորերն ի՛ջան
Փարչ ու սափոր ուսերին.
Ջուր կըրելու նոքա ի՛ջան
Ջորի վրճի՜ռ աղբիւրից։

Սիրո՜ւն աղջիկ, կոյս հոգիդ բեր
Դէ՛մ տուր սըրտիս ծորերին.
Մարգարտահո՜ս անո՜ւշ աղբիւր
Ցայտում է մո՜ւթ խորերում։

43

8/7

Վարդ ու վըտակ, բոյր ու կարկաչ,
Ծաղիկ, դալար ու զեփիւռ,
Սըրտիս հովտում ալ ու կանաչ
Ծաւալում են համասփիւռ։

Սիրո՞ւն աղջիկ, լոկ մի բլլբուլ
Պակասում է կոյս հովտիս,
Արի՛ դարձիր սըրտիս բլլբուլ՝
Սէրըդ երգիր ա՛լ վարդիս։

44

8/7

Լերա՞ն լանջում, խի՛տ արօտում
Գառ ու ոչխար արծում են.
Լերա՞ն լանջում՝ զո՛վ ըստուերում
Հովիւները ածում են։

Լերա՞ն լանջում, պայծա՛ռ օղում
Թիւր թըռչուններ ճախրում են.
Լերա՞ն լանջում՝ ժայռի ծոցում
Պա՛ղ աղբիւրներ ցայտում են։

Լերա՞ն լանջում, ազա՛տ վայրում
Քունն անո՛ւշ է ու խաղա՛ղ.
Լերա՞ն լանջում՝ կո՛յս հողերում
Ա՜խ, թո՛ղ հանգչի իմ դագաղ։

45

8/7

Գարունն եկաւ բերեց նըւէր
Ծառին, ծաղկին և մարդկանց,
Ամեն մէկին մի կըտոր սէր՝
Դալար յոյսի մէջ փաթթած։

Ճաշակելով գարնան պարգև
Իբրև սըրտի տըրիտուր,

Նոքա տրւին կանաչ տերև,
Դրրախտ բոյր ու ջերմ համբոյր։

Իսկ ես տրւի անո՞ւշ գարնան
Իմ երգերն այս սիրատապ,
Մեր մրտերիմ ծանօթութեան
Իբրև անջինջ յիշատակ։

ԱԼԲՈՄՈՒՄ

Ա.

Մո՞ւթ է սիրտը. բայց մի՛ վախիր,
Սիրո՞ւն աղջիկ, մութ ծովից.
Անգին քարերդ նորան յանձնիր,
Որ չըխլեն խո՞ր ծոցից։

Բ

Թող ես չըգըտնեմ մեր այս աշխարհում
Ճըշմարիտ սիրող սըրտիս մի ընկեր.
Ես դարձեա՛լ կ՚երգեմ ալ վարդն ու գարուն,
Ես կ՚երգեմ կրնոջ հուր սէրն անձնուէր։

Գ.

Ցիշատակաց լեռներիս մէջ հանգչի թող,
Սիրո՞ւն աղջիկ, քո անունն անո՞ւշ քընով.
Այն տեղ, հոգեա՛կ, ամե՛ն մի քար, ամեն հող
Փափկացած է երազներիս արցունքով։

Դ.

Թէպէտ անգութ պըղտոր ծովը մոռացման
Պիտի ճըգնի լիզել սեպ ժայռն յուշերիս,
Ցուշն անունիդ սակայն, հոգեա՛կ, յաւիտեան
Պիտի մընայ, նա երկինքն է աստղերիս։

Ե

Գարնան դըստեր շա՜տ նըման ես,
Սիրո՜ւն աղջիկ հողածին.
Անուշ տեսքիդ հետ փուշ ունես,
Բըլբուլիդ դէմ սիրտ չունիս։

Զ

Վերջին պահին երդւում եմ ես,
Որ սիրեցի կեանքում քեզ,
Այնքան ուժգին ու այնքան խոր,
Որ կու լսի ամեն օր։

Վերջին անգամ երդւում եմ ես,
Որ սիրեցի միայն քեզ,
Այնքան թաքուն, այնքան խոր, որ
Զապրած դարձայ ալևոր։

Է

Արտաշունչըդ կ'ուզեմ թաղել
Կուրծքիս տակ մի տեղ յարմար.
Հող անկողին հետըս տանել,
Որ լուռ ծըծեմ դեռ երկար։

Ը

Ա՜խ, մեռա՜ծ ծընուեց մեր սէրն առաջին,
Մահը ողբում ենք արցունքներով հուր,

Եւ մեր զոյգ սըրտեր դագաղի առջին
Վառուում են ինչպէս կերոններ տըխուր։

Թ

Անդըրշիրմեան նոր կեանքի մէջ անտըրտում
Պիտի սպասեմ նոճիածածկ լուռ ճամբին
Քեզ, որ այնքան խոր սիրեցի այս կեանքում.
Քեզ, որ տեսայ, ա՜խ, կիրն դարձած ուրիշին։

ԻՄ ԵԱՐԸ



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՕՏԻՆԵՐ

Ա.

8/7

Արի՛ երգիր, սիրուն բլբուլ,
Քո գեղգեղանքն իմ եարին.
Թո՛ղ բուրաստանն ու վարդն ամուլ,
Արի՛ թառիր մեր կլտրին։

Իմ եարն ունի թաւիշ այտեր,
Ալ վարդ շրթներ, շող գանգուր.
Իմ եարն ունի ցող ցող աչեր՝
Որ շողում են սէր ու հուր։

Նա սիրտ մ'ունի խորունկ ա՜նքան,
Որ պարփակեց իմ հոգին,
Եւ դեռ մընաց տեղ բաւական
Թշուառ մարդկանց ցաւ՝ հոգսին։

Արի՛ երգիր, սիրո՜ւն բլբուլ,
Անո՜ւշ երգերդ իմ եարին.
Թո՛ղ բուրաստանն ու վարդն ամուլ,
Արի՛ գովիր իմ եարին։

Բ

8/7

Ա՛ստղ ու ծաղի՛կ, շո՛ղ ու ցողի՛կ,
Դուք նըման չէք իմ եարին.
Օ՜, դուք չունի՛ք ա՛յն անուշիկ
Խորո՜ւնկ աչերն իմ եարին։

Եարս ուրիշ է, չունի՛ ընկեր
Ոչ երկընքում, ո՛չ երկրում.
Տիեզերքի վարդն է անքոյր.
Մատաղ եարիս աչերուն։

Գ.

Շողո՞ւն աստղեր, հո՞ւր աչիկներ,
Ձեր շողն ու փայլ են սիրուն.
Սակայն եարիս սև սաթ աչեր
Ձեզանից էլ են սիրուն։

Հաւատացէ՛ք, աչերն այդ խո՞ր
Թէ լինէին երկընքում,
Մարդիկ պիտի ուզէին՝ որ
Գիշեր լինէր միշտ կեանքում։

Դ.

Շողերից նուրբ մազեր ունի
Սիրուն գլխուխն իմ եարին.
Արևից տաք հայեացք ունին
Ծով ծով աչերն իմ եարին։

Հիւսիսայզից է՛լ սիրուն են
Արտևանունքն իմ եարին.
Ծիածանից էլ սիրուն են
Կամար յօնքերն իմ եարին։

Վարդից քընքուշ այտեր ունի
Իմ գարուն եարն իր դէմքին.
Շուշանից թարմ երես ունի
Իմ ծաղիկ եարն իր դէմքին։

Ձեփիւռից մեղմ շընչիկ ունի
Անչար բերանն իմ եարին.
Լարից բարակ շրթներ ունի
Կոկոն բերանն իմ եարին։

Ակն՝ աղբիւրից շատ աւելի
Մի ծայն ունի դուրեկան.
Ժըպիտ մ'ունի քաղցր, որ չունի
Աստղերի մէջն իր նըման։

Օ՜, իմ եարի երեսն անգին
Տիեզերք մ'է աննըման.
Դեռ չընաշուած սիրտն ու հոգին,
Որ խո՜ր են ու անսահման։

Ա՜խ, ով ունի այսպէս մի եար
Ա՜յսքան անուշ ու թովի՜չ,
Նորա համար արար աշխարհ
Ու տիեզերքն են ոչինչ։

Ե

Բըլբուլի հետ եկայ գըրազ,
Թէ ո՞ւմ եարն էր գեղեցիկ.
Թէ ո՞ւմ եարը անուշ էր նազ
Յափըշտակիչ ու գողտրիկ։

Պարտէզ մըտաւ եարըս սիրուն՝
Ալ վարդի մօտ կանգնեցաւ.
Հէնց որ տեսաւ վարդն, ամօթուն
Տերևներում թաց կացաւ։

Զ

Մի օր եարիս թևը մըտած
Անցնում էի դաշտերով,

Ցո՜ղ ու ծաղի՜կ խորունկ ապշած
Նայում էին վաշտերով։

Երբ տուն դարձանք ու եարս ընկաւ
Բազուկներիս մէջ յոգնած,
Ցող ու ծաղիկ զլտայ անբաւ
Փեշերի հետ տուն եկած։

Է

8/7

Ցո՜ղ ու շողի՜կ, ա՛ստղ ու հովիկ
Գովքն են անում իմ եարին.
Հաւք ու ծաղիկ, այգ ու աղջիկ
Նախանձում են իմ եարին։

Եարըս պարզ է քան ցող ու շող,
Սիրում քան տեսքն արևին.
Դորա համար ամեն տեսնող
Նախանձում է իմ եարին։

Ը

8/7

Կանա՜չ խոտեր, վարդե՜ր անփուշ,
Հորոտ մորոտ արօտում,
Տե՛ղ բաց ա՛էք եարի՜ս անուշ,
Որ զսյ նիրհէ ձեր գըրկում։

Սարի լանջից զեփիւռնե՜ր զով,
Վառ արօտին հի՜ւր եկէք,
Որ իմ եարին երգ – երազով
Անո՜ւշ անուշ քուն դընէք։

Թ

Ծերո՞ւկ լեռներ, հլսկա՛յ ժայռեր,
Ըստուերը ծրգէք ջրերին,
Որ արևի չա՛ր շողիկներ
Զրհամբուրեն իմ եարին։

Լողանում է իմ եարն այսօր
Գա՛ղ ու վրձի՛տ ջրերում.
Իմացել են շողեր բոլոր
Ու թագ կացել ամպերում։

Ծերո՞ւկ լեռներ, հլսկա՛յ ժայռեր,
Ըստուե՛ր ծրգէք ջրերին.
Լաւ ծածկեցէք ջուրն ու ափեր,
Որ չընտեսնեն իմ եարին։

Ժ

Դալա՞ր մարգեր, ալ արօտներ,
Ցօղ ու բոյրով օծուեցէ՛ք,
Ամենաթարմ ծաղկունք, վարդեր
Ձեր ծոցերիցն հանեցէք։

Նազան եարիս, նազլու եարիս
Ուզում եմ վառ փունջ տանել,
Ծաղկո՞ղ եարիս, ծաղկե՞ն սըրտիս
Սիրո՞ղ կուրծքը զարդարել։

ԺԱ.

8/7

Երազիս մէջ ես այս գիշեր
Աստղեր էի հաւաքում.
Արև եարիս վառ վառ փընջեր
Հուր վարդերից կապկապում։

Բայց ըոց աստղերն յանկարծ մարան
Իմ ձեռներում դողդոջուն.
Մութն ու գիշեր փախան, կորա՜ն...
— Եարըս ինձ էր ողջունում։

ԺԲ

8/7

Թէ ես առաջ մեռնիմ, ո՜վ Տէր,
Սիրած եարըս ո՞ւմ յանձնեմ.
Եարիս սիրած ազա՜տ լեռներ,
Արիք նորան ձե՛զ յանձնեմ։

Մի ժիր այծեամ կը տաք ընկեր՝
Իմ անընկեր որբ եարին,
Որ նորա հետ ցատկէ ժայռեր
Մինչև մուտքը արևին։

Ձեր զով ծոցում ծաղկոտ մի տեղ
Կը յարդարէք անկողին,
Որ նա քընի գիշերն այն տեղ
Այծեամի հետ միասին։

Վրձի՜ն ակունք, սա՜րզ վըտակներ,
Դուք ցոյց կը տաք իմ եարին,

Որ նոցա չինչ սուրբ կայլակներ
Ցողեն հասակն իմ եարին։

Եարիս սիրած լեռներ ու ծոր,
Զըլինի թէ իմ եարին
Կընծու խօսքեր ասէք մի օր
Ու ցաւեցնէք իմ եարին։

Կենտ դըստեր պէս պահէք նորան
Ձեր հայրական կուռ ծոցում,
Մինչև որ գայ նա՝ յաւիտեան
Հիրհէ պառկած իմ ծոցում։

ԺԳ

Սիրա՜ծ վայրեր, անո՜ւշ հովեր,
Տեսա՞ք արդեօք իմ եարին.
Ասա՛ բըլբուլ, ասէ՛ք վարդեր,
Սիրած եարըս ո՞ւր տարին։

Խօսէ՛ք գետի ափեր դալար,
Խո՜տ ու ծաղիկ, վըճիտ ջուր,
Ասա՛ ալեակ, ո՞ւր է իմ եար.
Խօսէ՛ք աւազ ու փըրփուր։

Հանէ՛ք, լացող դուք ուռիներ,
Ձեր սաղարթներ ջըրասոյզ.
Ասէ՛ք տեսա՞ք այն անգութներ
Որ խըլեցին կեանքիս լոյս։

Մեռա՜ւ արև, մութը ծընաւ
Սև գիշերը նենգալուռ,

Եւ ողջ հովտում չիտեն բընաւ
Թէ ո՞վ տարաւ եարըս, ո՞ւր...

ԺԴ

Գիշերներն ինձ նախանձեցին՝
Եկան զողցան իմ եարին.
Թոնա՜ւ հողին, պաղ որդերին
Աստուածուհիս հարս տարին։

Օ՜ սէգ լեռնե՜ր, հուժկո՜ւ ժայռեր,
Ո՛ւժ տըւէք իմ թևերին,
Գընամ քանդեմ մութի դըռներ
Ու յե՛տ խըլեմ իմ եարին։

Առա՛նց նորան, ա՜խ, ինձ համար
Ծանը է ապրիլ աշխարհում.
Ա՜խ, իմ եարի նըման մի եար
Էլ չի՛ ծընիլ ո՛չ մի մայր։

Օ՜ սէգ լեռնե՜ր, հուժկո՜ւ ժայռեր,
Ո՛ւժ տըւէք իմ թևերին,
Գընամ քանդեմ մութի դըռներ
Ու տուն բերեմ իմ եարին։

ՎԵՐՋԱԼՈՅՍԻՆ

(ՎԵՐՋԱԼՈՅՍԻ ՅԱՒԱԾ ԾԱՂԻԿՆԵՐ)

* * *

Վերջալոյսին ես ծընուեցի,
Վերջալոյսին ես սիրեցի·
Վերջալոյսին կ'ուզեմ մեռնիլ,
Վերջալոյսին կ'ուզեմ յիշուիլ:

* * *

По первой строке — хорошо смоделить синтаксис

*
* *

Վերջալույսին՝ երբ ցաւերն են խորանում,
Ինձ թըւում է, թէ ցաւերիս խորանում
Ղօղանջում են զանգակները համրօրէն,
Ու նոցա հետ կու լան նոճեաց խորերէն,
Վերջալույսին՝ երբ ցաւերն են խորանում։

*
* *

Վերջալույսին՝ երբ կըսկիծն է խո՛ր ու մունջ,
Ինձ թըւում է, թէ նըստած են շողերում
Անյո՛յս մայրեր, ու նայում են անմըռունչ
Իրենց որդոց դագաղներին անդադրում,
Վերջալույսին՝ երբ կըսկիծն է խո՛ր ու մունջ։

*
* *

Վերջալույսին՝ երբ կըսկիծն է անբարբառ,
Ինձ թըւում է, թէ, ա՜խ, ասեն մի շըրթունք
Դժենախո՛ր տառապանքի է բուրվառ,
Որոնց միջով հառաչն ինչպէս ծուխ սողում,
Վերջալույսին՝ երբ կըսկիծն է անբարբառ։

*
* *

Վերջալույսին՝ երբ տառապանքն է մըխում
Վիրո՛ւտ սըրտի յիշատակաց ծորերում,
Բըռընկում են և՛ իմ սըրտի վիհերում
Տառապանքիս խարոյկները անմարում,
Վերջալույսին՝ երբ տառապանքն է մըխում։

*
* *

Վերջալույսին՝ երբ վէրքերն են կըսկըծուն,
Աղօթում են իմ յուշերը լալագին
Տառապանքիս, ա՜խ, անողորմ աստըծուն,

Որ շընորհէ իրենց մահ ու մոռացում,
Վերջալույսին՝ երբ վէրքերն են կըսկըծում։

*
* *

Վերջալույսին՝ երբ վէրքերն են մըռընչում,
Արթնանում են յիշատակներ իմ սըրտում.
Տառապանքի ահեղ հնքը շըրթներին,
Լուռ սողում են վէրքերիս մէջ ու պատրում,
Վերջալույսին՝ երբ վէրքերն են մըռընչում։

*
* *

Վերջալույսին՝ երբ լեռներն են աղօթում
Կուռ ժայռերի կործանումը խընդրելով,
Ձայնակցում է և իմ սիրտը լեռներին՝
Ժայռ վէրքերի չորացումը խընդրելով,
Վերջալույսին՝ երբ լեռներն են աղօթում։

*
* *

Վերջալույսին՝ երբ գետերն են հեծկըլտում
Անդունդների արհաւրալի խորշերում,
Վիրոտ սըրտիս մութ ծոցերն եմ ես յիշում,
Ուր մըրրկում արեան գետեր են շաչում,
Վերջալույսին՝ երբ գետերն են հեծկըլտում։

*
* *

Վերջալույսին՝ երբ յուշերն են արթնանում,
Հոգիս խլած սըրտիս հովիտը մըթին՝
Մահ է ցօղում տառապանքիս վարդերուն,
Որ բացւում են՝ նոր կեանք առած վերըստին,
Վերջալույսին՝ երբ յուշերն են արթնանում։

*
* *

Վերջալույսին՝ երբ սէրը ցաւ է հազնում,
Ցաւած սըրտի լուռ մաքառումն եմ յիշում,

Որ յուշերի բանակին դէմ անպաշտպան՝
Կրծկըլում է, արիւնոտում ու մեռնում,
Վերջալոյսին՝ երբ սէրը հո՞ղ է հագնում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ անցեալն է արթնանում
Իր ցաւերո՞վ, ժըպիտներով, վարդերո՞վ,
Թըւում է՝ թէ ինձ դէմքեր են մօտենում,
Որոնք սակայն բաժանուած են աստղերով.
Վերջալոյսին՝ երբ անցեալն է արթնանում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ ջութակն է հեծկըլտում
Ցիշատակաց երգի տըրտո՞ւմ շեշտերով,
Թորո՞ւնկ ու տա՞ք այն սըրտերն եմ ես յիշում,
Որ ընկճած են յիշատակաց բեռներով,
Վերջալոյսին՝ երբ ջութակն է հեծկըլտում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ լացը խո՞ր շեշտ մ'ունի, 3-արդ
Ես յիշում եմ իմ ահեղ լացն անմոռաց,
Երբ ծովերում աստուածուհիս էր խեղդած.
Այդ յիշելով՝ դեռ լալիս եմ դառնաղի
Վերջալոյսին՝ երբ լացը խո՞ր շեշտ մ'ունի։

*
* *

Վերջալոյսին՝ երբ զրնգացքն է շարժըլում, բաշխուած
Ինձ թըւում է՝ թէ տանում է իրեն հետ
Իմ սիրածին, ու մեզ ընդ մի՛շտ բաժանում.
Սիրտըս կու լայ որքի նըման յուսահատ
Վերջալոյսին՝ երբ զրնգացքն է շարժըլում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ հեկեկանքն է ազդու,

Ա՜խ, յիշում եմ ես մի կորուստ թանկագին
Ու լուռ լալիս, հեկեկալով յե՛տ կանչում
Այն օրերը՝ երբ ունէի տակաւին.
Վերջալոյսին՝ երբ հեկեկանքն է ազդու։

* * *

Վերջալոյսին՝ երբ հրաժեշտն է անյոյս,
Ինձ թւում է՝ թէ վերջին ջերմ համբոյրով
Կորցընում եմ սրտով սիրած սիրուհուս,
Է՛լ յաւիտեան չտեսնելու կրսկիծով.
Վերջալոյսին՝ երբ հրաժեշտն է անյոյս։

* * *

Վերջալոյսին՝ երբ երդումն է սրբազան,
Քամիները ինձ բերում են անո՜ւշ ծայն.
— «Թո՛ր սիրում եմ քեզ դեռ հեռո՛ւ աշխարհում,
» Կ՚երդնում սիրել և՛ ցուրտ շիրմի խորերում» . —
Վերջալոյսին՝ երբ երդումն է սրբազան։

* * *

Վերջալոյսին՝ երբ ժրպիտն է դալկացող,
Երբ հոգում յուշ, սրտում կարօտ են փրթթում,
Թւում է՝ թէ վարդ. ամպերում լուսաշող
Անցած օրից յիշատակներ են ժրպտում,
Վերջալոյսին՝ երբ ժրպիտն է դալկացող։

* * *

Վերջալոյսին՝ երբ կարօտն է սրտագին,
Ինձ թւում է՝ թէ տեսնում եմ ամպերում
Աստուածուհուս, որ հայեացքով վրշտագին
Նայում է ի՛նձ, նայում անխո՜ս ու տրտում,
Վերջալոյսին՝ երբ կարօտն է սրտագին։

*
* *

Վերջալույսին՝ երբ լացի ձայն եմ առնում,
Թվում է՝ թէ շիրիմների խորքերում
Ցիշատակաց ավիքներն են հեծկլտում,
Դեռ չլքուած սրտի՝ յուշի ծովերում,
Վերջալույսին՝ երբ լացի ձայն եմ առնում։

*
* *

Վերջալույսին՝ երբ շիրիմներն են տրտում,
Սէրըս մնուած սրտիս կարմիր վիրատան՝
Հառաչանքի սև փունջեր է կապկապում
Վարդ սիրուհուս յիշատակին անկենդան,
Վերջալույսին՝ երբ շիրիմներն են տրտում։

*
* *

Վերջալույսին՝ երբ շրթները բառ չունին,
Թվում է՝ թէ խորհրդաւոր այդ պահին
Սիրած սրտերն են իրար հետ խօսակցում
Ցիշատակի անո՛ւշ լեզուով անպատում,
Վերջալույսին՝ երբ շրթները բառ չունին։

*
* *

Վերջալույսին՝ երբ զոյգերն են գոհ ճեմում,
Անցա՛ծ ամրան երեկոներն եմ յիշում,
Երբ ունէի տակաւին հող սիրուհուս,
Շողերի հետ ժըպտում էին մեր սրտեր
Վերջալույսին՝ երբ զոյգերն են գոհ ճեմում։

*
* *

Վերջալույսին՝ երբ կարօտն է արթնանում
Ցիշատակով մի սրտերում հեւաւոր,
Ինձ թվում է՝ թէ մարմրող շողերում

Ամեն կողմեց հայեացքներ են միանում,
Վերջալույսին՝ երբ կարօտն է արթնանում։

*
* *

Վերջալույսին՝ երբ հոգիս է պաշարուում
Անցած բաղդի, մարած յոյսի յուշերով,
Ապրած սրտիս յուշերից եմ սարսափում,
Որ պիտի գան տանջելու ինձ գիշերով,
Վերջալույսին՝ երբ հոգիս է մրռայլուում։

*
* *

Վերջալույսին՝ երբ վարուժանն է ճրչում
Ցաւած շեշտով մութ անտառի թաւուտում,
Թափառական հառաչներիս եմ յիշում,
Որ փընտրում են սրտիս կորած թագուհուն,
Վերջալույսին՝ երբ տատրակն է հեծեծում։

*
* *

Վերջալույսին՝ երբ ցաւերն են սաստկանում,
Ինձ թըւում է թէ տեսնում եմ վերամբարձ
Հառաչանքի սև լեռները անկայուն,
Որոնց ծայրեր եթերի մէջ են կորչում,
Վերջալույսին՝ երբ ցաւերն են սաստկանում։

*
* *

Վերջալույսին՝ երբ իմ հոգին է տըրտմում՝
Կեանքում խամրած երազ վարդերն յիշելով,
Թըւում է՝ թէ վերջին ժըպիտ են ղրկում
Իմ յոյսերը շողերի հետ մարելով,
Վերջալույսին՝ երբ իմ հոգին է տըրտում։

*
* *

Վերջալույսին՝ երբ հայեացքներն են տըրտում,
Ինձ թըւում է՝ թէ ամպերում վառվըռուն

Թաւալում է՝ ծիածաններ ցոլալով՝
Երջանկութեան ոսկի կառքը դէպ հեռո՛ւն,
Վերջալոյսին՝ երբ հայեացքներն են տըրտում։

* * *

Վերջալոյսին՝ երբ շըրթներն են դողդոջուն,
Թըւում է՝ թէ թաւալում են եթերում
Երջանկութեան վրտակները դէպ հեռո՛ւն,
Որ հոսէին մի ժամանակ սըրտերում
Վերջալոյսին՝ երբ շըրթներն են դողդոջուն։

* * *

Վերջալոյսին՝ երբ սըրտերն են թըրթռուն,
Ինձ թըւում է՝ թէ ամպերում ծիրանի
Հաստերգում են երամները հարսներուն
Անո՛ւշ երգը տիեզերքի երազին,
Վերջալոյսին՝ երբ սըրտերն են թըրթռուն։

* * *

Վերջալոյսին՝ երբ սըրտերն են ըզգայուն,
Պաշարում են չապրած վրշտեր իմ հոգին.
Լուռ սեւեռած թաց աչերը դէպ հեռուն՝
Անծկոտ կարծես ըսպասում եմ ես մէկին,
Վերջալոյսին՝ երբ սըրտերն են նախազգում։

* * *

Վերջալոյսին՝ երբ սըրտերն ես լուռ լալիս,
Հոգուս խորքում կու տայ ահեղ արձագանգ
Հոգեմորմոք հեկեկանքը որբ սըրտիս,
Որ ողբում է գըրկած մի հի՛ն յիշատակ,
Վերջալոյսին՝ երբ սըրտերն են լուռ լալիս։

* * *

Վերջալոյսին՝ երբ սըրտերն են մենաւոր,

Ինձ թվում է՝ թէ տեսնում եմ ամպերում
Կարօտների կարաւանը սգաւոր,
Որոնք յոգնած թաղկանում են ու մարում,
Վերջալոյսին՝ երբ սըրտերն են կարօտում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ սըրտերն են արիւնում
Անյոյս սիրոյ յիշատակաց կըսկըծից,
Ինձ թվում է՝ թէ արիւն է դուրս ժայթքում
Անգամ մոխիր սըրտի անմահ վէրքերից,
Վերջալոյսին՝ երբ սըրտերն են արիւնում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ վարդերն են խունկ բուրում
Ու շողերը դալկաճաճանչ պըլպըլում,
Ինձ թվում է՝ թէ հեռո՞ւ լուռ խաւարում
Սիրող սըրտի վերջին՝ զարկերն են լըռում,
Վերջալոյսին՝ երբ ծաղկունքն են խունկ բուրում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ նոճիներն են ժըպտում
Հոգևարքի ցուրտ երգերի սօսիւնով,
Յիշատակաց աքսորավայրն եմ յիշում,
Ուր սըրտերը արթնանում են նոր կեանքով.
Վերջալոյսին՝ երբ նոճիներն են ժըպտում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ արևն է մահանում
Հոգեվարքի գալարումից արիւնած,
Այն սըրտերի վերջալոյսն եմ ես յիշում,
Որ տևում է, ա՜խ, տարիներ շարունակ.
Վերջալոյսին՝ երբ լոյսի սիրտն է մեռնում։

*
* *

Վերջալույսին՝ երբ շողերն են պլպլալում
Հեռո՜ւ հեռո՜ւ հորիզոնի յետևում,
Թլում է՝ թէ նոցա հետ են յամրացնում
Իրենց զարկերն յոգնած սըրտերն այս կեանքում,
Վերջալույսին՝ երբ շողերն են պլպլալում։

*
* *

Վերջալույսին՝ երբ բուերն են խուլ վայում
Անտառների մո՜ւթ խորքերում տըրտմագին,
Ցիշատակաց մո՜ւթ անտառներն եմ յիշում,
Ուր որբ սըրտեր մահն են հևում ցաւագին,
Վերջալույսին՝ երբ բուերն են խուլ վայում։

*
* *

Վերջալույսին՝ երբ մի սիրտ է կանգ առնում,
Նոճիների սոխակներն եմ ես յիշում,
— Հո՞ղ սըրտերը, որոնք նոճեաց խորերում
Ողբ են կարդում մոխի՞ր կեանքի ալ վարդին,
Վերջալույսին՝ երբ մի կեանք է մոխրանում։

*
* *

Վերջալույսին՝ երբ մահուան երգն է հընչում,
Նոճիատունկ այն լուռ պարտէզն եմ յիշում,
Ուր զանգերը աղօթում են անբարբառ,
Հող սըրտերում ծըխում սէրն ու յիշատակ,
Վերջալույսին՝ երբ մահուան երգն է հընչում։

*
* *

Վերջալույսին՝ երբ զանգերն են ղողանչում,
Ինձ թլում է՝ թէ սըրտիս մէջ համբոյրէն
Դէպի անլոյս ծառաստանը տըրտմութեան

Դազաղներ են կրրում անլաց, անաղօթք,
Վերջալոյսին՝ երբ զանգերն են ղողանչում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ ամեն բան շեշտ մ'ունի,
Ինձ թըւում է՝ թէ եթերն է ճեղքըւում.
Եւ բացւում են մութ սահմանները անհունի,
Ուր ամե՛ն երգ մահերգի է վերածւում,
Վերջալոյսին՝ երբ ամե՛ն բան շեշտ մ'ունի։

*
* *

Վերջալոյսին՝ երբ արցունքը խօսք ունի,
Թըւում է՝ թէ թա՜ց աչերը կարօտով
Համերգում են, անդըրշիրմեան անհունի
Մե՛ծ գիշերուան անո՛ւշ քընից անվրդով,
Վերջալոյսին՝ երբ արցունքը խօսք ունի։

*
* *

Վերջալոյսին՝ երբ ամպերն են բըռընկում,
Ինձ թըւում է՝ թէ այրւում են նոցա մէջ
Արիւն — արցունք շոգեացած աշխարհից,
Ու աշխարհը թաղւում նոցա մոխրին մէջ,
Վերջալոյսին՝ երբ ամպերն են բըռընկում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ հոգին է դալկանում,
Ինձ թըւում է՝ թէ թափում են երկընքից
Ընդհատ խօսքեր ու կէս ճամբին մահանում,
Որոնց մխաքը սակայն հոգին ըմբռնում,
Վերջալոյսին՝ երբ հոգին է սասանում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ լոյսերն են մարմըրում,
Ինձ թըւում է՝ թէ լսում եմ ակկօրդներ

Ցաւա՜ծ սրտի մաշուա՜ծ ու թա՜ց լարերից,
Որ նրանցնն անարծագանգ լուռ օդում,
Վերջալույսին՝ երբ լույսերն են մարմնրում։

*
* *

Վերջալույսին՝ երբ ծայներն են խլանում,
Ինձ թվում է՝ թէ լսում եմ գալարուն
Ցոգնա՜ծ ծայներ, որ ինչպէս մոմ են հալում
Տիեզերքի շընչած անլոյս խաւարում,
Վերջալույսին՝ երբ ծայներն են խլանում։

*
* *

Վերջալույսին՝ երբ երկինքն է վարդազարդ,
Երբ սէր ու յոյս անվախճա՜ն են ինձ թվում,
Մեր ամենիս Նախամայրն եմ ես յիշում,
Որին պիտի դառնանք մի օր՝ ա՜խ՝ անդարձ.
Վերջալույսին՝ երբ երկինքն է վարդազարդ։

*
* *

Վերջալույսին՝ երբ դագաղ է անց կենում,
Հոգուս խորքում ցա՛ւ եմ ըզգում ու սարսափ,
Եւ չե՛մ ուզում երբէ՛ք դորան հաւատալ՝
Թէ նոյնպէս ես մի օր պիտի հող դառնամ.
Վերջալույսին՝ երբ դագաղ է անց կենում։

*
* *

Վերջալույսին՝ երբ երկինքն է վարդ փըթթում,
Երբ կեանքը դող՝ մահը ժըպիտ մի ունին,
Լուծել կ'ուզէ հոգիս անհուն կարօտով՝
Տիեզերքի խո՜ր առեղծուածն անքընին,
Վերջալույսին՝ երբ երկինքն է վարդ փըթթում։

*
* *

Վերջալույսին՝ երբ պատրանքներն են ղըժգուն,
Ինձ թվում է՝ թէ եթերի խորերից

Պատասխանները կու գան սրտին ու հոգուն,
Որոնք կու լան՝ զարթնած յոյսի երազից,
Վերջալույսին՝ երբ պատրանքն է դրժգունում։

*
* *

Վերջալույսին՝ երբ երազն է մերկանում,
Մահադալուկ տրտում դէմքերն եմ յիշում,
Որոնք յառած խոր աչերը դէպ հեռուն՝
Զուր ըսպասում երջանկութեան ողջոյնին,
Վերջալույսին՝ երբ երազն է մերկանում։

*
* *

Վերջալույսին՝ երբ աշխարհն է մութ պատում,
Պալատներում, խրճիթներում, բանտերում
Կեանքից յոգնած տառապողներն եմ յիշում,
Որ լալագին անփարատ մութն են խընդրում,
Վերջալույսին՝ երբ աշխարհն է մութ պատում։

*
* *

Վերջալույսին՝ երբոր մահն է գեղեցիկ,
Հալուա՜ծ, մաշուա՜ծ ա՛յն դէմքերն եմ ես յիշում,
Որոնք յոգնած մերկանում են ցա՜ւ, կրսկիծ,
Ու զընում են շողերի հետ նիրհելու,
Վերջալույսին՝ երբոր մահն է գեղեցիկ։

*
* *

Վերջալույսին՝ երբ շողերն են ճամբորդում,
Ինձ թվում է՝ թէ շողերին համընկեր
Ցաւակարկաչ բիւր վըտակներ արցունքի
Թաւալում են դէպի հեռո՜ւ աշխարհներ,
Վերջալույսին՝ շողերի հետ համընկեր։

*
* *

Վերջալույսին՝ երբ շողերն են թափառում,
Ինձ թվում է՝ թէ պըսակներ են հիւսում

Վաղամեռի հայեացքներից ցաւատանջ
Անգութ կեանքի յիշատակին անարդար,
Վերջալոյսին՝ երբ շողերն են ոստոստում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ ծովերն են մրռայլում
Եւ հողմերը ձայն են տալիս քուն ալեաց,
Մրրրկայոյզ ծովերի մէջ անպաշտպան
Ուշ մընացած նաւակներն եմ ես յիշում,
Վերջալոյսին՝ երբ ջրերն են մրռայլում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ պայծառ լոյսն է մարում,
Երբ մեծ մարդն իսկ իրեն թշուառ է ըզգում,
Փառքի, բաղդի արևներն եմ ես յիշում,
Որ առ յաւէտ մարում են մերթ մի ժամում,
Վերջալոյսին՝ երբ ամե՛ն լոյս է մարում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ տրրտմութիւն է ծորում,
Թրւում է՝ թէ տիեզերքի ջրոս ծայրում
Անթիւ շրթներ շիրիմներ են համբուրում՝
Դաղրող լացի հեծկլտանքով թրթռռում,
Վերջալոյսին՝ երբ տրրտմութիւն է ծորում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ մեռելներն են յիշում,
Ինձ թրւում է թէ այդ պահին համրրնթաց
Ընդհատ խօսքեր սողոսկում են հողերից
Դէպի անտէ՛ր, անմխիթա՛ր սիրելեաց,
Վերջալոյսին երբ մեռելներն են յիշում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ մահն այց է ընդունում
Ու զարդարւում ծաղիկներով, արցունքով,

Այն մոռացուած հողակոյտերն եմ յիշում՝
Որոնք վաղո՛ւց հաւասարուած են գետնով.
Վերջալոյսին՝ երբ մահն այց է ընդունում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ տիեզերքն է հանգա՛ստ,
Թըւում է՝ թէ հէնց այդ պահին եթերում
Կեանքն ու մահը հանդիպում են մերկ իրար,
Որից ամե՛ն ծայն ու շշուկ է մարում,
Վերջալոյսին երբ տիեզերքն է հանգա՛ստ։

*
* *

Վերջալոյսին՝ երբ գիշերն է արթնանում,
Այդ իսկ պահին տիեզերքի խորերից
Ճանապարհ են ընկնում ապրած մեր օրեր,
Այցելելու անմընթեր սըրտերին,
Վերջալոյսին՝ երբ գիշերն է արթնանում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ մի օր էլ է պակսում,
Շողերի հետ իմ ջերմ կարօտն եմ ղըրկում
Ա՛յն աշխարհը, որ տեղ կենծ են ըսպասում
Վաղամեռիկ գարուն օրերս անտըրտում,
Վերջալոյսին՝ երբ մի օր էլ է պակսում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ տիեզերքն է բացւում,
Այն հեռաւո՛ր սահմանները եմ ես յիշում,
Ուր մահացած աշխարհները են մոխրանում
Իրենց ժըպտով, արցունքով ու կըսկիծով,
Վերջալոյսին՝ երբ տիեզերքն է բացւում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ անտառն է օրօրւում,
Ինձ թըւում է՝ թէ ծառերն իսկ վիշտ ա՛ունին,

Որ լալագին պատմում են ու արտասուում
Տիեզերքի խորքը դիմող արևին,
Վերջալույսին՝ երբ անտառն է շշշնչում։

*
* *

Վերջալույսին՝ երբ արևն է բաժանուում,
Թրուում է՝ թէ ես էլ վերջին բարևով
Մենա՜կ պիտի դիմեմ՝ արցունքն աչերիս՝
Մի ա՛յլ աշխարհ, որ հեռո՜ւ է դարերով.
Վերջալույսին՝ երբ արևն է բաժանուում։

*
* *

Վերջալույսին՝ երբ արդարն է մահանում,
Թրուում է՝ թէ լսում եմ խո՜ր շեշտերով
Մի վեհ նըւագ, որին լսելիկ մասնակցում
Մանկիկ ու կոյս, արցունքով ու աղօթքով,
Վերջալույսին՝ երբ արդարն է մահանում։

*
* *

Վերջալույսին՝ երբ աղօթքն է անարատ,
Թրուում է՝ թէ լոյս շողերում շարիշար
Մատաղա՜շ կոյսեր աղօթում են մեղապարտ
Աշխարհի ու մարդկանց համար քոյրաբար,
Վերջալույսին՝ երբ աղօթքն է անարատ։

*
* *

Վերջալույսին՝ երբ հորիզոնն է մընթնում,
Ու խաւարը մունջ երգերով սարսռռուն
Թոյլ լոյսն յաղթած աշխարհից ներս է մտնում,
Թրուում է թէ հեռուում բաղդ է ընկըղմում,
Վերջալույսին՝ երբ հորիզոնն է մընթնում։

*
* *

Վերջալույսին՝ երբ գիշերն է մօտենում,
Ա՜խ, յիշում եմ թրշուառներին հալածուած,

Որ լալագին Աստծուն են աղօթում՝
Քուն շընորհել իրենց աչքին մշտաթաց,
Վերջալոյսին՝ երբ գիշերն է մօտենում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ արևն է մայր մտնում
Արևն — արցունք ծըծած ժանգոտ շողերով,
Բոսորաներկ շողերին եմ աղերսում՝
Որ ներս մտնեն Աստծու տան դրռներով,
Վերջալոյսին՝ երբ արևն է մայր մտնում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ արցունքներն են պըղտոր,
Ա՜խ, յիշում եմ այրիներին, որբերին,
Որոնք ընկած բաղդի կըռուում վիրաւոր՝
Կու լան ազգու, կու լան արցունք ու արիւն,
Վերջալոյսին՝ երբ արցունքներն են պըղտոր։

*
* *

Վերջալոյսին՝ երբ արեան ծով է կապում,
Թըւում է՝ թէ վարդափըրփուր ամպերում
Նահատակաց շըրթունքներն են ողջունում
Գերիներին, ըստրուկներին, թոյլերին,
Վերջալոյսին՝ երբ արեան ծով է կապում։

*
* *

Վերջալոյսին՝ երբ երկինքն է թափանցիկ,
Ինձ թըւում է՝ թէ տեսնում եմ հեռաւո՛ր
Երազների լոյս արօտում բաղդաւոր
Երջանկութեան պալատները աստղաշէն,
Վերջալոյսին՝ երբ երկինքն է թափանցիկ։

*
* *

Վերջալոյսին՝ երբ ծաղկունքն են թառամում,
Ա՜խ, յիշում եմ մանկիկները ծաղկազարդ,

Որոնց շրթին անմեղ ժպիտն է սառում,
Իրենք նիրհում քընով անուշ ու անզարթ,
Վերջալույսին՝ երբ ծաղկունքն են թառամում։

*
* *

Վերջալույսին՝ երբ մանկիկն է հող մտնում,
Եւ տուն դառնում հայր, մայր, եղբայր վշտահար,
Ցաւ եմ զգում մանկան համար իմ սըրտում՝
Որ գիշերում պիտի նիրհէ՝ ա՜խ՝ անմայր,
Վերջալույսին՝ երբ մանկիկ մ՚են հող դընում։

*
* *

Վերջալույսին՝ երբ ճամբաներն են մթնում,
Մըտածում եմ՝ թէ այդ պահին՝ ա՜խ՝ ոլքա՜ն
Ըսպասողներ կան աշխարհի ծայրերում
Հէգ սիրելեաց, որոնք չե՛ն գալ յաւիտեան.
Վերջալույսին՝ երբ ճամբաներն են մթնում։

*
* *

Վերջալույսին՝ երբ պանդուխտներն են յիշում,
Սըրտիս խորքում՝ ա՜խ՝ մի թաքուն կըսկիծով
Հայրենիքից դուրս մեռնողներն եմ յիշում,
Օրուայ անուշ մելամաղձոտ այդ պահին,
Վերջալույսին՝ երբ պանդուխտներն են մեռնում։

*
* *

Վերջալույսին՝ երբ ճիգերն են յուսահատ,
Թըւում է՝ թէ տեսնում եմ բիւր բազուկներ
Ցամա՜ռ ճիգով պարզած դէպի մայր մտնող
Լո՜յս արեւի լուռ մարմրող վարդ շողեր,
Վերջալույսին՝ երբ ճիգերն են յուսահատ։

*
* *

ՎԵՐՋԱԲԱՆ

Վերջալույսին՝ երբ մի կարապ է երգում,
Մըտածում եմ՝ որ մի օր էլ մեր աշխարհ
Իր կարապի երգը կ'երգէ անկըրկնում
Ու կը մարի ինչպէս խորհունկ մի քերթուած.
Վերջալույսին՝ երբ մի կարապ է երգում։

ԻՄ ՍՈՐԸ

Իմ այս փունջը խո՞ր կարօտի վարդերից,
Սրնուած ցողուած վիրոտ սրտիս երկնի տակ,
Նուիրում եմ քեզ իմ հոգու խորերից,
Մայր իմ աստուած! իբրև անջինջ յիշատակ։

опять теме метери
(к наш. подобн. мышлению —
образ)

Ա.

Կամ ժամանակ՝ որ չինչ էր իմ արտասուք.
ճակտիս վարդեր, շրթիս ժրպիտ էր փրթթում.
Լացի՛ ցաւից — պլողտո՛ր հոսեց իմ արցունք.
Հառաչեցի՛ — խամրեցա՛ն վարդ ու ժրպիտ։

Օ՜ անո՛ւշ մայր, անգամ այն ծովը մրթին,
Որ կարծէի հեռո՛ւ լինել յաւիտեան,
Այդ մօտեցած նորա անդարձ սև՛ ափին՝
Ցե՛տ եմ կանչում վարդ օրերս մանկութեան։

Բ

Օ՜ մա՛յր իմ, մա՛յր, յոգնած է քո խեղճ որդին,
Գիրաւոր է, վէրքերն են խո՛ր, կըսկրծուն.
Օ՜ մա՛յր իմ, մա՛յր, կարո՛տ է քո մեծ որդին
Մանկան քընին, գրթոտ ծոցին մայրական։

Գ.

Խո՛ր ծո՛վ կ'ուզեմ տառապանքս թաղելու.
Ամենախո՛ր ծովը սիրտդ է, օ մա՛յր իմ.
Մի տեղ կ'ուզեմ ազա՛տ արցունք թափելու,
Այդ դո՛ւ ունիս, այդ քո՛ ծոցն է, օ մա՛յր իմ։

Դ

11

Խո՜ր գիշերով ես նըստած եմ, օ՜ մայր իմ,
Անկողնիս մէջ ու լալիս եմ դառնագին.
Քո անունն է պըղտոր լացիս խառնըւում
Գիշերային խորհըրդաւոր այս ժամին։

Դու հեռո՜ւ ես... Օ՜, կ'ուզէի սըլացած
Արտասուաթոր բարձիս մօտին նըստէիր,
Ինչպէս երբեմն օրօրոցիս մօտ նըստած՝
Այժմ էլ պըղտո՜ր արցունքներըս սըրբէիր։

Ե

11

Դու հեռո՜ւ ես, դու չե՛ս լսում քո որդուն,
Որ ցաւի մէջ քե՛զ է կանչում օգնութեան.
Դու հեռո՜ւ ես, դու չե՛ս տեսնում դողդոջուն
Քոր բազուկներն, որ դէպի քեզ է պարզել։

Զ

11

Խո՜ր ու անթի՛ւ են իմ ցաւեր, օ՜ մա՛յր իմ,
Ու ամեն ցաւ իր վէրքն ունի առանձին.
Խո՜ր ու անթի՛ւ են իմ վէրքեր, օ՜ մայր իմ,
Ու ամե՛ն վէրք արիւնում է տակաւին։

Է

11

Այս ինչ երգ է՝ որ լսում եմ գիշերով,
Որին ինքս էլ ձայնակցում եմ, օ՜ մա՛յր իմ.
Այս ինչ վայր է ծածկած կարմիր փուշերով,
Որ տարածում մեռելալուռ իմ առջին։

Դո՞ւ էլ արդեօք լսում ես, մա՜յր, գիշերով
Ցաւի երգերս որ կըրկնում են խաւարում.
Դո՞ւ էլ տեսնում այն աշխարհն ալ փուշերով,
Ուր սա՜ վարդից ինձ պըսակներ են հիւսում։

Ը

11

Օ՜ մա՛յր իմ, մայր, ցաւե՛ր ունիմ ես թաքուն,
Տանջանքի մէջ կ'ուզեմ պատմել միա՛յն քեզ.
Բայց հեռո՜ւ ես... Ու մենացած մի անկիւն՝
Ցաւըս կու լամ անմընխիթար որբի պէս։

Թ

11

Օ՜ մա՛յր իմ, մա՜յր, խո՜ր վէրքերըս ծըլում են,
Թարմ խոցերից գորշ շղթաներ հիւսուելով.
Մըրըրիկնե՛ր հոգուս խորքում սուլում են.
Մա՜յր, օտա՛ր եմ այս աշխարհին իմ սըրտով։

Ժ

Անո՜ւշ մայրիկ, երազ տեսայ այս գիշեր,
Դու մօտս էիր, վէրքերս էիր շօշափում.
Ու արցունքով, մօ՞ր արցունքով՝ կարեկէր
Խոցուած որդուդ խո՜ր վէրքերը լուանում։

... Ու նիրհեցինք, իրա՜ր գըրկած երկուքով
Մա՜յր ու որդի՛. դաղար առաւ ցաւ, կըսկիծ։
Օ՜ մա՜յր, իմ մայր, քո սուրբ շընչով, արցունքով
Երազիս մէջ մի պահ ապրայ անկըսկիծ։

ԺԱ.

Ա՜խ, կ՚ուզէի դեռ գերեզման չըմըտած
Մի անգա՛մ էլ նիրհել, օ՜ մայր, քո ծոցում,
Ցաւերով լի ապրած կեանքըս մոռացած,
Ինչպէս մանկիկ նիրհէի խո՜ր, անտըրտում։

Ու դու հանդարտ իմ գըլուխը շըփէիր՝
Գրթառաա մօր գուրգուրանքով անսահման.
Դալկապըսակ մութ ճակատիս շընչէիր,
Թամբեցնէիր դըժնիկ վարդն իմ տըրտմութեան։

ԺԲ

Քեզի՜ միայն հաւատում եմ, օ՛ մայր իմ,
Դո՛ւ սըրբազան նախատիպը Անմահին.
Քո՜ մէջն ապրում է իմ Աստուածն, օ՛ մա՜յր իմ,
Անվախճանը, ճշմարիտը ու բարին։

ԺԳ

Մայր իմ, լոկ դու արցունք թափիր ինձ համար,
Նոքա միայն անարատ են ու անկեղծ.
Մայր իմ, օ՜, լոկ դու աղօթիր ինձ համար,
Նոքա միայն սրբտարուղխ են ու անեղծ։

ԺԴ

Նախամայրը անկողին է պատրաստել,
Ես յոգնած եմ, զընանք, մայր իմ, նիրհելու.
Ալ վարդերդս վաղո՜ւց է որ են սևցել,
Գընանք, մայր իմ, ժամանակ է նիրհելու։

Արդէն մութից մեծ կարօտի խո՜ր շեշտով
Հարազատի անո՜ւշ ձայնն է մեզ կանչում.
Գընանք, մայր իմ, ու բովանդակ սերունդով
Նիրհենք խաղաղ ու միատեղ սև հողում։

ԺԵ

Ի՞նչպէս մընենք օտար երկրում գերեզման,
Երբ դու, օ՜ մայր, ինձնից հեռու ես ապրում.
Ա՜խ, ես ի՞նչպէս նիրհեմ անմայր յաւիտեան
Արհաւիրքի մութի անլո՜յս աշխարհում։

Կըրկնապատիկ խըղճում են այն դիակին՝
Որ հողի տակ չունի անկեղծ գէթ մէկին.
Չունի մի մայր, որ պաշտպանէ իր որդուն,
Եւ քուն դընէ իր ապահով սուրբ ծոցում։

Օ՜, թող փորեն երկուսիս մի գերեզման,
Որ ես նիրհեմ քո ծոցին մէջ ապահով.
Կըրծքիդ փաթուած ծըծեմ լուռ ու յաւիտեան
Խորհունկ կարօտն՝ որ ըզգացի ողջ հոգով։

ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ

(ԳԻՇԵՐԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՇՈՒՇԱՆՆԵՐ)

*
* *

Կէս գիշերին, երբ քունն է խոր ու խաղաղ,
Երբ երազը ամոքում է ամեն ցաւ,
Հարց եմ տալիս լալով լուսնին քընաշաղ.
Արդեօք թըշուառ Հայի աչքը փակուեցա՞ւ
Կէս գիշերին՝ երբ քունն է խոր ու խաղաղ։

*
* *

Կէս գիշերին, երբ արցունքն է յուսահատ,
Ինձ թըւում է, թէ լալիս են շատ հեռւում
Ամենից շատ անյոյս հայրերն աշխարհում,
— Հայ հայրերը որդոց արեա՛ն ճապաղում.
Կէս գիշերին՝ երբ արցունքն է յուսահատ։

*
* *

Կէս գիշերին, երբ սարսափն է թաւալում
Անլուր ոճրի մեծ երկունքից բըռնըւած,
Ա՜խ, մոխրապատ ա՛յն երկիրն եմ ես յիշում՝
Ուր լըճե՛ր կան Հայի արեամբ կազմըւած.
Կէս գիշերին՝ երբ սարսափն է երկունքում։

*
* *

Կէս գիշերին, երբ նիրհում է ամեն բան
Լուռ խաւարում մոռացումի խոր քընով,
Յիշում եմ Հայ մայրերին, որ անխափան
Մեռելներին հըսկում իրար քովէքով.
Կէս գիշերին՝ երբ նիրհում է ամեն բան։

*
* *

Կէս գիշերին, երբ արցունքն է թունաւոր,
Ինձ թըւում է՝ թէ լալիս են խաւարում
Ամենից շատ ցաւած մայրերն աշխարհում՝

— Հայ մայրերը, անօգնական ու մոլո՛ր,
Կէս գիշերին՝ երբ արցունքն է թունաւոր։

*
* *

Կէս գիշերին, երբ կասկածն է մունջ սողում
Խաւարի մէջ անընկատ ու քարալուռ,
Ա՜խ, յիշում եմ հայ սըրտերը, որ դողում
Մահուան առաջ ամե՛ն գիշեր մահալուռ.
Կէս գիշերին՝ երբ կասկածն է սողոսկում։

*
* *

Կէս գիշերին, երբ թրռչունները են մընչում
Թաւ անտառի զով ու մընթի՛ն խորքերում,
Ա՜խ, յիշում եմ հայ որբերին ես անտուն՝
Որոնք տեղ են փընտրում մոխրի կոյտերում,
Կէս գիշերին՝ երբ շո՛ւնն անգամ որջ մ'ունի։

*
* *

Կէս գիշերին, երբ թըշուառները են լալիս.
Ընդոստ զարթնած պատրանքաբոյր խո՛ր քընից,
Ինձ թըւում է՝ թէ պատասխան է տալիս
Տիեզերքը բաղդաբընակ բարձունքից,
Կէս գիշերին՝ երբ թըշուառները են լալիս։

*
* *

Կէս գիշերին, երբ շըղթան է խուլ շաչում
Մո՛ւթ, գետնափոր նկուղներում մընշտաթաց,
Աղօթում եմ քընի բարի աստծուն՝
Որ, ա՜խ, փակէ նոցա աչքը մընշտաբաց,
Կէս գիշերին՝ երբ շըղթան է խուլ շաչում։

*
* *

Կէս գիշերին, երբ կըսկիծն է լուռ լալիս
Ցաւա՜ծ սըրտի արիւնահոս վէրքերում,
Թըւում է թէ լացի ծայներ են գալիս

Հեռուներից, որոնք գութ են աղերսում.
Կէս գիշերին՝ երբ կլսկիծն է լուռ լալիս։

*
* *

Կէս գիշերին, երբ կարապներն են երգում
Մութ ջրերում խորհրդաւոր շեշտերով,
Ինձ թւում է թէ մայրեր կան մրրրկում,
Որ երգում են կարապների հետ լալով.
Կէս գիշերին՝ երբ կարապներն են երգում։

*
* *

Կէս գիշերին, երբ երկինքն է որոտում՝
Շանթ թափելով երկրի կրծքին արիւնոտ,
Թւում է թէ տիեզերքն է՝ որ խօսում
Բռնաւորին, մարդասպանին ու դահճին.
Կէս գիշերին՝ երբ երկինքն է որոտում։

*
* *

Կէս գիշերին, երբ ոճիրն է զալարւում
Կրծկումով ու սողումներով մատնութեան,
Կ'ուզեմ դառնալ պայծառ արև ու լոյս տալ
Ես անտեղակ թշուառներին անպաշտպան.
Կէս գիշերին՝ երբ ոճիրն է զալարւում։

*
* *

Կէս գիշերին, երբ խաւարն է լուռ խոկում
Մահախոշոշ երկաթ ձեռքը օձ ճակտին,
Ինձ թւում է թէ անդունդի մութ խորքում
Սասանում են հիմունքները աշխարհին.
Կէս գիշերին՝ երբ խաւարն է լուռ խոկում։

*
* *

Կէս գիշերին, երբ հողերն են սասանում,
Ինձ թւում է թէ սև մահն իր վաշտերով

Նիրհող կեանքի չորս բոլորն է թափառում,
Վարդն ու ծաղիկ նորա ճակտից փետելով.
Կէս գիշերին՝ երբ հողերն են սասանում։

*
* *

Կէս գիշերին, երբ շիրիմներն են դողում,
Թըւում է թէ նոցա տակ դեռ չըմեռած՝
Դուրս են ծըգտում կիսատ փառքն ու ցանկութիւն,
Որոնք խամրած ծաղկի նըման կիսաբաց.
Կէս գիշերին՝ երբ շիրիմներն են դողում.

*
* *

Կէս գիշերին, երբ վառ աստղերն աղօտում
Ու նըւազում մոգ կապոյտի խորերում,
Թըւում է թէ մատա՞ղ կեանքեր են խամրում
Մահուան հողմում աշխարհի չո՞ր ծայրերում,
Կէս գիշերին՝ երբ վառ աստղերն են մարում։

*
* *

Կէս գիշերին, երբ վէրքերն են լուռ ծաղկում
Նիրհող կեանքի սըրտի ցաւի պարտէզում,
Սըրտիս խորքում ըզգում եմ ցա՞ւ ու կըսկիծ՝
Տառապանքիս արծակած նոր բողբոջից.
Կէս գիշերին՝ երբ տառապանքն է ծաղկում։

*
* *

Կէս գիշերին, երբ ասուպներն են ընկնում,
Թըւում է թէ արցունքներ են սնվախնան
Տառապանքից, որ լալիս է երկընքում
Տիեզերքի ցաւա՞ծ սըրտի կեդրոնում.
Կէս գիշերին՝ երբ ասուպներն են ընկնում։

*
* *

Կէս գիշերին, երբ լըռութիւնն է ապրում,
Ինձ թըւում է թէ դարերը խաւարում

Ունկընկիր են տիեզերքին... ու լռվին
Նիրհող կեանքի ապագան են արտասում.
Կէս գիշերին՝ երբ լռութիւնն է ապրում։

*
* *

Կէս գիշերին, երբ հողերն են ճաքճաքում
Անդընդային ահեղաշարժ ցընցումից,
Ինձ թւում է թէ մեռելներն են կանչում
Այրուա՜ծ մաշուա՜ծ սիրելիի կարօտից.
Կէս գիշերին՝ երբ հողերն են ճաքճաքում։

*
* *

Կէս գիշերին, երբ յիշատակն է տընտում,
Երբ հին սիրտը վերյուշներով տառապում,
Ինձ թւում է թէ զոյգ շընթներ են ժընտում
Հեռո՜ւ, հեռո՜ւ հուր աստղերից իմ սընտին.
Կէս գիշերին՝ երբ յիշատակն է տընտում։

*
* *

Կէս գիշերին, երբ փըշերն են հուր ցոլում,
Թւում է թէ մահուան փառքը օրհնելով՝
Փունջ են հիւսում հուր փըշերից խաւարում
Մահի հարսներն դաղարի մօտ սընտերին.
Կէս գիշերին՝ երբ փըշերն են հուր ցոլում։

*
* *

Կէս գիշերին, երբ կընկիծն է բոցավառ
Կարօտի ու յիշատակի անտառում,
Իմ սիրտն անլուռ ահեղ ցաւից խելագար՝
Երգ է երգում անլաց այրող բոցերում,
Կէս գիշերին՝ երբ հընդեհ կայ սընտերում։

*
* *

Կէս գիշերին, երբ կոկոնն է ջրանում՝
Դեռ չընտեսած պայծառ դէմքը արևին,

Ցա՛ւ եմ ըզգում նորա համար իմ սրտում,
Որ չբացուած զոհ գընաց չար հողմերին.
Կէս գիշերին՝ երբ կոկոնն է ջորանում։

*
* *

Կէս գիշերին, երբ ծովերն են քուն մտնում
Դաղրող լացի հեկեկանքը շրթներին,
Ցիշատակաց մոխիրներով լե՛փ լեցուն
Սրտե՛ր ցիշում, որ ա՞խ չե՛ն խակ կարող լալ.
Կէս գիշերին՝ երբ ծովերն են հեծկլտում։

*
* *

Կէս գիշերին, երբ ծայներն են մահանում
Այն սրբազան լռութեան մէջ բացարձակ,
Հեղձամղղուկ իմ լացի ծայնն է փարուում
Մի հի՛ն շիրմի մամռապատ սալ քարին.
Կէս գիշերին՝ երբ ծայներն են մահանում։

*
* *

Կէս գիշերին, երբ ծառերն են քարանում,
Վրտակ ու գետ մութ ձորերում խրլանում,
Թրում է թէ ա՛յդ իսկ պահին է ծընուում
Նո՛ր տառապանք... երբ ամե՛ն բան է ընջում,
Կէս գիշերին՝ երբ ծայն, ծրպտուն է մարում։

*
* *

Կէս գիշերին, երբ մընրրիկն է վազում
Վրրիժախանձ ահեղ երգեր սուլելով,
Վարդին, ծաղկին, բողբոջին եմ մեղքանում՝
Որ անպաշտպան պիտի մեռնին գիշերով,
Կէս գիշերին՝ երբ մընրրիկն է երգում։

*
* *

Կէս գիշերին, երբ լեռներն են երազում
Նուրբ ծիրանի պատմուճանից շողշողուն,

Իմ վէրքերի լերանց շղթան եմ յիշում՝
Որ չընտեսան մի արշալոյս իմ սըրտում.
Կէս գիշերին երբ արշալոյսն է մօտիկ։

*
* *

Կէս գիշերին, երբ յուշերն են սըրտաշարժ,
Երբ կարօտը հուրհուրում է յուշերում,
Թըւում է թէ իմ դէմ կանգնած են անշարժ
Սիրա՜ծ դէմքեր, ու ա՜խ ո՛չ ինչ չեն խօսում.
Կէս գիշերին՝ երբ յուշերն են սըրտաշարժ։

*
* *

Կէս գիշերին, երբ կարօտն է սըրտակէզ,
Հին կարօտը ճանկըռտում է իմ հոգին,
Նորան, որին սիրեցի՝ բայց չունեցայ,
Կ՚ուզեմ որ գայ նըստի մի պահ իմ մօտին.
Կէս գիշերին՝ երբ կարօտն է սըրտակէզ։

*
* *

Կէս գիշերին, երբ լուրերն են տըխրական,
Թըւում է թէ հեռագիր կայ իմ անուան,
Ուր գուժում են հեռո՛ւ հեռո՛ւ աշխարհից՝
Թէ — «Սիրուհիդ վակեց աչերն յաւիտեան». —
Կէս գիշերին՝ երբ լուրերն են տըխրական։

*
* *

ՎԵՐՋԱԲԱՆ

Կէս գիշերին, երբ գործադուլ է աշխարհ,
Հարուստ, աղքատ եղբայրացած մի քընով,
Գիտակցում եմ՝ թէ մահն է լոկ համարդար,
Ուր պառկած են տէր, ծառայ մի անկողնում,
Կէս գիշերին՝ երբ քունն ըստուերն է մահուան։

ԵՐԳԵՐ

(ՅՈՒՇ ՈՒ ՅԻՇԱՏԱԿ)

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ

Օր. Ռ. Բ-ին։

Ես քեզ սիրեցի սիրով անկաշառ,
Առա՛նց համբոյրի, առա՛նց ցանկութեան.
Ինչպէս մի սիրուն վերջալոյս անբառ,
Ինչպէս մի աստղիկ հեռու յաւիտեան։

Եւ դորա՛ համար բոլո՛ր կիներից
Դո՛ւ միակն եղար անմահ ինձ համար.
Քե՛զ են ուղղուում իմ ամեն կլսկիծ,
Լոկ քե՛զ է ծրգտում իմ սիրտն անդադար։

ՄԻ ՀԻՆ ԵՐԳ

Դակկանում ես՝ երբ երգում ես մի հի՛ն երգ,
Ա՛յն երգը հին, որ երգեցինք միասին՝
Երբ թարմ էինք, մեր սըրտերն էլ դեռ անվէրք,
Եւ հաւատում իսկութեանը երազին։

Դու ինձ թողիր... փորձեցիր ինձ մոռանալ...
Բայց ջկըրցա՛ր, ու երգում ես դե՛ռ այսօր
Մեր երգը հի՛ն, ա՛խ, ինչպէս ողբ կորուսեալ
Նրչանկութեան՝ որ ունէիր դու մի օր։

Ա՛Յն ՎԵՐՋԱԼՈՅՍԻՑ

Ա՛յն վերջալոյսից՝ ինչ դու թողի՛ր ինձ,
Ու ինչպէս թլուչնիկ սլլացար յանկարծ,
Ա՛խ, ինձ թլուում է՝ թէ սըրտիս խորքից
Կարապն է երգում, կարապը յոգնած.

Ա՛յն վերջալոյսից՝ ինչ դու թողի՛ր ինձ։

11

ՁՈՐՑԱ՛Ծ ՄԻ ԹԵՐԹ

Սիրած գիրքըդ լուռ թերթելիս ես զըտայ
Զորցա՛ծ մի թերթ անցա՛ծ զարնան թարմ վարդից.
Քե՛զ յիշելով՝ ես դառնագին լաց եղայ
Ու թըրջեցի արցունքներով կարօտի։

Նորա վերայ մի ամբողջ վէպ կարդացի...
Եւ ուզեցի՝ որ նո՛ր կեանքով նա բոյր տար,
Սըրտիս դըրի... բայց՝ ա՜խ՝ նորան փըշրեցի,
Ու լաց եղայ մանկան նըման դեռ երկա՛ր։

10

ՄԻԱՄԻ՛Տ ՄԱՆՈՒԿ

— «Երջանիկ ես դու», ասացիր մի օր,
Երբ դէմքիս ծաղկած ժըպիտը տեսար.
Դու չըլըսեցի՛ր, սիրտըս սըգաւոր
Քեզ կրծու ծաղրեց այդ խօսքիդ համար։

Ինչո՞ւ չէ. նաև սև՛ գերեզմանի
Վերայ դալար ու վարդեր են բուրում.
Կամ արշալոյսի երփներանգ շողեր
Նաև դիակի ճակատն համբուրում։

Դու ես երջանիկ, միամի՛տ մանուկ,
Դո՛ւ, որ գաղափար չունիս անպատում
Այն խո՛ր տանջանքից, որ ա՜խ միշտ ծածուկ
Արի՛ւն է ծըծում ժըպտողի սըրտում։

Ա՛ՅՆ ՕՐԵՐԸ

Ա՛յն ՝ներմ օրեր կ՚ուզեմ դարձեալ,
Երբ քո քընքուշ ձեռներով
Վարդեր էիր քաղում զոյնզոյն
Սըրտիս դալար պարտէզից։

Ա՛յն վարդ օրեր կ՚ուզեմ կըրկին,
Երբ հայեացքդ վառվըռուն
Արշալոյսներ էր հագցընում
Երազներիս լեռներուն։

Ա՛յն թանկ օրերն՝ ա՜խ՝ վերջապէս,
Երբ ապրում էր իմ հոգում
Քո շունչն անչար, ու ես մի վէս
Ստեղծած էի այս կեանքում։

ԱՄՊԻԿԸ

Դու տեսնո՞ւմ ես պարզ երկընքում
Փոքր ամպիկն այն խե՜ղճ, մոլոր,
Որին արձակ հողմն հալածում
Քըշում կողմեր հեռաւոր։

Ա՛յն սէրս է հէգ, իմ նազելի,
Իմ սուրբ սէրը թառամած,
Որ թափառում վրտարանդի
Քո կոյս սըրտից մերժըւած։

Ես չըգիտեմ, զուցէ երկար
Իմ մահից յետ դու կ՚ապրես,

Եւ իմ սէրն ու անունն իսպառ
Սըրտից, մտքից կը հանես։

Բայց երբ մեռնես, այդ փոքր ամպիկ
Զոյգ արցունքի վերածուած՝
Պիտի ցողէ քարը շիլմիդ,
Այն տեղ չորնայ քարն այրած։

ՓՈԹՈՐԿՈՏ ՅՈՒՇԵՐ

Օր. Կ. Բ—ին

I

Ինչո՞ւ, չըգիտեմ, երբ տեսանք իրար,
Թէպէտ առաջին անգամն էր կեանքում,
Կանգ առանք, անխօս նայեցինք երկար
Իրար աչքի մէջ անթարթ ու խոհուն։

Կարծես թէ ծանօթ լինէինք իրար
Ու կորսընցուցած կեանքի մէջ կըրկին.
Կարծես թէ վաղուց փընտրէինք իրար
Ու մի դիպուածով գըտած վերըստին։

Շատ չըխօսեցինք, բայց շատ նայեցինք
Իրար աչքի մէջ խորունկ կարօտով.
Երբ հըրաժեշտի իրար ձեռք տըվինք,
Ա՛հ, մեր ձայն ու ձեռք դողացին ուժով։

Եւ ինձ թըւում է՝ թէ մեր հոգիներ
Այդ իսկ ըոպէին սիրեցին իրար...
Բայց բաժանուեցինք մենք անյիշատակ.
Է՛հ, այդ է կեանքի վըճիռն անարդար։

II

Զայնը՝ ծանօթ էր սրրտիս խորերին.
Հէնց այդ ձայնն էր որ շեշտով մտերմի
«Սէր» ձայնեց սրրտիս վարդոտ ծորերին,
Եւ վարդ ու դալար արծագանգ տուին։

Կապոյտ աչերը՝ սև մեծ բիբերով
Նոյնպէս ծանօթ էր հոգուս յուշերին.
Այդ աստղիկներն են, որ երկչոտ շողով
Կըսկիծ մ՚են գըրում հոգուս պատերին։

III

Դու նըստել էիր անխօս իմ մօտին,
Ու կոկոն կըրծքիդ ելևէջներից
Կարծես հիւսւում էր այն սուրբ մելոդին՝
Որ միշտ լըսում եմ հոգուս խորերից։

Իսկ ես գինովցած քե՛զ էի նայում...
Դաղար էր առել միտքըս իր գործից.
Լոկ ըզգում էի, որ սիրտըս թաքուն
Սըրտիդ յայտնում էր իր ցաւն ու կըսկիծ։

IV

Լուռ նայում էինք իրար աչքի մէջ,
Եւ քո տիեզերք բիբերի խորքում
Հոգիս տեսնում էր աշխարհնե՛ր անվերջ
Անթառամ սիրոյ վարդ մըթնոլորտում։

Եւ որոնց վերայ խորունկ շեշտերով,
Յաւիտենական սիրոյ երգերով
Ճեմում էր սիրտըս հրպարտ, անտրտում՝
Ինչպէս մի աստուած իր տիեզերքում։

V

Հայեացքիդ խորքում երազն էր նիրհում՝
Մրշտածլոծան սէրը շընչելով.
Շրթներիդ վերայ գարունն էր խաղում
Եղեմեան գարունն իր ալ վարդերով։

Եւ մի՛թէ արժէ՞, որ անվերջ ողբամ
Սիրելիներիս կորուստներն անհաս.
Կամ մի՛թէ արժէ՞, որ մահից զողամ,
Երբ դո՛ւ, դո՛ւ անգամ հող պիտի դառնաս։

VI

Այտերիդ գունատ, հայեացքիդ տրխու՛ր,
Դու նայում էիր դատարկութեան մէջ.
Կարծես լինէիր հոգով անձնատուր
Մի ապրած կեանքի յուշերին անվերջ։

Այդ պահին հոգուս խորքերում թաքուն
Նախանձում էի մարդուն բաղդաւոր,
Ա՜հ, որի համար դու դարձար դրժգուն,
Որին փընտրում էր հայեացքդ ի զո՛ւր։

VII

Կ'ուզէի լինել քո երգը սիրած,
Որ թըրթըռայի շըրթներիդ վերայ.
Կ'ուզէի լինել վարդը կիսաբաց,
Գայի ծաղկելու կոյս կըրծքիդ վերայ։

Կ'ուզէի լինել աղօթքը մաքուր
Որ մըրմընջէի հոգուդ մէջ թաքուն.
Կ'ուզէի լինել մի ըզգացմունք խոր՝
Սըրտիդ կենդրոնում ապրելու անքուն։

Կ'ուզէի լինել մի երազ անուշ՝
Գարնան օրերից ջերմ ու ծաղկազարդ.
Կ'ուզէի լինել մի անմոռաց յուշ՝
Կուսիդ հետ մէկտեղ նիրհելու անզարթ։

VIII

Սիրտըս յոգնած էր, ուզում էր նիրհել
Անհունն կարօտով մի տաք հոգու մէջ.
Կ'ուզէր մոռանալ՝ որ նա բաբախել
Եւ խոր յուզուել էր փոթորկում անվերջ։

Հոգի՛դ հաւանեց, քո գարունն հոգին
Վարդերում թաղուած պալատով բիւրեղ.
Սակայն զըրուած էր դըրան ճակատին՝
— «Վիրտ սըրտերի համար չէ՛ այս տեղ»։ —

Ու թաքուն լացի՝ այրող արցունքով,
Որ յոգնած սիրտըս չունեցաւ մի տեղ

Նիրհելու մի պահ յուշով ու վէրքով
Կուսական հոգուդ պալատում քիւրեղ։

IX

Քեզ կըրկին տեսայ, սև շորերի մէջ,
Թոնաշրհ բարևով անցայ քո մօտից.
Դու կարմըրեցիր, նայեցիր անվերջ,
Մինչև որ կորայ հոծ բազմութեան մէջ։

Այդ պահին տըրտում հայեացքդ էր խօսում՝
Լուռ հետևելով տենդոտ քայլերիս...
Սիրտըս յետ դառնալ էր ինձ աղերսում,
Սակայն արգիլե՛ց այդ հլպարտ հոգիս։

X

Անգամ մ'էլ տեսանք, ու էլ յաւիտեան
Զե՛նք պատահելու վերըստին իրար.
Ինչպէս աստղիկներ իրարից բաժանն,
Ինչպէս ծաղիկներ արօտի օտար։

Քեզանով խորունկ մի վէրք բացուեցաւ
Սակայն իմ սըրտի ծալքերում խորին.
Քեզանով բըլուր մի աւելացաւ
Ցիշատակներիս լերանց շղթային։

ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴԸ

11

Ա՛ռ այս վարդն էլ, իբրև վերջին յիշատակ
Մեր մլտերիմ ծանօթութեան այս կեանքում.
Բաժանւում են ճանապարհ ու ընպատակ
Այս օրուանից մեզի համար աշխարհում։

Նա այրա՜ծ է, բայց ընդունի՛ր, նազելիս,
Նա այրած է իմ սեփական արցունքով.
Նա ճըմլա՜ծ է, բայց մի՛ մերժիր, նազելիս,
Ե՛ս եմ ճըմլել երկա՜ր սրտիս սեղմելով։

Ա՛ռ այս վարդն էլ, ու դիր սիրա՜ծ գըրքիդ մէջ,
Որ նա բուրէ յիշատակըս՝ երբ թերթես,
Ինձ յիշելով խորասուզուած հոգուդ մէջ՝
Թե՞ղճ ճամբորդիս համար լըռին աղօթես։

ՔԵԶԻ ՀԵՏ ՄԷԿՏԵՂ

10

Երբ անգութ մահը խլէ քեզ ինձնից,
Դու դագաղ հագած պառկիս հողին տակ,
Զերկընչիս բընաւ այն մութ աշխարհից,
Հողին տակ քեզի չեմ թողնիլ մենակ։

Քեզի հետ մէկտեղ կ'իջնեն գերեզման
Ջերմ արցունքները իմ կըսկըծավառ.
Ու կը զարդարեն ատղերով պայծառ
Մահուան աշխարհի երկինքդ խաւար։

Քեզի հետ մէկտեղ կ'իջնեն գերեզման
Իմ խո՜ր երգերը սիրո՜ տ ու վիրո՜ տ.
Դագաղիդ շուրջը լուռ կը պըլպըլան
Ինչպէս կերոններ շողերով թախծոտ։

Քեզի հետ մէկտեղ կ'իջնէ գերեզման
Եւ անենեց սէրըս. դագաղիդ առաջ
Դըժգոյն շողերում նըստած անխափան
Կը հըսկէ անիսօս մօր պէս ցաւատանջ։

Ու երբոր կու գամ քո ծոցը կըրկին,
Թո՛ղ հանգչին աստղեր, մարին կերոններ,
Որ լուռ խաւարում իրարու կողքին
Նիրհենք անվըրդով ես, դու և մեր սէր։

ՆՈՃԵԱՑ ՀՈՎՏՈՒՄ

Գերեզմանիդ մէջ, երբ նոճեաց հովտում
Մենա՞կ ու տըրտում ալըտոյտի ելնես,
Օ՜, իմ վառ սէրը՝ նոճեաց սաղարթում
Պիտի շողշողայ արծաթ լուսնի պէս։

Նա գերեզմանիդ անաստղ երկընքում
Թախծի ամպերից պիտի հըսկէ քեզ.
Քո անդըրշիրմեան մենակեաց կեանքում
Քեզ պիտի լինի ընկեր կարեկէց։

ՍԷՐՍ

Սէրըս զեփիւռ մ'էր խընկաբոյր գարնայնի,
Գուրգուրում էր փայփայելով, գըգուելով
Սըրտիդ մատա՞ղ ծաղիկները ծիրանի. —
Սէրըս զեփիւռ մ'էր երփներանգ գարնայնի։

Ցա՜ւ կերցուցիր, սէրըս դարձաւ մըրրիկ
Ու խամրեցուց ծաղիկները քո կոկոն,

Ամայացուց բուրաստանը քո գողտրիկ։ —
Ցա՜ւ կերցուցիր, սէրըս դարձաւ մրրրիկ։

Սակայն այսօր, խոսքան սրտիդ մոխրին մէջ
Սէրըս ինչպէս մի անմահ ոգի է սողում,
Ուտում սիրտը, խո՜ր վէրքերը քրքրրում,
Ու մե՜ծ ցաւից հոգիդ հիմքից է գողում։

ՀՐԴԵՀԸ

Կայծեր ծրգիր հայեացքովդ սրտիս մէջ
Եւ հեռացար գիշերային գոտի պէս.
Հրդե՜հ ընկաւ, հրդե՜հ սեղ ու սնշէջ,
Վամբիրի պէս սրտիս հիւթը նա ծրծեց։

Հրդեհին մէջ մոխի՜ր դարձան վարդ, շուշան,
Որոնց վերայ երանութիւնն էր ցօղուած.
Հրդեհին մէջ հալեցան մի ծուլուեցան
Երկաթ, կապար իմ ցաւ ու վիշտ մոռացուած։

Հրդեհին մէջ հրսկայ սիւնի վերածուան
Երկաթ, կապար իմ ցաւ ու վիշտ. և կրծկած
Սրտիս վիրա՜տ կենդրոնի մէջ խրուեցան,
Իբրև կոթող՝ բրռնաւորիդ նշխարուած։

ՎԵՐՀԱՆԴԻՊՈՒՄՆ

Մենք բաժանուեցինք, տարիներ անցան...
Ու յանկարծ մի օր ա՛յն խսկ լանափում,
Ուր մեր երազի վարդերը սնցան,
Իրար պատահում ու կանգ ենք առնում։

Ես այո՛, բայց նա՛, նա շա՛տ էր փոխուել,
Աչերը պըղտո՛ր, այտերը գունա՛տ.
Վարդագոյնի տեղ սեւ՛ը էր հագել,
Չէ՛ր կըրում ո՛չ վարդ, ո՛չ մանեակ, ո՛չ զարդ։

Նայում ենք իրար, նայում ենք անխօս...
Յանկարծ յուսահատ ուժգին ցընցումով
Նա յե՛տ է դառնում... խելագարի պէս
Արագ վազում է՝ տունը տալով։

Նայում եմ նորան, նայո՛ւմ եմ անվերջ,
Անբացատրելի մի ժըպիտ դէմքիս...
Յետոյ հասկացայ, որ այն պահին մէջ
Խելագար մ՚էի ես էլ նորա պէս...։

ԴԵՌ ՇԱ՛Տ ՊԻՏԻ ԼԱՍ

Դեռ շա՛տ պիտի լաս, ծո՛վ պիտի կապէ
Արցունքը խուցիդ մէջ մըշտատըրտում.
Ինձ պիտի յիշես, վիհ պիտի փորէ
Իմ յիշատակը սըրտիդ վէրքերում։

Ես քեզի համար մի պահ մոռացայ
Ամենաթանկը կեանքում ինձ համար.
Քո սիրուդ համար մա՛յրըս մոռացայ,
Դարձեա՛լ ուրիշի դու կինը դարձար։

Դեռ շա՛տ պիտի լաս, ծո՛վ պիտի կապէ
Արցունքը խուցիդ մէջ մըշտատըրտում.
Իմ յիշատակը վիհ պիտի փորէ
Սըրտիդ կըսկըծո՛ւն ու խո՛ր վէրքերում։

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐԸ

Արաբին նըման յարգը չըգիտցար
Իմ սըրտում գըտած մարգարիտներիդ.
Մի կըտո՛ր հացի հետը փոխեցիր,
Այդպէս երջանիկ լինել կարծեցիր։

Եւ երբ տարիներ այժըմ անցել են,
Նոր մարգարիտներ գըտնելու յուսով
Բաղխում ես սիրտըս. սակայն փակուել են
Նորա բաց դըռներ լեռ փականքներով։

ՎԱՐԴԵՐ ՈՒՆԷԻ

Վարդեր ունէի սըրտիս պարտէզում,
Բայց թառամեցան ցաւի մըրըրկում.
Մի կոկոն սակայն՝ որ ո՞չ բացուեցաւ,
Բուրում էր սըրտիս լերկ անապատում։

Ա՜խ, այս սև՛ գիշեր նա՛ էլ խամրեցաւ,
Թառամեց սըրտիս և՛ վարդը վերջին.
Է՛լ այս օրուանից անվարդ իմ սըրտում
Կը թընդայ միա՛յն սոյլը մըրըրկին։

ՎԵՐՋԻ՛Ն ԱՆԳԱՄ

Թո՛ղ որ հոսին վերջի՛ն անգամ
Մեր արցունքներ միասին.
Էլ այսուհետ մինչև դամբան
Ապրելու ենք առանձին։

Ես մըրըրկում ու գիշերում
Ցաւի երգը շըրթներիս,
Դու շողի մէջ, ծաղկի ծոցում
Ամրան անհոգ թիթռան պէս։

Թո՛ղ, թո՛ղ հոսեն վերջին անգամ
Մեր արցունքներ միասին,
Որ՝ ա՜խ՝ ջընջեն խպառ նոքա
Ցուրտ յիշատակն երազին։

---

10 ԵՍ ՔԵԶ ՀԵՏ ԿՈՒ ԳԱՄ

Օ՜, մի՛ սարսափիր մահուան ճանկերից,
Ես քե՜զ հետ կու գամ, չե՛մ թողնիլ մենակ.
Այս բազուկները՝ որ քեզ մի՛շտ հըսկեց,
Քեզ կը պաշտպանէ՛ և մահուան դիմաց։

Օ՜, մի՛ սարսափիր մահուան խաւարից,
Ես քե՜զ հետ կու գա՛մ, չե՛մ թողնիլ մենակ.
Այս սիրտը՝ որ քեզ մի՛շտ առաջնորդեց,
Քեզի ըլլս կու տայ և՛ մութ հողին տակ։

---

10 ՄԻ՛ ՏԽՐԻՐ

Մի՛ տըխրիր՝ որ մենք յոգնա՜ծ ենք այսպէս
Ամպո՜տ երկնի տակ, մըթնում ու հողմում.
Որքան շա՛տ յոգնինք, անգին նազելիս,
Այնքան էլ անո՜ւշ կը քընինք հողում։

Ե՛կ, ձեռք ձեռքի տանք ու քայլենք յամառ
Դէպի նըպատակ մըթնում ու հողմում.

Մինչև վերջին շունչ յոգնի՛նք անդադար,
Որ ամենից խո՛ր մե՛նք քընինք հողում։

ՊԱՏՐԱՆՔՆԵՐՍ

11

Երազիս մէջ յաճախ էին խոստացել
Պատրանքները մի գիշեր ինձ այցելել.
Պատրանքնե՛ր ըս, որ վարդ էին ու շուշան,
Պատրանքնե՛ր ըս, որ ձեռքերով մէջ թոշնան...

Կէս գիշեր էր, եկան ·նոքա շա՛տ յոգնած.
Հեռուների՛ց եկել էին մո՛ւթ ճամբով.
Կարօտագին համբուրուեցինք եղանք լաց,
Քե՛զ յիշեցինք ամբողջ գիշերն արցունքով։

ԱՇՈՒՆ

11

Թորհըրդաւո՛ր մի լռութիւն է տիրում,
Տարօրինակ անո՛ւշ ժըպտում է արև.
Ծաղիկները խոտերի մէջ ընկըղմում.
Լուռ ընկնում են ծառից սաղարթ ու տերև...

Իմ կոպերն էլ ծանրանում են ու փակւում,
Սիրտըս հանդարտ յամրացնում է իր զարկեր.
Մի խո՛ր կարօտ կ'անցնի հոգուս խորքերում.
Կ'ուզե՛մ պառկիլ հանգի՛ստ ինչպէս ծաղիկներ։

ԱՄՐԱՆ ՄԻ ԵՐԵԿՈՅ

10

Լո՛ւռ երեկոյ էր. մենք նըստած էինք
Ծիրանի հագած պարտէզում հանդարտ.

Խո՜ր լռութեան մէջ մենք նայում էինք
Իրար աչքի մէջ երկա՜ր ու անթա՜թ։

Ո՛չ խօսք, ո՛չ ժըպիտ, ո՛չ արցունք, ո՛չ ձայն...
Միայն թէ արագ մենք շընչում էինք.
Վերջին շողերն էլ մութի մէջ հանգան...
Մենք նո՛յն դիրքի մէջ դեռ նայում էինք։

ՍՐՏԻՍ ՇԵՇՏԵՐԸ

Տե՛ս մըրըրիկը զարնում է կըրկին
Տանջանքի երգը խորհո՜ն գիշերով.
Ալիքը ծովում, շանթը ամպերում
Արձագանգ կու տան նորա խոր երգին։

Իմ սիրտը նո՛յնպէս երգում է մէկտեղ.
Նա էլ մի ծո՜վ է, ծո՜վ տանջանքների.
Մըրըրկից, շանթից, ալիքից ահեղ
Նորա՛ շեշտերն են հընչում ամեհի։

ԱՆՏԱՌԻ ԵՐԳԸ

«Ցա՜ւ» — մրմընջում է անտառն օրօրուն
Սօսափիւններով խորո՜ւնկ ու ազդու.
Նորա մօտ կանգնած անխօս ու տըրտում՝
Լըսում ենք ցաւի երգը ես ու դու։

Եւ կամաց կամաց մեր էլ սըրտերում
Զարթնում են ցաւի ակկորդներ տարտամ.
Ու ձայնակցում ենք երգերով տըրտում
Անտառի երգին յաւիտենական։

ԱՍԱ՛ ԻՆՁ, Ո՞ՒՐ ԵՆ

Ասա՛ ինձ, ո՞ւր են վարդերը այտիդ,
Մաքուր շիթերը քո լիճ աչերի.
Ասա՛ ինձ, ո՞ւր է գանգուրը ճակտիդ,
Եղեմ բուրմունքը քո լար շրթների։

Ա՜խ, այն ո՞ր անգութ խլեց քո վարդեր,
Զորացուց շիթը, փետեց քո գանգուր.
Ո՞ր մեղուն ծծեց քո անո՜ւշ շրթներ,
Քեզ դարձուց անբո՜յր, թշուա՜ռ ու տխո՜ւր։

ԳՈՆԷ ՄԻ ԳԻՇԵՐ

Գոնէ մի գիշեր կ'ուզէի անլաց
Անկողին մտնել անթախիծ սրտով.
Եւ սպրած կեանքս մի պահ մոռացած՝
Մինչև առաւօտ նիրհել անվրդով։

Գոնէ մի գիշեր! բայց նա չէ՛ գալու
Քանի խրփում է սիրտս յուշերով,
Քանի ծո՜վ ծոցում ողբերով ազդու
Վէրքերս են լալիս անգա՛մ գիշերով։

ԴՈՒ ՍԻՐՈՒՄ ԵՍ

Դու սիրում ես մրրրիկներ,
Շանթի շողիւնն ամպերում.
Դու սիրում ես ալեաց երգեր
Փոթորկայոյզ ծովերում։

Դու սիրում ես յիշատակներ
Մոխիր դարձած օրերից,
Դու սիրում ես խորին վէրքեր
Բաղդի, սիրոյ սրտերից։

Դորա՛ համար, անգին մանուկ,
Արի՛ ապրիր իմ սրտում.
Քո սիրածներ պիտի գտնես
Մի՛շտ այդ ցաւի արգանդում։

Օ՜, ԴՈՒ ԶԳԻՏԵՍ

Ինչո՞ւ ես գունատ դու դարձեալ այդպէս.
Շատ լա՞ց ես եղել սիրոյ տանջանքում,
Թէ այցելել են երազներ պէս պէս
Քո գարուն բաղդից, որ խամրաւ կեանքում։

Օ՜, դու չըգիտես, թանկագին մանուկ,
Թէ ո՜րքան խո՛ր է ազդում իմ հոգուն,
Երբ կոկոն վարդն եմ ես տեսնում դալուկ,
Երբ նա խամրում է մրրրրկի գրկում։

ԴԺԳՈՅՆ ՇՈՒՇԱՆԸ

Օ՜, ինչ սիրուն է դէմքդ զարդարել
Սիրոյ դալուկը դըժգոյն շուշանով.
Ի՜նչքան գեղեցիկ ու վեհ ես դարձել
Սիրոյ տանջանքի այդ սուրբ նշանով։

Տե՛ս, նաև ցօղ կայ շուշանի վերայ,
Երկինք աչերդդ արցունք են կաթել.

Օ՜, ես կ'ուզէի քո դէմքին վերայ՝
Շուշանի ծոցում՝ հոգիս քուն դընել։

Կ'ՈՒԶԷԻ ՔԵԶ ՀԵՏ

Կ'ուզէի քեզ հետ մի նաւակ ընստել
Ու թիավարել լուռ ծովի վերայ,
Երբ պարզ երկընքում լուսինն է ծագել,
Ու հանդարտ շողում քուն ջրի վերայ։

Քար լռութեան մէջ՝ կ'ուզէի միայն
Թիանց հետ սրտիս զարկերը լսուէր.
Լուսնի շողի տակ՝ մեր հեղուկ նամբան
Կ'ուզէի որ՝ ա՜խ՝ յաւիտեան ծրգուէր։

ԱՍԱ՛, ՀՈՎԻ՛Կ

Ասա՛ դու ինձ, անո՜ւշ հովիկ,
Ո՞ր աշխարհն է գեղեցիկ.
Ո՞ր աշխարհն է, ուր ամեն ժամ
Վարդն է բուրում անթառամ։

Ո՞ր աշխարհն է ուր պաղ վըտակ
Դալարապատ հովտի տակ
Սիրոյ երգն է լուռ մրմընջում,
Ափերին բաղդն է ընընջում։

Ո՞ր աշխարհն է, ուր կապուտակ
Երկինքն է միշտ հաշտ ու տաք.
Ո՞ր աշխարհն է, աչերը ուր
Ցօղի նըման են մաքուր։

Ո՞ր աշխարհն է, ուր անվախճան
Սէրն է սուրբ, անզուտաճան.
Ո՞ր աշխարհն է, ուր արտասուք
Չէ հոսեցնում մարդ ծածուկ։

Ո՞ր աշխարհն է, ո՛ւր միտք ու սիրտ
Չեն հալածւում այսքան քիրտ.
Ո՞ր աշխարհն է, ո՛ւր կուռ շղթան
Անծանօթ է յաւիտեան։

Ասա՛ դու ինձ, անո՛ւշ հովիկ,
Ճանաչո՞ւմ ես այդ աշխարհ.
Ա՜խ, թէ երթաս, սիրո՛ւն հովիկ,
Իմ կարօտն էլ հետդ տա՛ր։

ՄՌԱ՛ՅԼ Է ՀՈԳԻՍ

Մրա՛յլ է հոգիս; ինչպէս շիկավառ
Շանթերով յղի ամպը սևաթոյր.
Ցրտում է սիրտս, ա՜խ, ինչպէս անփառ
Աշնան երեկոն ցուրտ ու մահամբոյր։

Իսկ դո՛ւ, որ հեռո՛ւ աստղերի խորքում՝
Յաւիտենական լոյսի ծովերում
Լողում ես անվիշտ, արդեօք չե՞ս առնում
Մրռունչը հոգուս՝ որ քե՛զ է կանչում։

Օ՜, ե՛կ, սիրեկան, ե՛կ և ինձ փլուկիր,
Ես ընկղմում եմ տրտմութեան ծովում.
Վառ ժպտից հիւսուած ծիածան կապիր
Սրտիս ու հոգուս թախծի ամպերում։

ԹՈ՛ՅԼ ՏՈՒՐ

10

Թո՛յլ տուր, որ մի պահ հանգչի քո գըրկում
Իմ յոգնած գըլուխն իր մութ մտքերով.
Թո՛ղ որ այդ յոյզի կո՞յս տիեզերքում
Նա խորասուզուի վայելքից գինով։

Թոյլ տո՛ւր, սիրեկան, թոյլ տուր որ մի պահ
Աստուածների հետ կենակցիմ անվիշտ.
Մոռացած անցեալ, ապագայ ու մահ,
Քո անո՞ւշ գըրկում ես նիրհեմ հանգի՞ստ։

ՊԱՏՄԵՑԷ՛Ք ՆՈՐԱՆ

10

Թըռէ՛ք դուք, գարնան զեփիւռներ անուշ,
Դէպի հեռաւոր աշխարհն այն ազատ,
Ուր իմ սիրուհին ապրում է անփուշ
Հայրենի երկրում ջերմ ու հարազատ։

Պատմեցէ՛ք նորան, թէ ինչպէս տըրտում
Շըրջազայում եմ անտառում մենակ.
Թէ ինչպէս լըռիկ արցունք եմ թափում
Այն քաջածանօթ հին կաղնիի տակ։

Պատմեցէ՛ք նորան, թէ ինչպէս թախծոտ
Աչերս եմ յառում՝ լուռ վերջալուսին՝
Ջըրարբի հովտին վարդոտ ու ծաղկոտ,
Ուր նըստում էինք մենք մերթ միասին։

Պատմեցէ՛ք նորան, թէ ինչպէս երկար
Գիշերներն անքուն նըստած անկողնում,
Իր յիշատակն եմ ողբում անդադար,
Եւ իրեն համար անենգ աղօթում։

Թողէ՛ք դուք, զարնան անո՞ւշ զեփիւռներ,
Դէպի սիրուհիս հայրենի աշխարհ,
Անցէ՛ք շուտափոյթ ծովե՛ր ու լեռներ՝
Արցունքս ու մրմունջ հասցրէք նորան։

ԹՈՂ ՄԻ ԱՆԳԱՄ ԷԼ

10

Ներիր, որ այնքան չունեցայ ես ուժ
Կատարելու քեզ իմ տրված երդում.
Եւ ահա այսօր հի՛ն վէրքովս անբուժ
Անցած սար ու ծով քե՛զ եմ պատահում։

Թո՛ղ մի անգամ էլ աչերիդ նայեմ,
Անո՞ւշ աչերիդ խորո՞ւնկ կարօտով.
Ու վերջին անգամ թո՛ղ լալով պատմեմ՝
Թէ ինչե՛ր անցան կեանքում իմ զրկով։

Կ'ՈՒԶԷԻ ԳԻՏՆԱԼ

10

Կ'ուզէի գիտնալ, թէ արդեօք դո՞ւն էլ
Մըտաբերում ես ինձ վերջալոյսին,
Որի հետ այնքան յուշեր են կապուել
Անցա՜ծ օրերից ապրա՜ծ միասին։

Կամ արդեօք դո՞ւն էլ խոր քընում յանախ
Լացի, ծիծաղի ձայներ ես առնում,
Անցեալում հընչած մեր լացն ու ծիծաղ!
Ու սիրտդ յանկարծ ինձ չի՞ կարօտում։

ՄՈՌԱՑԻՐ ԸՆԴ ՄԻՇՏ

Օ՜, անշո՛ւշտ դու ինձ դեռ չե՛ս մոռացած,
Որ ամեն գիշեր միենչև առաւօտ
Ինձ թելում է՝ թէ նրստած բարձիս մօտ,
Ծուլ հեծկլտում ես գլուխդս գրկած։

Օ՜, անշո՛ւշտ դու ինձ դեռ չե՛ս մոռացած!
Բայց աղերսում եմ, մոռացիր ընդ միշտ.
Սէր ու բաղդ մարան, լոկ քունը մընաց.
Գէթ այդ մի՛ խլիր, գէթ այդ թող հանգիստ։

ՅԻՇԱՏԱ՛ԿԴ

Երբ ես մենա՛կ կեանքի կըռուում մահաբեր
Շարժում էի բազուկներդս դէպ առաջ,
Ամե՛ն քայլում յիշատա՛կդ էր ինձ ընկեր,
Ո՛ւժ էր տալիս ինձ, մղում էր միշտ առաջ։

Եւ երբ վիրոտ ընկած կըռուի դաշտերում՝
Ահեղ ցաւից քուն չէր գալիս աչքերիս,
Յիշատա՛կդ էր, որ ինձ օրօր էր երգում՝
Վիրակապներ հիւսելով խո՛ր վէրքերիս։

Իսկ այսուհետ ես մեն—մենակ եմ մընում,
Ցոգնա՛ծ բազկով, ցաւա՛ծ սըրտով փո՛ւշ կեանքում.
Ահեղ կըռւում, ա՜խ, մեն—մենակ եմ մընում.
— Յիշատա՛կդ, ա՛հ, նա մոխի՛ր է հագնում։

ԴՈՒ ԼԱ՞Ց ԵՍ ԵՂԵԼ

Դու լա՞ց ես եղել, ա՛յդ ինձ մատնում են
Քո խոնաւափայլ աչերը տըխուր.
Դու լա՞ց ես եղել, ա՛յդ ինձ պատմում են
Արցունքից հանգած քո այտերը հուր։

Դու լա՞ց ես եղել. ա՞խ, արդեօք կըրկի՞ն
Զարթե՛լ է անցա՞ծ օրերից սիրուն
Անդա՞ռ կորուստիդ յուշը ցաւագին,
Ու պատճա՞ռ դարձել քո արցունքներուն։

ԼՈՒՍՆԻ ՇՈՂԻ ՏԱԿ

Մենք նըստել էինք անտառի խորքում
Դալարի վերայ մո՛ւթ ըստուերներում.
Լուռ էր մեր շուրջը. քուն էին լինում
Ծառ ու ծաղիկներ լուսնի շողերում։

Լուռ էինք և մենք, չէ՛ինք յանդգնում
Անտառի անդորը նիրհը վըրդովել.
Ու կարծես մե՛նք էլ մեր հոգում թաքուն
Կարո՞ղ ըզգայինք ծաղկի պէս նիրհել։

ՔԵԶ ՊԻՏԻ ՅԻՇԵ՛Մ

Քեզ պիտի յիշե՛մ, քանի իմ սըրտում
Քո տրւած վէրքի՛ցն արիւն է գալիս.
Քեզ պիտի յիշե՛մ, քանի իմ հոգում
Քո երգած երգն է արձագանգ տալիս։

Քեզ պիտի յիշե՛մ, քանի իմ մըտքում
Յիշողութիւնը թարմ է և անբութ.
Քեզ պիտի յիշե՛մ, քանի չեմ մըտել
Յուշով ու վէրքով գերեզմանը մութ։

ՍԵՂՄԻ՛Ր ԻՆՁ, ՍԵՂՄԻ՛Ր

Սեղմի՛ր ինձ, սեղմի՛ր քո կըրծքին ամուր,
Որ մահը մեր մէջ չըկըրնայ սողալ,
Քանի մեր սըրտեր մաշուա՜ծ ու տըխո՜ւր՝
Դեռ ընդունա՛կ են յուզուել ու դողալ։

Ըշտապի՛ր, հոգեա՛կ, տե՛ս ուշի ուշով՝
Մահը երկուսիս մէջ տե՛ղ է փընտրում.
Սեղմի՛ր ինձ կըրծքիդ բովանդա՛կ ուժով,
Որ տեղ չըմընա՛յ մահուան անխընդում։

ՎԵՐՅՈՒՇ

Յիշո՞ւմ ես արդեօք դեռ այն վարդ օրեր,
Երբ ամե՛ն անգամ լո՜ւռ վերչալուսին
Շընչագայելու կ'երթայինք ծորեր՝
Իրար թև մըտած ես, դու միասին։

Մերթ երգում էի մի հի՛ն երգ տըխուր,
Դու լըսում էիր արցունքըդ զըսպած.
Տենդոտ շարժումով իմ թևը ամուր
Լուռ սեղմում էիր քո սըրտին յուզուած։

Եւ ա՛յսօր միայն գիտակցում եմ ես,
Երբ երազներըս տարտըղնեց քամին,

Թէ ինչո՞ւ թևքս քո սրտին այնպէս
Պինդ սեղմում էիր իմ երգած պահին։

ՄԵՐ ՍՐՏԵՐԸ

Թո՛ղ մեր սրտերը շողան իրար քով՝
Ինչպէս քոյր աստղեր բաղդի երկնքում,
Քանի դեռ սիրոյ հանդարտ հոսանքով
Մենք միասին ենք դէպի ափ ծգտում։

Թո՛ղ մեր սրտերը վառին իրար քով՝
Ինչպէս կերոններ ցուրտ ճաճանչներով,
Երբ ծերացել ենք, պըղտոր արցունքով
Ողբում մեր խամրած սէրն ալ վարդերով։

Ու թո՛ղ մեր սրտեր մընան իրար քով՝
Ինչպէս բուրվառներ խոնա՜ւ հողի տակ.
Մեր աճիւնի մօտ թո՛ղ այրին մահով
Նոցա պարփակած վէրքն ու յիշատակ։

ՄԻ ՓՈՒՆՋ ԿՍԿԻԾ

Մի փունջ կըսկիծ նըվիրեցիր
Այրի սըրտիս սըգաւոր.
Նորա վերայ սըրըսկեցիր
Ցօղեր աղի ու պըղտոր։

Եւ այդպէսով դու դարձրիր
Տըւած փունջըդ անթառամ.
Ա՜խ, այդպէսով ըստիպեցիր
Սըրտիս սըգալ յաւիտեան։

ՅԻՇԻՐ ԻՄ ՍԻՐՏԸ

Յիշի՛ր իմ սիրտը, երբ կէս գիշերին
Գերեզմաններից ծայներ ես առնում,
Երբ ալէծածան ծովի երեսին
Մութ մըրըրիկն է շաչում ու ոռնում։

Օ՜, յիշի՛ր իմ սիրտն այդ պահին առեղ,
Որ մութ մըրըրկում յոգնա՜ծ զարկերով
Մահուան համերգն է երգում միատեղ,
Հողի հետ ողբում անլա՛ց կըսկիծով։

ԳԱԼՈՒ Է ՄԻ ՕՐ

Գալու է մի օր, երբ գերեզմանիս
Վերայով հանդարտ սահում է վըտակ՝
Իր մըրմունջներով քաղցր ու մանկական,
Պաղպաջուն ջըրով վըճի՛տ ու յըստակ։

Գուցէ և ծաղկին նորա ափերին
Դալար վարդիներ, վառ ծաղկունք գոյնգոյն,
Եւ արևատաք օրերին՝ ուռին
Սուզէ նորա մէջ ոստերը ճըկուն։

Եւ ո՛չ ոք պիտի կըրնայ գուշակել՝
Որ վըտակի տակ մի սիրտ է թաղուել.
Մի սի՛րտ, որ լի է անմահ վէրքերով,
Մի կուրծք՝ յաւիտեան վառ խարոյկներով։

Կ'ՈՒԶԷԻ ԳԻՏՆԱԼ

Կ'ուզէի գիտնալ, թէ արդեօք այժմ էլ,
Երբ առաւօտուն զարթնում ես քընից,
Ցատկում ես կայտառ, ըսկըսում երգել
Գարնան օրերից, սիրուց ու բաղդից,

Թէ անքուն աչքով ես դու ողջունում
Պայծառ արևի շողերը ժըպտուն,
Եւ ցաւած սըրտով ողբեր մըրմընջում
Զըքացա՛ծ սիրոյ և բաղդի գըլխուն։

ԴԱՐԶԵԱԼ ՏԽՐԵՑԻՐ

Դարձեա՛լ տըխրեցիր, աչերըդ կըրկին
Թըրջեցան լըռին արցունքից թաքուն.
Դարձեա՛լ տըխրեցիր, ու ա՜խ վերըստին
Լուսացնելու ես այս գիշերն անքուն։

Դարձեալ տըխրեցիր... Ասա՛ վերջապէս,
Ի՞նչ յիշատակ է ցաւեցնում հոգիդ.
Ի՞նչ կարմիր յուշ է, որ զարթելուն պէս
Անգամ քուն լինել չի՛ թողնում հէգիդ։

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՍԷՐ

Դու ինձ սիրեցիր, ու այն օրերում
Աշխատում էիր մի՛շտ նոր վէրքեր տալ.
Բայց ապրում էիր դարձեալ իմ սըրտում,
Քեզ սիրում էի ողջ հոգով դարձեալ։

Դու ինձ մոռացար ու կորար կեանքում,
Անգա՛մ քո հասցէն չուզեցիր ինձ տալ.
Բայց դու ապրո՛ւմ ես դարձեալ իմ սրտում,
Քեզ սիրում եմ նոյն ջերմ սիրով դարձեալ։

Ո՛Չ, ԴՈՒ ՄԵՌԱԾ ՉԵ՛Ս

Օ՛, դու մեռած չե՛ս իմ սրտի համար,
Քո սուրբ յիշատակն ապրում է այն տեղ՝
Ինչպէս մի լուսին ցուրտ ու դալկահար,
Ինչպէս յուշերիս մշտավառ կանթեղ։

Ո՛չ, դու մեռած չե՛ս իմ սրտի համար.
Քո յիշատակի ցաւերգը տրրտում
Դեռ հեծկլտում է հընչիւնով անմար
Հի՛ն երազներիս աւերակներում։

ԼՈՒՌ ՄԵՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Լո՛ւռ մենութեան մէջ ծովի պէս հանդարտ՝
Երբ ծրփում սիրտս յուշերում անվերջ,
Դէպ հեռո՛ւն յառած աչերս անթարթ՝
Քե՛զ եմ ըսպասում լո՛ւռ մենութեան մէջ։

Լո՛ւռ մենութեան մէջ. շուշա՛ն նազելիս,
Ուզում եմ սեղմել քեզ կըրծքիս անվե՛րջ,
Քո առաջ բանալ գաղտնալի հոգիս,
Սրտիս խորքերը – լո՛ւռ մենութեան մէջ։

ԿՈՐՑՐԱ՛Ծ ԸՆԿԵՐՍ

Ընկեր մ՚ունէի, որի հետ յաճախ
Արտասուել էի, ժըպտել, երազել,
Որին կորցըրի ես կեանքում շա՛տ վաղ,
Ու էլ չիմացայ՝ ո՞ղջ էր թէ մեռել։

Սակայն նա երբէ՛ք ինձ չէ՛ մոռացել,
Երազների հետ այցելել է միշտ.
Եւ ամեն անգամ արցունք ենք թափել՝
Լըսելով իրար տառապանք ու վիշտ։

ՄԱՀՈՒԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆԸ

Հոգիներն ինչպէս թոշնա՛ծ շուշաններ՝
Ընկած են նոռեաց ըստուերներին տակ.
Նոցա մօտ ինչպէս կոխուա՛ծ նարգիսներ՝
Վիրաւոր սըրտեր կան կուտակ կուտակ։

Եւ մահուան քամին կապա՛ր երգերով
Յաւիտենական ծանծրոյթն է երգում
Հոգուն ու սըրտին, որոնք իրար քով
Վիշտ ու ցաւ ցընդած՝ մոռացում բուրում։

ՀՈՂԻ ՏԱԿ

Երբ մենք աւարտած այս կեանքի ուղին՝
Անհո՛ւն կլսկրծով մըտնինք գերեզման,
Ա՜խ, արդեօք մե՞նք էլ մոխրին ու հողին
Պիտի աւելցնենք երկու շերտ միայն։

Ի՜նչքան կ՚ուզէի՝ որ մահուանից յետ
Նոճիների մութ ծառաստաններում
Ապրէինք մէկտեղ, յաւե՛րժ իրար հետ,
Ինչպէս թառամած քոյր վարդեր տըրտում։

ԱՄԵ՛Ն ԻՐԻԿՈՒՆ

Ես քեզ տեսնում եմ ամե՛ն իրիկուն
Վերջալոյսի լուռ մարող շողերում.
Եւ ամեն անգամ կարօտով անհուն
Քո նո՜ր լուրերին եմ ես ըսպասում։

Բայց զարմանալի մի ժըպիտ դէմքիդ՝
Երազի նըման սահում ես շուտով,
Եւ ա՜խ ո՛չ մի լուր չե՛ս տալ այն երկրից.
Որին բընակիչ դու դարձար մահով։

ԻՆՁ ՇԱՏ ՑԱՃԱԽ Է ՊԱՏԱՀԵԼ ԽԱԲՈՒԵԼ

Ինձ շատ յաճախ է պատահել խաբուել,
Կարծելով՝ թէ դու դարձեալ իմ մօտին
Նըստած՝ ճակատդդ ճակտիս ես դըրել,
Եւ մըրմընջում ես ծանօթ մելոդին։

Եւ ամեն անգամ, երբ ըսթափուել եմ
Գիտակցել՝ որ դու չըկաս յաւիտեան,
Խըղճուկ որբի պէս մի՜շտ որոնել եմ
Վըշտիս ըսփոփանքն արցունքում միայն։

ԵՐԱԶՆԵՐՍ

Սըրտիս մէջ ահա հընչում են կըրկին
Բաժանման երգեր տըխո՜ւր ու կերկեր.
Ա՜խ, երազներս են, որ հետ մըրըրկին
Զըւում են դէպի հեռաւոր սըրտեր։

Ա՜խ, իմ երազներ, անո՜ւշ երազներ,
Արդեօք ո՞ւմ սըրտում բոյն պիտի դընէք.
Ա՜խ, իմ երազներ, ամո՜ւլ երազներ,
Արդեօք ո՞ւմ համար բաղդ պիտի ծընէք։

ԻՆՁ ՀԵՏԵՒՈՒՄ ԵՍ

Երբ վերջին անգամ քեզ համբուրելով՝
Բաժանւում էի արցունքն աչերիս,
Դու լըռել էիր, տըխո՜ւր հայեացքով
Հետևում միայն դողդոջ քայլերիս։

Մենք բաժանուեցինք հեռո՜ւ ծովերով.
Սակայն աշխարհի ամե՛ն անկիւնում
Ինձ թըւում է՝ թէ մի՛շտ նոյն հայեացքով
Լուռ հետևում ես դու ինձ աննըկուն։

ԲՆԱԶՈՒՐԿ ԹՌՉՆԻԿ

Բընազուրկ եղած թըռչնիկի նըման՝
Եկել պահուել ես իմ թևերի տակ,
Եւ աղերսում ես մի պատըսպարան
Կարճ կեանքի համար իմ սըրտի մէջ տաք։

Սակայն իմ սրտում գիշերաշրջիկ.
Բուերն են վայում, մրրրրիկն ոռնում.
Բընազդ՞ուրկ թռչնիկ, վատաբա՞ղդ թռչնիկ,
Հեռացի՛ր ինձնից, թռի՛ր դէպ հեռո՛ւն։

ՎԱՅՐԻԿ ՄԻ ՀԱՆԳԻՍՏ

Վայրի՛կ մի հանգիստ տո՛ւր ինձ, նազելիս.
Տե՛ս արիւնեցան ոտքերըս բորիկ՝
Խուսափող բաղդի յետից վազելիս.
Յոգնա՛ծ եմ, տո՛ւր ինձ վայրի՛կ մի հանգիստ։

Վայրի՛կ մի հանգիստ, մի նիրջ մոռացման,
Օ՜, մի՛ խընայեր, զրթո՛ռ հազելիս.
Ընդունի՛ր որ մի թռչնիկ մէջ ծրմրան
Քեզնից խընդրում է վայրի՛կ մի հանգիստ։

ԺԱՄԱՆԱ՛Կ Է

Տե՛ս, ծովը կըրկին յուզուեցաւ խորքից՝
Սև՜ ամպեր հագած երկնի տակ կապար.
Պա՛ղ ալիքներն էլ զարթած խոր քընից՝
Երգում են, շաչում, սահում դարեդար։

Օ՜, ժամանա՛կ է, իմ վըշտի ընկեր,
Բանա՛նք մեր կըրծքեր մութ ծովին դէմ, որ
Նոքա էլ իրենց վըրէժի երգեր
Խառնեն մութ ալեաց շաչիւնին հըզօր։

ԱՄԵ՛Ն ԻՐԻԿՈՒՆ

Ամե՛ն իրիկուն հուր վերջալուսին
Անտառ եմ գընում սիրա՜ծ գետափով.
Եւ ինձ թըւում է՝ թէ դու միասին
Գալիս ես ինձ հետ հեզիկ քայլերով,
Ամեն իրիկուն հուր վերջալուսին։

Մըտքիս մէջ յանկարծ խօսում եմ քեզ հետ.
Եւ երբ չե՛մ առնում հարցիս պատասխան,
Ցոգնա՜ծ, յուսահա՜տ դառնում եմ ես յետ՝
Արցունք ցողելով մեր ճամբու վերան,
Երբ մըտքումս յանկարծ խօսում եմ քեզ հետ։

ՕՐԵՐԻՑ Ի ՎԵՐ

Օրերից ի վեր հեծում է քամին
Անհուն կըսկըծի ելևէջներով.
Արդեօք ո՞ր մեռնող հեռու մի աստղի
Մահերգն է սուլում թախծո՜ւ շեշտերով՝
Օրերից ի վեր հեծեծող քամին։

Անհո՜ւն կըսկըծի ելևէջներով
Նա թափառում է աշխարհից աշխարհ.
Սըգաւոր սոյլով, անվե՛ըջ ողբերով
Ցայտնում է մահը մի աստղի օտար,
Աստղերից աստղեր նա թափառելով։

Արդեօք ո՜ըքան սէր, երազ, յիշատակ
Մոխիր են դառնում այն հեռու աստղում,
Որ տիեզերքի մի ծայրում մենակ՝

Կորչում է անհետ, իրեն հետ թաղում
Ո՞րքան սէր, տանջանք, երազ, յիշատակ։

ՍԵՒ ՀՈՂԸ ՄԻԱՑՆ

Ինչպէս չըփակուած վէրքի բերանները՝
Յուշերըս ցաւան այս գիշեր նորից.
Նոցա վերայով երբ համր անցնում էր
Մի երազ հասած հեռու օրերից։

Զարթելիս միայն ըմբռնեցի, որ
Մահը պարզև մ'է՝ ով ունի յուշեր.
Եւ թէ մի սըրտի վէրքերը բոլո՞ը
Սև հողը միայն կարող է բուժել։

ՎԵՐՑՈՒՇ

Ձե՛մ կարող մոռնալ այն երեկոները,
Երբ դու միամիտ հաւատով մանկան
Ինձ տալիս էիր խաղալու թըղթեր՝
Գուշակելու քո անյայտ ապագան։

Դեռ յիշում եմ՝ թէ ինչ անձկութիւնով
Հետևում էիր ծայնիս անդադար.
Թէ ինչպէս արագ թախծով ու ժըպտով
Մըթնում էր դէմքդ կամ փայլում պայծառ։

Այդ կախարդութեան խպառ անտեղեակ,
Ես յայտնում էի թըղթերի բերնով
Քեզ թաքուն սիրող սըրտիս անյատակ
Ըզգացմունքներն ու խղճերը կարգով։

Եւ էլ չըգիտեմ, թէ արդեօք կեանքում
Իրականացնեմ իմ ցանկացածները.
Բայց մատաղ ասպետն այն սեր ու տըրտո՛ւմ
Նո՛յն անմեղ սիրով սիրում է քեզ դեռ։

ԱՍԱ՛ ԻՆՁ, ԻՆՁՈ՞Ի

Ասա՛ ինձ, ինչո՞ւ, երբ ես երգեցի
Մի անբաղդ սիրոյ երգը վըշտածին,
Աչերըդ լեցուան, ու խո՛ր կըսկըծի
Մըթին ամպերը դէմքըդ ծածկեցին։

Ա՞խ, արդեօք դո՞ւն էլ անցած օրերում
Մի անբաղդ սիրով սիրել ես մէկին,
Եւ յիշատակն է այդ մահատըրտում՝
Որ իմ երգի հետ զարթեցաւ կըրկին։

Ե՛Կ, ԻՄ ՍԻՐԵԿԱՆ

Ե՛կ, իմ սիրեկան, և ինձ այց արա,
Ես վըշտի մէջ եմ և անբարեկամ.
Վէրքերի լեռնե՞ր կան սըրտիս վերայ,
Ցաւի մէջ մենա՞կ եմ, ե՛կ սիրեկան։

Ե՛կ, իմ սիրեկան, և շընչիր սըրտիս
Քո գարուն շընչով թարմ ու եղեմեան,
Որ զոնէ մի պահ շընչիդ տակ հովնան
Այրո՛ղ վէրքերըս. ե՛կ, իմ սիրեկան։

ԵՍ ՀԻՒԱՆԴ ԷԻ

Ես հիւանդ էի ու չայցելեցիր,
Եւ թողիր որ իմ հայեացքը տըրտում
Դըրանըս փարուած մընայ անծանօթիր՝
Կարօտելով միշտ քո դէմքին սիրուն։

Օ՜, սև մահը չէր որ այն օրերում
Ծըմլում էր կոկոն իմ սիրտն ու հոգին.
Մահից աւելի ինձ այն էր տանջում՝
Թէ մոռացել ես դու ինձ, թանկագին։

ՄԻԱՄԻՏ ՄԱՆՈՒԿ

Անո՜ւշ վըտակի մանուշակ ափին
Երբ նըստել էինք երկուսով մի օր,
Դու ինձ խընդրեցիր՝ որ իմ տար հոգին
Քո առաջ բանամ գաղտնիքով բոլոր։

Ես ծայն չըտըվի. ու դու կարծեցիր՝
Որ քեզ չե՛մ սիրում սիրով մըտերմի.
Միամի՜տ մանուկ, բաղդատո՜ր մանուկ,
Հէնց դորա՛ համար հոգիս բաց չարի։

ԴՈՒ ՉՀԱՍԿԱՑԱՐ

Օ՜, դու չըտեսար արցունքըս թաքուն,
Երբ մի ծըմրան օր մեր տան առաջով
Դիակառք մ՚էին տանում զարդարուն,
Եւ դու ինձ կըպար քո ամբո՜ղջ ուժով։

Դու չընհասկացար հոգուս այն վիճակ,
Երբ բազուկներիս մէջ քեզի առած՝
Համբուրում էի ու անում կատակ,
Մինչդեռ սրտիս մէջ արիւնն էր սառած։

ՍՐՏԻՍ ԹԱԽԻԾԸ

Որ քեզ մի անգամ վիրաւորել եմ,
Զե՛մ կարող ջնջել այդ իմ յուշերից.
Ու ամե՛ն անգամ երբ մտաբերեմ,
Սիրտըս պատում է մի թաքուն թախիծ։

Ա՛յդ յուշն է միայն ամենի՞ց տըրտում,
Եւ նորա համար որ քեզնից է այդ.
Քեզնի՞ց, որ նըւէր բերիր ինձ կեանքում
Այն բոլո՞րն ինչքան կարող է մի մարդ։

ՔԵԶ ՍՊԱՍԵՑԻ

Քեզ ըսպասեցի երկա՞ր, շա՛տ երկար,
Անտառի խորքում, լըճակի ափին.
Երեկոյացաւ՝ ու դարձեալ չեկար,
Հայեացքըս սառած մընաց քո ճամբին։

Օ՜, լըռութեան մէջ խորո՞ւնկ ու տըխո՞ւր
Ցորձանք էր տալիս լուռ լըճակն այսօր.
Կարծես թէ կըրէր իր խորքում սիրտս, ուր
Սէրըս որբի պէս թափում էր արտասր։

ԾԱՂԻԿՆԵՐԸ

Մի առաւօտ ծաղիկներին հարցրի.
— Արդեօք նոցա նոյնպէս քաղցր է այս աշխարհ,
Կամ թէ ունի՞ն ազգակցութիւն սրտերի.
Արդեօք գիտե՞ն սիրել – սիրուիլ, լալ, յուսալ։

Զրհասկացան նոքա տրւած իմ հարցեր,
Զեփիւռի հետ քրքջացին իմ վերայ.
Մի օր կըրկին երբ ուզեցի այցելել,
Հողմերի հետ չըւել էին այլ աշխարհ։

ԱՌԱՋԻՆ ԻՂՁ

Այցի ելայ մի օր դաշտի հարսներուն՝
Ծառին, խոտին ու ծաղկին,
Որ պատմել տամ կապուտ դաշտից այն սիրուն,
Ուր հուր աստղեր կը ծաղկին։

Կարծես նոքա հասկացան՝ ինձ տեսնելիս՝
Հոգուս կոյս լոյն առաջին,
Ու խուլ ձայնով շշընջեցին ականջիս.
— «Այդ հարցըրու Արարչին»։ —

ՎԵՐՅՈՒՇՆԵՐ

I

Անցա՜ծ զընացա՜ծ օրերից սիրուն
Յուշեր են զարթնում իմ մէջ վերըստին
Ամեն իրիկուն, երբ դառնում եմ տուն
Եւ տեսնում մատղաշ իմ դըրացուհին։

Նա՛ էլ սորա պէս թրուչնիկ մ'էր ուրախ,
Երգ ու կատակի համար կեանք առած.
Բայց երկար չապրեց և լռեց շա՜տ վաղ,
Եւ վաղուց է՝ որ հողումն է պառկած։

II

Աշնան արևի մի շողի նման
Շանթոտ ամպերի պատառուածքներից՝
Տեսաւ թառամող վարդիդ անպաշտպան
Իմ արև սէրը և սաստի՜կ սիրեց։

Բայց հազի՛ւ սիրեց, որ ցաւի ամպեր
Ծածկեցին ընդ միշտ իմ շողն ու արև.
Ա՜խ, հէնց նոյն պահին անձրևն ու հողմեր
Փետրոտում էին քո թերթն ու տերև։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԵՂ

Ասա՛ ինձ՝ ինչո՞ւ, երբ հարցերի քեզ,
Թէ զո՞հ ես կեանքի վրձնից անարդար,
Պատասխանի տեղ այնքան սըրտակէզ
Իմ աչքերի մէջ նայեցիր երկա՜ր։

Կամ արդեօք ինչո՞ւ, երբ հարցերի քեզ՝
Թէ մի վիշտ ունիս կոյս սըրտումդ անմար,
Պատասխանի տեղ այնքան դառնապէս
Բազուկներիս մէջ դու լացիր երկա՜ր։

ՅԻՇԻՐ ԻՆՁ

Յիշի՛ր ինձ՝ երբոր լո՛ւռ վերջալուսին
Մընթընշողի մէջ լոյսերն են հանգում.
Զըմրուխտ երկընքում երբ աստղ ու լուսին
Յոգնա՛ծ աշխարհին օրօր են երգում։

Յիշի՛ր ինձ՝ երբոր կարօտն շեշտով
Գընացքն է սուլում լուռ կէս գիշերին,
Երբ գուժկան բուեր լալկան վայիւնով
Արձագանգ սալիս յոգնա՜ծ սոյլերին։

Յիշի՛ր ինձ՝ երբոր ալէկոծ ծովում
Ալիքն է շաչում փըրփուրը բերնին,
Երբ փոթորիկն էլ խաւարի խորքում
Զայնակցում ալեաց ցասուկի երգին։

Յիշի՛ր ինձ՝ երբոր տըխո՛ւր ու տարտամ
Զանգն է ղողանջում ցո՛ւրտ մառախուղում.
Նազելի՛ս, յիշի՛ր ինձ վերջի՜ն անգամ,
Այդ ժամին կ՚երթամ հանգչելու հողում։

ՓՇՐԱՆՔՆԵՐ

(ԴԵՂԻՆ ՏԵՐԵՒՆԵՐ)

*
* *

Քեզ տեսնում, դու կանգնած ես մշուշում,
Արտասուաթոր կո՜յր աչերդդ ի՛նձ յառած.
Քեզ լսում եմ, իմ անունն ես շշշնչում՝
Բազուկներդդ դէպի ինձի կարկառած։

*
* *

Քեզ տեսնում եմ վերջալուսի շողերում՝
Աշնան վարդից հիւսուած պլսակ ճակատիդ.
Քեզ տեսնում եմ կէս գիշերուան խաւարում,
Ձոր տերևից հիւսուած պլսակ ծեռներիդ։

*
* *

Քեզ տեսնում եմ, հետևում ես իմ քայլին,
Ցաւի վարդի պլդտոր ցողը այտերիդ.
Քեզ լսում եմ, ծայնակցում ես իմ երգին,
Ցաւի երգի հիսնածայնը շրթներիդ։

*
* *

Դու լալիս ես առանձնացած խուցիդ մէջ,
Ա՛յն խուցին մէջ, ուր մենք մի օր միասին
Աստուածների կո՜յս ժըպիտով ժըպտեցինք.
Ուր կարդացինք անո՜ւշ վէպը երազին։

*
* *

— «Նա սէր կեղծեց, փուշ տըւեց ինձ վարդի տեղ».
Օ՜, մի՛ սըտիր, վըշտանո՛ւմ է իմ հոգին.
Մե՛ղք են գործում, մի մեղք անթո՜ղ ու ահեղ,
Դեռ արցունքը չէ՛ չորացել իմ աչքին։

*
* *

Դու երգում ես դեռ քո վարդ սէրն իմ սըրտին,
Ու սարսափով առնում ցաւի արծագանգ.

Է՛հ, սիրելիս, նա հեռացո՛ւց բըլբուլին,
Եւ պահում է այժըմ ցաւի մի թութակ։

*
* *

Մենք խո՞ր լաց եղանք, երբ մըտածեցինք՝
Որ կեանքի վարդը շուտ կը թառամի.
Մենք և՛ լաց եղանք, երբ մըտածեցինք՝
Որ մահուան վարդը երբէք չի ծաղկի։

*
* *

Նեղ ճամբաներում կանգնած միայնակ
Լալիս ես, չիտես ո՞ւր պիտի դիմես.
Ինձ ինչո՞ւ թողիր. դե՞հ այժըմ մենակ
Լալով սրգալով դիմի՛ր ուր կ՚ուզես։

*
* *

Քանի՛ ինձ յիշես՝ սիրտըդ պիտի լայ
Ու յիշատակըս ցաւիդ ամպերում
Դա՛ռն անկման երգեր պիտի որոտայ,
Շանթեր պիտ՚ ցըցէ հոգուդ խորերում։

*
* *

Դալկանում ես, երբ լըսում ես սարսափով՝
Որ քո շուրջը երգս է կըրկնում սմեն բան.
Օ՞, իմ երգը անարա՛տ էր, խո՞ր շեշտով.
Պիտի լըսես գերեզմանի՛դ մէջն անգամ։

*
* *

Թո՛ղ որ հոսին մեր արցունքներ միասին,
Բիւրեղանան մեր աչքերի խակ առաջ.
Օ՞, այդ քարեր երբ հող տանինք միասին,
Մո՛ւթ հողին մէջ նոքա կու տան լոյս առատ։

*
* *

Բուերի հետ դու լալիս ես խաւարում,
Իմ անունը տալիս, ու ինձ կանչում ես.
Կըսկըծասիրտ ես անկողին եմ մըտնում,
Բայց քընում իսկ առնում ծայնը դ, — կանչում ես...

*
* *

Կարօտում ես, ինձ չե՛ս կարող մոռանալ,
Թո՞ր կարօտը ծո՞վ է կապել քո սըրտում.
Օ՜, խի՛ստ կ'ուզես անյիշատա՛կ հեռանալ,
Յիշատա՞կըս բայց անմա՛հ է քո սըրտում։

*
* *

Դու քանդեցիր պալատները երազիս,
Կըրակ տըւիր դալար յոյսիս, վարդ սիրուս.
Ու այդպէսով շէն աշխարհը տաք սըրտիս
Աւերակով, մոխիրներով ծածկեցիր։

*
* *

Թո՛ղ հոսի պըղտոր արցունքը կաթ կաթ
Քո յուսաթափուր կուրցա՜ծ աչերից.
Թո՛ղ յիշատակըս դառնա՛յ կուռ երկաթ,
Հոգիդ զարհուրի չարչարանքներից։

*
* *

Սառցալեռներ կան իմ կըրակ կըրծքի տակ,
Որոնք նըստած քար ծովին մէջ մոռացման՝
Լուռ խոկում են... ցո՞ւրտ ու խաւա՜ր երկնի տակ
Նոցա լանչին անուններ ու թըւական
Մըրըրիկը ցաւի երգով գըրում է։

*
* *

Անմահութեան ծաղիկներից անթառամ
Կը ցանկայի պըսակ կապել ճակատիս.
Արդէն ցաւի պարտէզներից անթարշամ
Արիւնացող վարդ եմ կըրում ճակատիս։

ԽԱՌՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՄ ՑԱՒԸ

Ինչպէս առաջին թոթվանք մանկական՝
Որ սըլանում է օրոցքից դէպ մօր,
Քընարըս հընչեց տըխո՞ւր ու լալկան՝
Թե՞ղն հայրենիքիս վիշտը դարևոր.

— Երբ հընչիւններից մի երգ հիւսուեցաւ,
Մարդիկ կարծեցին՝ թէ ա՛յդ է իմ ցաւ։

Անարդա՛ր բաղդի նետից վիրաւոր
Ե՛ւ իմ քընարը դողաց, մընընչեց
Մարդը սառապող, մարդը բընաւոր,
Ու կեանքի անգո՛ւթ վըշտիւը երգեց.

— Եւ երբոր այս խո՞ր հընչիւն լսուեցաւ,
Մարդիկ կարծեցին՝ թէ ա՛յդ է իմ ցաւ։

Թըշուառ մարդկութեան վըշտին կարեկից
Թաչուել ցանկացայ ես նորա համար,
Լըսալ իմ արեամբ մեղապարտ երկիր,
Ցաւերին վերջ տալ այդ զոհովն արդար։

— Իսկ երբ իմ իղձն այս չիրականացաւ,
Մարդիկ կարծեցին՝ թէ այդ է իմ ցաւ։

Իմ ցաւն օտա՞ր է մարդկային սըրտին,
Երկընքից վե՞ր է, անհունից անդի՞ն,
Ուր կոյր ուժերն են անվերջ, անդադրում
Ո՛ղջ տիեզերքի շուրջը թափառում.

Այն տեղ, ուր հանուր կեանքի նախնական
Աղբիւրն է բըղխում յաւիտենական.
Ուր արարչագործ ուժ, նիւթ, ժամանակ
Ազատութիւն են վայլում բացարձակ...

Իսկ ես հողածին, ահա՛ իմ մեծ ցաւ...
Մի թո՞յլ արարած, մի խըղճո՞ւկ անցորդ.
Անհունի ծոցից կեանքի մինչոցաւ
Դէպի գերեզման սողացող մի որդ...

Այդ է լոկ իմ ցաւ, որ արարած եմ,
Զե՛մ իսկ իմ Եսի արարիչն անկախ։

ԾՈՎԱԿԻ ՆԻՐՀԸ

Ըզգո՛յշ, մի՛ քայլիր, որ չըխանգարենք
Ծովակի նիրհը լո՛ւռ վերջալուսին.
Թէ ի՛նչ է քունը, մենք այդ լաւ գիտենք,
Նորան՝ ով ժայռեր կըրում է ուսին։

Ըզգո՛յշ, չըլինի թէ մեր քայլերով
Մոռացած կեանքը յիշել տանք նորան.
— Հըսկայ ժայռերը կախուած դարերով,
Եւ իր անզօր ճիգն յաւիտենական։

ԳԵՐԵԶՄԱՆՈՑՈՒՄ

Հազիւ են նիրհել այն անզարթ քընով,
Որին ծարաւան շընչելու ժամից.
Հազիւ մոռացել լի նենգ օձերով
Հովիտը կեանքի՝ ուր վիշտ քաղեցին։

Ըզգո՛յշ, չըլինի՝ թէ նոցա յանկարծ
Յիշել տանք ապրած օրերը իրենց.
Հազիւ են նիրհել այն քընով անզարթ,
Որին ծարաւան ապրելու ժամից։

ՏԳԷՏ ԱԶԳԻ ՀԱՆՃԱՐԻՆ

Հանճա՜ր էիր, քեզ աստուածները ծընան.
Թունկ եթերում կաթի տեղ լո՜յս ծըծեցիր.
Օրոցքիդ շուրջն անփուշ վարդերը ծաղկան,
Անմահների վե՜ճ օրօրով ընկրեցիր։

Դու լոյսի մէջ լոյս շընչեցիր, լոյս տեսար,
Կո՜յս երազներ ծառայեցին քեզ հընոյ.
Դու խրմեցիր աստուածների հետ նեկտար,
Ու շընորհքը դու ըստացար երգելու։

Սև՜ հող հազար... Այդ միջոցով և մի օր
Ոտք կոխեցիր այս կեղծիքի սի՛ղծ հովիտ.
Նըւիրուեցար արև հոգով քո բոլո՜ր
Ցաւերով լի՜, տըգէ՛տ, խաւա՜ր, խե՜ղճ ազգիդ։

Երգել միա՛յն դու գիտէիր... Երգեցի՛ր,
Բայց ո՛չ ազգիդ լըսած հի՜ն հի՜ն ձևերով.
Դու խո՜ր երգեր, դու նո՜ր երգեր հիւսեցիր,
Քո քընարը հընչեց հազա՜ր լարերով։

Դու երգեցիր առեղծուածը այս կեանքի,
Ճերջալոյսի հոգեվարքը վեհափառ.
Դու երգեցիր ծաղիկները եղեմի,
Մեռելների գիշերները մահավառ։

Այն լուսեղէն պալատները երգեցիր՝
Ուր հանգչեցաւ օրօրոցը քո նախկին.
Այն լո՜յս կեանքի աշխարհները երգեցիր՝
Ուր ցայտում են վըտակները պատրանքին։

Թոսք լըսեցիր դո՛ւ մըրրկի սոյներում.
Հին անտառը իր վըշտերից քե՛զ պատմեց.

Կոյս ծովակը լուսնի շողում, փոթորկում
Ծերուկ ժայռի գաղտնիքները քե՛զ մատնեց։

Դու ե՛րգ տուիր ծաղկին, ցօղին ու վարդին,
Ու նոցա հետ խօսակցեցիր երգերով.
Դու բա՛ռ տուիր մահին, լացին, հառաչին,
Նոցա խօսքը թարգմանեցիր մեր լեզուով։

Դու մեկնեցիր հայեացքների մունջ լեզուն,
Սըրտերի մէջ տեսար անբա՛ռ աշխարհներ.
Դու պատմեցիր հոգիներից երազուն,
Դու ա՛յն տեսար՝ ինչ որ ո՛չ ոք տեսաւ դեռ։

Դորա՛ համար քեզ շա՜տ քըչեր հասկացան,
Ծո՜վ ազգիդ մէջ մի բուռ սիա՛յն կաթիլներ.
Դորա՛ համար քո երգերն էլ չունեցան
Ա՛յն «արժէքը» ինչ հասարակ երգիչներ։

Ու լաց եղար անմարդ և խուլ տեղերում՝
Անիծելով այն օրը երբ հող հագար...
Մինչ վերջապէս յիմարատան անկիւնում
Զարչարանքով հագած հողդ մերկացար։

ԳԻՍԱԻՈՐԸ

Պետրոս Դուրեանի յիշատակին.

Զըմրան ցըրտացած արևի նըման
Անո՜ւշ վերջալոյս մ՚ունեցար միայն.
Կարճ կեանք մ՚ապրեցիր, անմահ հող մըտար,
Հայ երկնի համար գիսաւոր մ՚եղար։

Մօր գուրգուրանքով սիրեց քո հոգին
Ձերամբա՛ծ նոճին ու լացո՛ղ ուռին.

Մէկը մի՛շտ երկինք, միւսը մի՛շտ հող,
Այդպէս էին և՛ քո յոյզերն ու դող։

Նոճիների տակ մընացիր տըրտում,
Անէծքիդ փըրփուրն հոգուդ յատակում.
Ուռիների մօտ կարօտցար հողին՝
Մեծ հանգըստի տան խոնաւ անկողնին։

Թորո՜ւնկ մընացիր, անյա՜յտ ու անյո՜յս,
Սըրտովդ չանցաւ ո՛չ մի արշալոյս.
Թողի՛ր հեռացար կըսկըծով անհուն,
Աւելացնելու մի աստղի՛կ սիրուն։

ԺԱՅՌԵՐԸ

Ամպաչու լերան ապառաժ լանջից
Դարերով կախուած ժայռեր խըստագին՝
Նայում են ծաղրով ամպերի միջից,
Հիմքերը կըրծող գետի յորձանքին։

Եւ կու գա՛յ մի օր, երբ ժայռերն հրպարտ
Ոլիմպիական բարձունքից զըրկուած
Լողում են գետում... իսկ յորձանքն անպարտ
Նոցա անվախճան ծաղրի է մատնած։

ԽԱՂԻ ՄԷՋ

Մի մատղա՜շ աղջիկ ընստած ծառի տակ՝
Իր գիրկն էր առել մի փոքրիկ մանկիկ.
Կըրծքին սեղմելով անում էր կատակ,
Եւ ջերմ համբուրում աջ թաթը փափկիկ։

Քիչ առաջ նոքա շողի պէս անցան
Թրուչկոտում էին, խաղում միասին.
Բայց մանկան ձեռքը մի փոշիկ մնաց,
Եւ պատճառ դարձաւ նորա արցունքին։

Երկար չտևեց, մանկիկը լռեց,
Վառ ժրպիտ խաղաց արտասուող դէմքին.
Ամե՛ն ցաւ մոռցած, երկուսով նորից
Շարունակեցին խաղը միասին։

Երկա՞ր դիտեցի այդ սիրուն պատկեր,
Միտքս սրլացաւ հեռո՞ւն, շա՛տ հեռուն...
Երբ բաղդի խաղում մի՛շտ վրտանգաբեր
Փոշեր են ծակել սիրա՛ծ պատանուն.

Եւ նա նո՛յն անմեղ սիրով է սեղմել
Իր հասուն կրծքին, աւելի՞ խորունկ
Ծակուած սիրածին... Զո՞ւր ենք զգնում բուժել
Արիւնո՞ղ սրտի կրսկիծն անարցունք։

ԵՐԿՈՒ ԷՋԵՐ

Մի հի՞ն գրքից երկու էջեր ձեռքս ընկաւ,
Ու կարդացի՛ ես անյագ.
Այն տեղ գրտայ հարրստութիւն մի անքաւ,
— Իմաստութիւնն անյատակ։

Ա՜յնքան խորին բաներ այն տեղ կան գրրուած,
Որ կարծես թէ բիւր դարեր
Այդ երկու էջ տառերի տակ լուռ շարուած՝
Քեզ են բացել խո՞ր սրրտեր։

Շա՜տ կարդալով անգի՛ր արի ես բոլոր,
Ա՜խ, կարդացէ՛ք դուք էլ շուտ.

Այդ զոյգ էջեր մի ցաւատանջ թշուառ մեր
Թո՜ր աչերն են արցունքոտ։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՐԳԸ

Խաղաղութեա՜ն ենք կարօտ!

Ո՜վ իշխաններ, թագաւորներ աշխարհի,
Բաւական է, որքան մատա՜ղ մեր որդիք
Կրռիւներում զոհ գընացին կապարի,
Կամ տուն դարձան հաշմանդամ ու վիրաւիք.

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօդ,
Մեր որդիներ խաղաղութեա՜ն են կարօտ։

Բաւական է որքան մայրեր խառնեցին
Պըղտո՜ր արցունք իրենց որդոց վարդ արեան.
Բաւական է որքան հարսեր թառամեցին՝
Ըսպասելով փեսաների գալըստեան.

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօդ,
Մայրեր, հարսներ խաղաղութեա՜ն են կարօտ։

Բաւական է որքան սըրտեր յուզուեցին
Պատերազմի աղաղակից վայրենի,
Որքան հայրեր իրենց որդոց դաս տըւին՝
Բարբարո՜ս դաս — թափել արիւն ընկնանի.

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօդ,
Բոլոր հայրեր խաղաղութեան են կարօտ։

Մենք չե՛նք ուզում հարըստութիւնն ու ընծան,
Որ խըլուած են մի այլ ազգից կործանուած.
Մենք չե՛նք ուզում շողուն փառքի ծիածան,
Որ օտա՜ր մեր արցունքում է կամարած.

Հարկաւոր չե՛ն էլ մեզ կապար ու վառօդ,
Բոլո՛ր ազգեր խաղաղութեա՞ն են կարօտ։

Ո՞վ իշխանները, թագաւորնե՛ր աշխարհի,
Ա՜խ, ե՞րբ մեզ հետ ձեր գահոյքի բարձունքից
Կը քարոզէք անենգ սրտով ու արի
Եղբայրութեան աւետարանը անբիծ,

— «Անկցի՛ վերէժ, անկցի՛ն կապար ու վառօդ,
Մարդկութիւնը խաղաղութեա՞ն է կարօտ»։

ՍԻՐԵՆՔ ԻՐԱՐ

Սիրե՛նք իրար, ընկե՛ր, ինչ փոյթ,
Որ մեր կրօնքով ենք օտար.
Ահա սէրը մեզ կրօն անսուտ,
Պաշտե՛նք, սիրե՛նք մենք իրար։

Սիրե՛նք իրար, ազգութեամբ թող
Լինենք տարբեր ու օտար.
Զէ՞ որ մայրը մեր է նոյն հող.
Սիրե՛նք մեր մօրն ու իրար։

Սիրե՛նք իրար, հոգ չէ թէ մենք
Լեզու ունինք այլ, օտար.
Սիրոյ հանուր լեզուն գիտենք,
Արի սիրե՛նք միշտ իրար։

ՎԱՐԴԸ

Երբ դեռ մանուկ, անհոգ ինչպէս մի թռչնիկ,
Զով զեփիւռն էր ինձ փայփայում խանդավառ,

Ես սիրեցի անհո՜ւն սիրով մի ծաղիկ.
Այդ խո՜ւնկ վարդն էր, զարնան վարդը թաւշավառ։

Ու երբ դարձայ երիտասարդ, և ուժգին
Ես սիրեցի մատղաշ կոյսը ջերմ սիրով,
Իմ սիրածի, իմ թագուհու թանկագին
Շուշան կուրծքը զարդարեցի վարդերով։

Երբ յոյս ու սէր, երազ, արցունք ու ժըպիտ
Վըտակների նըման հոսին իմ սըրտից
Դէպի մըթի՜ն ծովը յաւերժ լըռութեան,
Զե՛ս բաժանուիլ, օ՜ սիրած վարդ, դու ինձնից։

Իսկ երբ յոգնա՜ծ կ'երթամ ե՛ս էլ այն ուղին,
Ուր նիրհում են դարերն իրենց վարդերով,
Ա՜խ, կ'ուզէի կըրել իմ ցո՜ւրտ հող կըրծքին
Աշնան վերջին վարդն իր դըժգոյն թերթերով։

ՓԱՌՔԻ ԾԻԱԾԱՆԸ

Ա՜խ, նայեցէք մուրացիկի աչքերին,
Ուր փըռուած են զոյգ խո՜ր ծովեր լայնարձակ.
Ծովեր պըղտո՜ր արտասուքի դառնագին,
Որոնց կըրծքին վիշտն է ոռնում սանձարձակ։

Տեսէք, ի՜նչպէս նա յուզուած է մութ խորքում,
Ի՜նչպէս ալիք արեան փըրփուր են ժայթքում.
Եւ թէ ինչպէս ալեայ կարմի՜ր անձ՝ևում
Եղբօր փառքի ծիածանն է շողշողում։

ՅՈՒՇ ՈՒ ՆՈՒԱԳ

Մերթ յուզում են անո՛ւշ յուշեր իմ հոգին
Մի հի՛ն կեանքից, որը սակայն չե՛մ ապրած.
Սիրա՛ծ դէմքեր զբաւում սիրտս կաթոգին,
Խօսում հոգուս, որոնց սակայն չե՛մ տեսած,
Բայց յուզում են հոգս յուշերն իմ հոգին։

Մերթ լսում եմ սըրտիս խորքում մի նըւագ,
Ու կարօտո՛ւմ այդ լսում է պիշ հոգիս.
Անո՛ւշ նըւագ, սըրտիս խորքին հարազատ.
Բայց յուշերս ո՛չ մի հաշիւ չե՛ն տալիս,
Երբ լսում եմ սըրտիս խորքում այդ նըւագ։

ՍԵ՛Ի ԳԱՐՈՒՆԸ

Ի՜նչ անո՛ւշ է սև գարունը հողին տակ,
Մըշտադալար նոճիների թաւուտում.
Մերկացած սէր, երազ, յոյս ու յիշատակ,
Ապրիլ յաւե՛րժ, ապրիլ անցա՛ւ, անտըրտո՛ւմ։

Օ՜, անո՛ւշ է անմահ գարունն հողին տակ,
Արտասուքի նոճիազարդ կո՛յս հովտում.
Մարդը խաբուած, մարդը յոգնա՛ծ, նահատակ,
Կ'ապրի յաւե՛րժ, կ'ապրի անցա՛ւ անտըրտում։

ՎԱՐԴ — ՄԱՄՈՒՌ — ՓՈՒՇ

Խաւարի խորքում, ուր տապանալուռ
Կասկածանք ու դաւ սողում են ըզգոյշ,

Աստղիս շողերով վարդ ներկաս մամուռ,
Անյայտ ապագաս ես տեսայ սև՜ փուշ։

Բայց չե՛մ վրնատում։ Կա՞յ այս աշխարհում
Բացարձակ վայելք առանց տանջանքի.
Կա՞յ մի կեանք արդեօք ողջ տիեզերքում
Միշտ վարդապըսակ, առանց վախճանի։

Թարմ վարդից մամուռ, մամուռից չոր փուշ
Փոխւում է կեանքի ծաղիկը դըժգուն.
Ի՛նչ որ ծաղկում է՝ կը խամրի՛ վաղ, ուշ.
Ա՛յս է բընութեան օրէնքը կայուն։

ԵՐԱԶԵԼԸ

Ո՞րքան ախորժ է երազել.
Բայց և որքան տըխուր է նա,
Նրբ կ'երազես օրն՝ որ անցել,
Եւ քա՛չ գիտես՝ որ յետ չի՛ գայ։

Մերթ կ'երազես հայր, մայր, եղբայր,
Մերթ սիրելիդ ու ընկերներ,
Ծընուած տուն՝ տեղ ու սիրած վայր,
Նոցա հետ սե՛րտ կապուած յուշեր։

Եւ զարթեցնում կամա՞ց կամա՞ց
Մի կեանք՝ անցա՞ծ ըստուերին պէս,
Որ քեզ խօսում աչերը բաց,
Աչեր խոնա՞ւ ու սրզատես։

Կարծես ասում՝ թէ — «սև՜ ներկան
» Խրլել է քո օրերն անվիշտ»... —

Ու նոր օրեր՝ ուր վարդեր կան՝
Տայ երազել... և այսպէս մի՞շտ։

Իսկ այն դրժխեմ գիշերուան մէջ,
Երբ երազն էլ վերջին անգամ
Կու գայ մարել սէր, յոյս ու տենչ,
Օ՜ սոսկալի՜ է այդ վայրկեան.

Երբ ոչ անցեալդ իր յուշերով
Կու գայ քեզ հետ մընտնելու հող.
Ու կ'աղմկի խո՜ւլ յոյզերով
Վերջի՜ն անգամ՝ միտքդ մընթնող...

Ա՜հ, գոնէ այդ հրաժեշտին
Մոռնա՛լ գիտնար մարդը թշուառ,
Ու չերազէր մահուան ժամին
Իր սիրելին, ընկերն ու մայր։

ԳԵՏԱԿԸ

Դարե՛ր գետակը վիթխարի լերան
Ապառաժ կուրծքը կըրծած շարունակ,
Այսօր սողում է ժայռերի միջով,
Եւ անվե՜րջ կըռիւ տալիս նամարձակ։

Եւ ո՞վ է ասում՝ թէ ազատութեան
Սուրբ կըռիւը չէ՛ բընութեան ծոցում,
Որ մղում ջուրը ժայռերի ընդդէմ,
Եւ կըռուով ազա՜տ ուղի ծեռք բերում։

ԱՆՏԱՌԻ ՑԻՇԱՏԱԿԸ

Ա՜խ, ո՞րքան յուզիչ և մելամաղձոտ
Հընչում էր այն ծայնն անտառի խորքից
Լո՜ւռ վերջալուսին.
Ո՞րքան սըրբազան բառե՞ր անարատ
Թրռչում էր երգչի վառ շընչթունքներից
Դէպ լացո՞ղ կուսին։

Ա՛հ, նա երգում էր աշխարհի՞ մասին,
Արհամարհում ցա՜ւ, տո՛վ, տըխուր վախճան՝
Կուսի թեերում.
Երգ ու արցունքի հետ այդ բոլորի՛ն
Իր անբիծ սըրտի սէրն անդաւաճան
Վըկա՛յ էր կանչում։

Այն օրից յետոյ, երբ վերջալուսին
Անտառ եմ գընում երազակոծո՛ւս,
Ցիշում օրն անցա՛ծ,
Կարծես առնում եմ լուռ լացը կուսին
Սըրբազան սիրոյ երգը սըրտայոյզ,
Բառե՞րն անմոռա՛ց։

ԵՐԲՈՐ ՄԵՌՆՈՒՄ ԵՄ

Երբոր մեռնում եմ, կ՚ուզեմ որ բոլոր
Իմ սիրելիները մահճիս մօտ լինին.
Եւ այդ պատահի աշնան մի պարզ օր,
Իմ ա՛յնքան սիրած վարդ վերջալուսին։

Կ՚ուզեմ որ նոքա լալու փոխարէն՝
Պատմեն հեռաւոր այն աշխարհներից,

Ուր կան կրակիծներ, վայելքներ խորին,
Եւ վերջալոյսներ վե՜հ ու գեղեցիկ։

Իսկ ես ամենին խո՜ր հաւատացած,
Գինով նոր կեանքի կարօտովն անհուն,
Վերջին շողերը դեռ չանյայտացած՝
Փակեմ աչքերս ու դիմեմ հեռո՜ւն։

ՑԱՒԻ ԽԱՉԻՆ ՏԱԿ

Վ. Նալբանդեանին

Ցաւի խաչին տակ հասկացանք իրար...
Վէրքերի շղթան կապեց մեր սրտեր.
Եւ այդ օրուանից իրարու համար
Դարձանք սրտակից անմեղ ընկերներ։

Լաւ օր չըտեսանք, մեր խե՜ղճ հոգիներ
Կապտեցան անվերջ բաղդի մըտրակից.
Տառապանքի մէջ սիրա՜ծ իմ ընկեր,
Ա՜խ, էլ ինչո՞ւ լալ այս նոր հարուածից։

Սըրբի՛ր արցունքդ, օ՜, դա չէ՛ վայել
Տառապանքների չարքաշ որդեգրին.
Եւ անմահի պէս սովորի՛ր նայել՝
Մի՛շտ հեգնող ժըպտով կեանքի խաղերին։

ՀԵՌՈ՜Ի ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

Մ. Շարաբանդեանին

Ամե՛ն իրիկուն թաքուն կարօտով
Ես ըսպասում եմ իմ ընկերներին.

Եւ լնծ թըւում է, թէ ահա շուտով
Ներս են մըտնելու երգը շըրթներին։

Եւ ուրախ զըւարթ պիտի բոլորենք
Սեղանիս շուրջը՝ թէյ առաջներիս.
Մենք պիտի վիճենք, խօսենք, երազենք՝
Իդէալներից, սիրուց ու բաղդից։

Բայց ո՛չ ոք չի գալ... մինչև խո՞ր գիշեր
Ես ըսպասում եմ դեռ նոյն կարօտով,
Եւ մի՛շտ թըւում է՝ թէ իմ ընկերներ
Ահա ո՛ւր որ չէ՛ կու գան սուլելով։

Կ՚ՈՒԶԷԻ Ե՛Ս ԷԼ

Կ՚ուզէի ե՛ս էլ շէկ շանթի նըման
Շըրջաններ գործել մընթի՛ն ամպերում.
Եւ կամ խորտակուած ալիքի նըման
Ղալ ու հեծեծել արձա՛կ ծովերում։

Անգի՛ն վիճա՛կ է, վըրէ՛ժ մընխալով՝
Ցըցուել կարենալ գոռ ժայռի կըրծքում,
Կամ յոգնած բազկով ու ցաւած սըրտով
Ղալ կարենալ մոր հարազա՛տ ծոցում։

ԻՄ ՑԻՇԱԿԱԿԸ

Կ՚ուզէի հիւսել սըրտիս խո՞ր թախծից
Անենատըխուր երգը տանջանքի,
Ուր ցաւած սիրտը կարդար իր կըսկիծ,
Ղըսէր մըռունչը արիւնող վէրքի,

Որի շեշտերից յուզուէին ծովեր,
Մութ սլեաց երգով արծագանգ տային,
Կապոյտի խորքում դողային աստղեր,
Մեզ անյայտ վշտեր նոքա երգէին։

Եւ այդ մի երգը իբրև յիշատակ
Կ'ուզէի թողնել իմ մահուանից յետ,
Որ նա անխափան հընչէր շարունակ,
Ու մարէր միայն տիեզերքի հետ։

ՄԱՀՈՒԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Նա մի աշխարհ է մերինից տարբեր,
Ինչ անցաւոր է օտա՛ր է նորան.
Ողջի կայեանն է տիեզերքից վե՛ր
Ինչ անվախճա՛ն է յաւիտենական։

Նա մի աշխարհ է մահով կեանք առած,
Վայելքի կեանքն է խորո՛ւնկ ու անվե՛րջ.
Երջանկութիւնն է այն մեր երազած,
Որ չըգիտէ լալ, և լուռ է յաւերժ։

ՏԻԵԶԵՐՔԻ ՄԷՋ

Կան աշխարհներ, ուր կեանքեր կան մեզ անյա՛յտ,
Օտա՛ր արցունք, օտա՛ր ժըպիտ, ցաւ օտա՛ր
Նոքա ունին, որոնց մասին դալկացայտ
Այն աստղերից մի օր հոգիս իմացաւ,
Թէ կան կեանքեր՝ որ մեզ օտա՛ր են անյա՛յտ։

Տա՛ր աշխարհներ, իրենց կեանքով մեզ օտա՛ր.
Ա՜խ, ո՛վ գիտէ, գուցէ նոքա մեր անմահ

Հոգիների կայաններն են անհամար,
Որոնց վերայ պիտի վայլենք մինչ նոր մահ
Օտա՞ր արցունք, օտա՞ր ժըպիտ, ցա՛ւ օտա՞ր։

ԵՐԿՈՒ ԳԱՐՈՒՆ

Մի գարուն անցա՛ւ, վարդը թառամեց.
Կու գայ նո՛ր գարուն,
Կը բացուի նո՛ր վարդ, բըլբուլը նորի՛ց
Կ'երգէ ե՛րգ սիրուն։

Մի գարուն անցա՛ւ, վերջին կայծն հանգաւ.
Երգիչը լըռեց.
Էլ չի՛ գալ գարուն, սըրտին ծանրացաւ
Ձիւնը և սառեց։

Նորա քընարն էլ սէր չէ՛ երգելու,
Էլ չի՛ գալ գարուն.
Սիրոյ մելոդին էլ խորթ է տըխուր
Նորա լարերուն։

ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ

Օր. Ռ. Բ – ին

Երբ աստուածավախ հաւատացեալի սիրտն է վիրաւոր,
Վազում՝ է տաճար, չոքում է մի սուրբ պատկերի առաջ,
Սըրտաբուղխ աղօթք մըրմընջում լըռին տիեզերքի հօր,
Սե՛ռտ մըտերմութեան վըկայ բերելով արցունքն ու հառաչ։

Եւ երբ աւարտած՝ անենց հաշտութեան տալիս է
(համբոյր,

Թոնա՜ւ աչերը յուսալի յառած մըշտալուռ սըրբին,
Նա հաւատում է իր հոգու խորքում, թէ ալցունքը հուր,
Թորունկ հառաչը, աղօթքը մաքուր վէրքը կը սըրբեն։

Ահա՛ և այդպէս՝ տառապանքի մէջ, անգի՜ն նազելիս,
Երբ ընժդեհ հոգիս անդա՛րծ օրերի լուռ շիրմանց վերայ
Հևում է անյո՜յս, քե՛զ է կարօտում, անունըդ տալիս...
Տըխո՜ւր երգելով արցունք եմ թափում պատկերիդ առաջ։

Ինչպէս բարեպաշտ հաւատացեալին, ի՛նձ էլ է թըւում,
Թէ քո շըրթները, որ սուրբ պատկերից ժըպտում են ինձ
(ցուրտ,
Պիտի տան համբո՜յր, սէ՛ր պիտի ծայնեն, դողդոջեն եր-
(դո՜ւմ,
Կեանքի կոչելով աքսորուա՜ծ օրերս իր սէրովը սուրբ։

ԼԵՌԸ

Թո՛ղ ծաղրէ սէգ լեռն աշխարհաասան
Մըրըրիկն անգամ.
Տարերքի մըղած կըռուի յանդիման
Մընայ անկործա՛ն.

Բայց ակներև է, որ չընչին շանթեր
Քար կուրծքն են պատռում.
Եւ հեղեղներն յորդ՝ խըմբուած կաթիլներ՝
Լանջերը կըրծում։

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻՆ

Քանի՞ ծրմեռ էր, ցուրտ սառնամանիք
Շըղթայե՛լ աշխարհ,
Երազ չէ՞ր տեսնել հաշտ ժըպտուն երկինք
Եւ դաշտեր դալար։

Իսկ երբ ծագել է գարնան վառ արև,
Հալում ձիւն ու սառ,
Երա՞զ է մի՛թէ նոր կեանքի բարև,
Ջերմ երկինք պայծառ։

ԱՐԻ՛, ԸՆԿԵՐ, ՀԵՌՈ՛Ի ՎԱՆԵՆՔ

Արի՛, ընկե՛ր, հեռու վանենք մութ ամպերը մեր ճակ-
(տից,
Ու թողնե՛նք՝ որ նոցա վերայ մի պահ շողայ վառ արև.
Բաւակա՛ն է որքան լացեց ցո՛ւրտ աշունը մեր ճակտից,
Ու մեր մատղա՛շ կեանքից թափեց կոկոն վարդեր ու տերև։

Տե՛ս ի՞նչ անուշ շըշընչում են զեփիւռները դաշտերում,
Հովիւները ի՞նչքան անուշ սըրինգները նըւագում.
Գառ ու ոչխար արածում են հորոտ — մորոտ արտերում.
Աշխա՛րհ ժըպտում... Օ՜, միա՛յն մենք ենք որ սև՛ բաղդն
(ենք սըգում։

Ա՛յն շըրթները՝ որ ժըպտում են շըռայլ կեանքից յա-
(գեցած,
Ա՜խ, նոցա՛ հետ պիտի լըռեն՝ որոնք լացին շարունա՛կ.
Այն սըրտերը՝ որ խըփում են երջանկութեամբ գինովցած,
Ա՜խ, նոցա՛ հետ պիտի լըռեն՝ որոնք կըծկա՛ն շարունակ։

Արի՛, ընկեր, հեռո՛ւ վանենք մո՛ւթ ամպերը մեր
(ճակտից,
Ու թողնենք՝ որ մի պահ շողայ նոցա վերայ վառ արև.
Մեր օրերի կարաւանը կ՚անցնի անդարձ աշխարհից,
Հո՛ղ կը մընի, իսկ հողին տակ չի՛ շողալ ո՛չ մի արև։

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

*
* *

Տիեզերքին մէջ կորսըւած մի ակկօրդ
Որոնում է հոգիս անհո՛ւն կարօտով,
Ու չի գտնում... խուսափում է նա անձկոտ,
Երբ անցնում է լալով հոգիս իր մօտով...
Տիեզերքին մէջ կորսըւած մի ակկօրդ։

*
* *

Մէգին մէջ նիրհող պատրանքը անյայտ,
Սուրբ առասպելը մի կեանքի անո՛ւշ,
Իրե՛ն է քաշում հոգիս դալկացայտ,
Իրե՛ն որ ունի ճակտին վարդն անփուշ,
Մէգին մէջ նիրհող պատրանքը անյայտ։

*
* *

Անուրջների ջե՛րմ գըրկին մէջ տարուբեր,
Ա՜խ, կ՚ուզէի մի պահ նիրհել անվրդով,
Ու չինչ կապոյտ երկընքի տակ խայտալով՝
Ինձ օրօրէր անմահ գարունն իր վարդով՝
Անուրջների ջե՛րմ գըրկին մէջ տարուբեր։

*
* *

Վերջալոյսին, երբ հազնում են ծիրանի
Ամպ ու անտառ, լեռ ու ծաղիկ, մոյգ ջըրեր,

Երբ անցնում է խստակցութիւն մի գաղտնի
Տիեզերքի ու երկրի մէջ համրօրէն,
Կ'ուզեմ վերջին շողերի հետ հողմ հագած՝
Ճամբայ ընկնել դէպի աշխարհն այն անդարձ։

*
* *

Երբ դագաղը գերեզման են իջեցնում,
Ինձ թըւում է՝ թէ լըսում եմ սըրտառուչ
Մի երգի ձայն՝ որ դիա՛կն է շըշընչում.
Դալկանում եմ ու չե՛մ կարող առնել շունչ,
Երբ դագաղը գերեզման են իջեցնում։

*
* *

Գերեզմանի մահասարսուռ խորերում
Անդընդախոս խոլական մի մունջ լեզուով
Փըսփըսում են հող սըրտերը անդադրում.
Այդ լըսում է հոգիս խորի՛ն զիշերով
Ու դալկանում՝ հիւանդ սիրտըս յիշելով։

ԻՄ ԿՌԻԻԸ

Ես կ'ուզէի ծովը նետուել՝
Ծովն ալէկոծ և յուզեալ,
Ալեաց ձայնին ձայնըս խառնել՝
Մէկտեղ անվե՛րջ կըռիւ տալ։

Թուլ ոստիւնով դէպի ժայռեր
Սըլանալ քաջ, համարձակ,
Ունենալով ալիքն ընկեր՝
Դառնալ կըրկին ծո՛վն արձակ.

Ու նո՛ր ուժով, կըրկի՛ն ժայռեր,
Կըրկի՛ն կըռիւ համարձա՛կ...

Մինչ իմ կըռուի անխոց ընկեր
Ծովափ նետէր իմ դիակ։

Թո՛ղ ծովն ընդ միշտ խուլ կըսկիծով
Ողբար թանկ մահն այն քաջի,
Որ ընկած է ափում մենակ
Ինչպէս ըսֆինքս այս կեանքի։

Ու զո՞ւր ծայն տար նաւորդն ինձի
Լացո՞ղ ծովի ափերից,
Զո՞ւր ըսպասէր առեղծուածի
Լրսել լուծում ժայռերից...

ՅԱՌԱ՛Ջ ԵՂԲԱ՛ՅՐ

Յառա՛ջ, եղբա՛յր, յառա՛ջ դէպի նըպատակ,
Իդէալի յաղթանակն է մեզ ընկեր.
Մութի ճանկից մարդկութիւնը նահատակ
Դէպի մե՛զ է յառել խոնա՛ւ իր աչքեր։

Ինչպէս անցորդ երկա՛ր ուղուց վաստակած,
Նա ընկե՛լ է անապատի մի ծայրում.
Մենա՛կ, նօթի, սուր փշերից խոցոտուա՛ծ,
Մեռնող ծայնով օգնութիւն է աղերսում։

Առիւծներն են միայն նորա շուրջն ոռնում,
Անապատի ազա՛տ իշխաններն ահեղ.
Սովալըլուկ խո՛ր գիշերին ըսպասում՝
Պատառ պատառ անելու խե՛ղճ զոհն անմեղ։

Յառա՛ջ, եղբա՛յր, յառա՛ջ դէպի անապատ՝
Քանի դեռ չէ տիրել մթի՛ն խո՛ր գիշեր.

Յառա՛ջ դիմենք դէպի այդ ծայնն հարազատ,
Ազա՜տ լոյսի յաղթանակն է մեզ ընկեր։

ԱՅՍՕՐ ԷԼ ՄԹՆԵՑ...

Այսօր էլ մընթնեց... Եւ մի օր պակսեց
Մեր խղճուկ կեանքի օրերիցն հաշուած.
Այսօր էլ մընթնեց... Մի նոր վէրք բացուեց
Ա՜խ մեր վիրաւի սըրտերում մաշուած։

Այսօր էլ մընթնեց... Եւ զուր յոյսերով
Մենք ըսպասեցինք բաղդի գալըստեան.
Այսօր էլ մընթնեց... Եւ մենք երկուսով
Կըրկին անկիւն մ'ենք փընտրում հանգըստեան։

Այսօր էլ մընթնեց... Ասա՛ ինձ, ընկեր,
Արդեօք ե՞րբ մե՛նք էլ անլա՜ց աչերով
Պիտի ողջունենք մի խաղա՜ղ գիշեր՝
Մեր բաղդի պայծառ ու վառ աստղերով։

Արդեօք ե՞րբ, ընկեր... Ա՜խ, իմ թանկագին,
Մի նախազգացում փըսփըսում է ինձ.
— «Կը մընթնէ նաև՛ ձեր օրը վերջին,
» Դուք մի՛շտ կը մընաք մոռացուած բաղդից»։

ՆՈՃԻՆԵՐԻ՛ ԽՈՐԵՐՈՒՄ

Նոճիների՛ խորերում,
Ո՛ւր կ'երազէ լըռութիւնը անխանգար,
Ա՜խ, թող փորեն մի գերեզման ինձ համար.
Նոճիների՛ խորերում։

Նոճիների՛ խորերում,
Ուր կը հևայ խո՛ր տանջանքի երգն անծայն,
Ա՜խ, ինձ համար թող կանգնեն մի յուշարձան.
Նոճիների՛ խորերում։

ԴՈՒ ՅՈԳՆԱ՞Ծ ԵՍ

Դու յոգնա՞ծ ես, ու կարօտում հանգըստեան,
Ցանկացածըդ չե՛ս գըտնելու բայց կեանքում.
Ըսպասում ես զո՛ւր յոյսերով գալըստեան
Այն վարդ բաղդին, որին տեսար սլատրանքում։

Նա տեսի՛լ էր. բաղդը չի՛ գալ յաւիտեան,
Տանջանքի մէջ հոգին գիտէ՞ երազել...
Լուռ հովիտն այն մոռացումի, հանգըստեան
Մեռելները միա՛յն կըրնան ոտք կոխել։

Դու յոգնա՞ծ ես, մըրըրկի մէջ են յոգնել
Բազուկներըդ, որ շարժեցի՛ր շարունակ.
Դու յոգնա՞ծ ես, յոյզերի մէջ է յոգնել
Վիրոտ սիրտըդ, որ բաբախե՛ց շարունակ։

Յոգնա՞ծ բազկով, յոգնա՞ծ սըրտով ուշ թէ վաղ
Դու կը նիրհես մոռացումի մութ հովտում.
Կը մոռանաս խո՛ր քընի մէջ այն խաղա՛ղ,
Թէ ապրել ես մի օր ցաւի այս հովտում։

ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Դու շող մ'էիր հիւսուած քընքուշ
Ա՛յն անուրջից, որին դաղրող

Կեանքն է ծարւում, ծրծել անկուշտ՝
Շընչելու նոր թրրթիռ ու դող։

Վրտակ մ'էիր ծովից անհուն,
Որ ոռոգում աշխարհն այն լոյս,
Ուր պալատն է աստուածներուն,
Ուր չի՛ մեռնում ապրիլը կոյս։

Ժրպիտ մ'էիր տիեզերքի՝
Վառ աստղերից երկիր կաթած.
Նրպատակը մեռնո՞ղ կեանքի,
Աստուածահիւս խորո՞ւնկ քերթուած!

Եւ սիրեցի՛ր դազա՞ղն .ու հո՞ղ,
Մո՞ւթ խորանը, ուր ամե՛ն լոյս
Թաւարում է մահաւորողող,
Ուր խամրում են երա՞զ ու յոյս։

ԱՇԽԱՐՀ Մ'ՈՒՆԻՄ

Աշխա՞րհ մ'ունիմ կըրծքիս տակին,
Աշխարհ սիրո՞յ, վարդի՞, գարնա՞ն,
Ուր զեփիւռներ զով մեղմագին
Ծաղիկներին զըրոյց կարդան.

Ուր վրտակներ ջըրով վըճիտ
Կարկաչն անուշ համերգելով՝
Ցայտեն յոյսե՞ր, համբո՞ր, ժըպիտ,
Թաւալելով դէպի լո՞յս ծով.

Որ փըրփըրոտ կոհակներով
Գըրկած շողերն արշալուսի,

Ծրծէ՛ գարունն իր վարդերով,
Եւ յատակից սէրը յուզի։

ՓՈԹՈՐԿԻ ՊԱՀԻՆ

Գոռում են ալիք, հողմը զիլ սուլում,
Երկինքը երգում.

Խօլական պարով շանթերն են շողում,
Շաչում ու թրռչում.

Ճայթում են ամպեր, ճարճատում ժայռեր,
Լեռներ սասանում.

Ցորդ սահանքները խուժում են երկիր,
Արտ, արօտ ծածկում։

ՊՂՏՈՐ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ

Արցունքները մահաբե՞ր են, թունաւո՞ր,
Որոնց ակը անյատա՛կ է ու պղտո՛ր.
Որի ջրերից կարմի՛ր օձեր են խլմում,
Որի վերայ մու՛թ երկինքն է որոտում։

Ըզգուշացէք, որ չըղառնա՛ք դուք պատճառ
Պղտոր արցունք թափել տալու ձեզ համար.
Օ՜, կը խամրին ձեր վարդերը նոցա տակ,
Կը հալածուիք դուք անզո՛ւթ ու շարունակ։

ԵՐԿՈՒ ՕՐՕՐՈՑՆԵՐ

Այն տեղ ուր մարդը առաջին անգամ
Նիրհեց մանկական աներա՛զ քընով,
Օտա՛ր էր նորան տանջանքի շըղթան
Եւ նա նիրհում էր անցա՛ւ, անվըրդո՛վ։

Ահա և այն տեղ, ուր վերջի՛ն անգամ
Քուն դըրին մահուան աներա՛զ քընով,
Օտա՛ր է կըրկին տանջանքի շըղթան,
Եւ նա նիրհում է անցա՛ւ, անվըրդո՛վ։

ՎԱՐԴԻ ԵՐԱԶԸ

Տա՛ք միջօրէ էր։ Մահալուռ հովտում
Կոկոն ալ վարդը յոգնած քուն մըտաւ
Իր հարազատ մօր հովասուն ծոցում։
Եւ չանցած երկար՝ մի երազ տեսաւ։

Տեսաւ որ հեռո՛ւ մի անապատում
Բացուել էր արդէն ու մա՛հ էր բուրում։
Գեղ բըլրուվի տեղ սև բուն էր վայում,
Պըղտո՛ր երկընքից կարմիր ցօղ ընկնում։

Դողահար, դըժգուն արթնացած քընից՝
Պատմեց այդ երազն իր ծերունի մօր։
Փորձառու մայրը գըլուխը շարժեց,
Ու տերևներում նորան լա՛ւ ծածկեց։

Շատ չանցաւ, յանկարծ մի շըշունչ թեթև
Անցաւ քարալուռ հովտի վերայով,

Եւ հովիտ մըտան՝ անցած իրար թև՝
Անծրև ու քամի խօլական երգով։

Ոտնակոխ եղաւ ծաղիկ ու դալար,
Ընտակի սիրտը սարսափից ճայթեց.
Կոկոնն էլ վախից մօր ծոցում կու լար,
Հէնց այդպէսով էլ նա իրան մատնեց։

Քամին դուրս քաշեց խիտ տերևներից,
Ուր պահ էր մըտել մօր կըրծքին փարուած,
Առաւ բիրտ ձրմեց՝ անծրևին յանձնեց...
Թերդ մայրն այդ տեսաւ և ուշաթափուեց։

ՎԵՐՑՈՒՇ

Յիշո՞ւմ ես, քոյրիկ, երբ մենք երկուսով
Ամեն իրիկուն քընելուց առաջ
Մանկական անմեղ կոկոն բերանով
Աղօթում էինք ծընողաց համար։

Ու նոցա վերջին անգամ համբուրած՝
Անկողին մըտնում անհոգ, անվըրդով.
Հարազատ տան մէջ հօրից պաշտպանուած՝
Նիրհում մանկական անուշիկ քընով։

Յիշո՞ւմ ես, քոյրիկ!... բայց ասա, ո՞ւր են,
Ո՞ւր են մեր հայր, մայր, ո՞ւր այն սուրբ օրեր...
Այս օրերն ո՞րքան ցուրտ ու տըխուր են.
Ասա, ո՞ւր կորան, քոյրիկ, այն օրեր։

ՄԵՌԱ՛Ի ՍԻՐՈՒՀԻՍ

Մեռա՛ւ սիրուհիս... Շրթներին անչար
Ծանրացաւ մահուան կընիքն անխորտակ.
Քարացաւ կուրծքը, սիրտն առաւ դադար,
Եւ խո՜ր քուն մրտաւ սառրն հողի տակ։

Մեռա՛ւ սիրուհիս... Ա՜խ, էլ ո՞ւմ համար
Բացւում է զարնան վարդն անուշաբոյր.
Վաղ արշալոյսին բլբրուլ սիրահար
Մելոդին էլ ո՞ւմ դայլայլում անլուռ։

Մեռա՛ւ սիրուհիս... Էլ ինչո՞ւ վըտակ
Անո՞ւշ կարկաչով մարգերում դալար
Թաւալում է հեզ, երկինք կապուտակ
Ժըպտուն լո՜յս սրփռում աշխարհի՞ն խաւար։

Մեռա՛ւ սիրուհիս. խամրա՛ւ նորա հետ
Սըրտիս մէջ դեռ նոր ծաղկած բուրաստան.
Սիրոյ աշխարհի երազներս յաւէտ
Դագաղը գլորկած գերեզման մրտան։

Մեռա՛ւ սիրուհիս. ինչո՞ւ ես դեռ կամ,
Ո՞ւմ եմ ըսպասում՝ երբ նա էլ չի գայ.
Օ՜ մա՛հ, տուր դըժգոյն մի աստղիկ դառնամ
Ու շողամ թախծոտ լուռ շիրմին վերայ։

Ո՛Վ ՄԱՅՐ ԵՐԿԻՐ

Ո՛վ մայր երկիր, մի քիչ կանգ առ ու լըսի՛ր
Զաղուկներիդ հեկեկանքն ու արտասուք.

Նոքա մե՛րկ են, անօթի՛ են, մայր երկիր,
Թաւալում ես մինչ դու ուղիդ անընտոյգ։

Ո՞ւր ես տանում քո զաւակները յոգնած,
Արագ սլացքով տիեզերքը ճեղքելով.
Ո՞ւր ես դիմում, ուղիդ գըրկող հըրակայծ
Աշխարհների մէջ անյոյս լո՛ւռ սողալով։

Ա՜խ, դէպի քաղցր այն սահմանները հեռաւոր,
Որոնց մասին երազները ցանուցիր
Պատմել են քո զաւակներին քընում խոր,
Ո՛վ մայր երկիր, դէպ ա՛յն կողմեր սըլացիր։

ԴԱՐԵՐԻ ԵՐԳԸ

Դարերն են քայլում խոլական երգով
Համայնապարփակ տարածութեան մէջ՝
Մոխրո՛վ բեռնըւած. ասես հոծ շարքով
Անապատի մէջ կարաւան մ՚անվերջ։

Եւ խուլ ոռնում են իրենց նըւաղած
Ժըպտով, կըսկիծով մութի արգանդից.
Սև՛ կապանքները կըրծելով կատղած՝
Ապրել — ըզգալու լեցուած կարօտից։

Դարերն են քայլում ու առա՛ջ խաղում
Ապրել — ըզգալու կարօտի երգով.
Հո՞ղ կարաւանը մահն է լուռ վարում՝
Անդա՛ր մի աշխարհ անըզգայ կեանքով։

ՄԱՀԸ

Ցաւիտենակա՞ն անփարա՛տ խաւար.
Երկինք մ՚է յաւէ՞տ դաղարը հագած,
Որի կամարին արևն է օտա՞ր,
Ուր սև՞ շողում են աստղերը հանգած։

Ուր ցաւ ու կրսկիծ բոցերում անլոյս
Անցաւ երկունքով տառապում անծայն.
Անըզգայութեան քընի մէջ կիրք, յոյս
Նիրհում են անզարթ, նիրհում անսասան։

Ուր սէրը ինչպէս հանգած մի խարոյկ՝
Անկայծ առկայծում վեստեան խորանում.
Ուր արցունքը քար ինչպէս սև կընդրուկ
Ծրխում է անվառ, անծուխ, անմարում։

Ամե՛ն բան լուռ է. ո՛չ աղօթք, ո՛չ երգ,
Ո՛չ սիրել — սիրուել, ո՛չ լալ ու յուսալ.
Անուրջը ցընդած, պատրանքները մերկ
Անժըպիտ հեգնում ապրելն ու ըզգալ։

ՊԱՐԱՊԻ ԵՐԳԸ

Ցաւից ազա՛տ, ազա՛տ յոյսից իր տենչով,
Պարփակում եմ լուռ միջոցը ես բոլոր.
Գիրկս են դիմում արիւնացօղ կատուրջով՝
Իղձ, սէր, արցունք արբշիռ՝ ըմպած նիրհը խոր։

Ցաւէ՛տ օտար կեանքի ունա՛յն աղմուկին,
Իմ ծոցի մէջ չըկա՛ն գեհեն կամ եդեմ,

Ուր բոցերում արտասուէին ցաւ, կըսկիծ,
Եւ կոյս ժըպտէր անվիշտ կեանքը նորա դէմ։

Ես հանգիստն եմ, և ապրում եմ հողերում,
Այն հանգիստը՝ որ բեռան տակ կարօտաք.
Արէք, յոգնա՜ծ իմ զաւակներ, անտըրտում
Ձեր նախամօր անվիշտ ծոցում հանգչելու։

ԹՈՒՄԲԵՐԸ

Նոճիների ըստուերին տակ
Դարեր ապրող անխօս թումբեր
Լուռ ծըծում են անհուն մ'անյազ,
— Դաղալն ապրող սիրտ ու մըտքեր։

Ու իրենց հող երակներում
Սէրն ու փառքը աւար պահած,
Ժըպիտ մ'անեղծ, որ միշտ տըրտում
Ունին կեանքի ճակտին գամած։

Բայց չի այրում անդ սէրն անշէջ
Նոր արշալոյս մատաղ գարնան.
Դառն արցունքի անծրևին մէջ
Չի կապում փառքն իր ծիածան։

ԿՐԾՔԻՆ ՏԱԿ

Քեզ սիրեցի, ինչքան կըրծքում իմ ուժ կար,
Եւ այդ կուրծքն լոկ երդուեցի տալ քեզ նըւէր.
Դու ծաղրեցիր, մըրմընջեցիր հեգնաբար՝
— «Անարժէք բան, անպէտք, մաշուա՜ծ ոսկորներ!»

Մաշուա՜ծ ոսկոր! Բայց նոցա տակ անսահման
Մի անհուն է նիրհում, անհուն խո՛ր, անհաս...
Այն տեղ է նա բազմած, որի սուրբ անուան
Դու ծանում ես օրհներգ, աղօթք հանապազ։

Տիեզե՛րք մ՚է բարձունքներով, վիհերով,
Ուր անուրջում աշխարհներ են թաւալում.
Աշխարհներ լի՛ յուսո՛վ, իղձո՛վ, կրքկիծով,
Որ կարօտի անլո՛յս բոցում են հալում։

Այն տեղ մութ է, ցո՛ւրտ ու խաւա՛ր է տիրում
Առանց սիրոյդ ջերմ արևի, դատարկ, խուլ...
Եւ ի՞նչ փոյթ քեզ, որ մի անհուն է մարում
Տառապանքի, յոյզի գրկի մէջ ամուլ։

Է՛հ, թո՛ղ մարի, թող մընայ նա անարև,
Բաղխին իրար աշխարհները՝ կործանին.
Մահը շընչէ, լեցնեն որդն ու հողը սև՛,
Մաշուա՜ծ ոսկրից նիւսուած երկինքն անհունին։

ԻՄ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Ակկորդ մ՚էի առեղծուածի քերթուածից,
Որ հընչում է տիեզերքի խորանում.
Թրթռացի մի պահ երկրում, ու նորից
Թրռա՛յ, կորա՛յ տիեզերքի խորերում։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Մ. Խ. Հ. Ազգային Գրադարան
1922
Ա. Մ. Մ. Մ

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

ԿԱՐՄԻՐ ԳԻՇԵՐ

Օ՜, չընկրկէք այս գիշեր մի՛թ ու տըրտո՜ւմ.
Մեռելներն իսկ են այս գիշեր քընադուլ.
Ոճրածարաւ գիշակերներն անդադրում
Աղօթում են մշուշի մէջ հոյլ ի հոյլ.

Օ՜, չընկրկէ՛ք այս գիշեր մի՛թ ու տըրտո՜ւմ։

Թօլ խաւարո՜ւմ բուրթ դաշոյններ են սըրում.
Գերեզմաններից պատրաստում են բիւր մահակ.
Օ՜, այս գիշե՛ր արիւնախա՜նձ ու տըրտո՜ւմ՝
Զըլլնի՛ թէ խոր քուն լինիք անգիտակ.

Թօլ խաւարո՜ւմ սուր, մահակ են պատրաստում։

Արթո՜ւն կացէ՛ք, արթո՜ւն կացէ՛ք այս գիշեր,
Մանկիկներին ապահով տեղ թագցրէք.
Ներքնայարկում դո՛ւք էլ պահուէք այս գիշեր,
Ու բոլորո՜վ խաչի առաջ ծունկ եկէք.

Աղօթեցէ՛ք աղօթեցէ՛ք այս գիշեր։

Օ՜ Աստուա՛ծ իմ, այս ի՜նչ ձայներ են հասնում...

Օ՜ լըսեցէ՛ք, օ՜ լըսեցէ՛ք, լըսեցէ՛ք
Բոցավառուած երկընքի տակ անհատնում
Հոգեվարքի աղերսմե՛ը բոցերում,
Դահիճների լըպիրշ քըրքիջն ու խընդում

Ողջակիզուող ժողովուրդի լացի մօտ...

Օ՜ նայեցէ՛ք, օ՜ նայեցէ՛ք, նայեցէ՛ք
Արիւնաներկ այն դէմքերին զարհուրած,
Որ փախչելիս գընդակահար են ընկնում,

Նոցա՜, որոնք անկողնում են մորթըւում.

Նոցա՜, որոնք մահակների տակ մեռնում.

Նոցա՜, որոնք խեղթութիւնից ծիծաղում.
Նոցա՜, որոնք սիրելիները են կանչում.
Նոցա՜, որոնք մանկիկները են որոնում.
Մանկիկների՜ն, որ սըրի ծա՜յր են հանւում...

. . . . . .

. . . . . .

Օ՜ Աստուա՜ծ իմ, ո՜ Աստուա՜ծ իմ, Աստուած իմ!

. . . . . .

Է՛լ մի նայէք, օ՜ մի՛ նայէք, մի՛ նայէ՛ք։

Մի գիշեր

Մի գիշեր, երբ հոգիս ցո՜ւրտ էր ու դատա՜րկ,
Երբ սիրտըս լուռ մեռած հաւատն էր լալիս,
Մե՜ծ սոսկումով ես նայեցի բիւրակարգ
Աշխարհներին, որ վառւում են մեր վերև.
Մի գիշեր՝ երբ հոգիս ցո՜ւրտ էր ու դատա՜րկ։

Ես ուզեցի՝ որ աստղերից իմանամ
Նըպատակը մեր այս կեանքի անցաւոր.
Եւ թէ կեանքը մի ակկորդ չէ՞ տարտղնած՝
Ա՛յն Ամբողջից որ մի Աստուա՜ծ յօրինեց.
Ես ուզեցի՝ որ աստղերի՜ց իմանամ։

Խընդրեցի՝ որ նոքա ցո՛յց տան մի աստուած,
Մի նո՜ր աստուած հոգուս դատա՜րկ տաճարին,
Մի նո՜ր հաւատ՝ հաւատներից որբացած
Եւ հաւատի մի՛շտ պապակող իմ սըրտին.
Խընդրեցի՝ որ նոքա ցո՛յց տան մի Աստուած։

Անգիտակի՜ց անգա՛մ իրենց գոյութեան,
Զրհասկացան իմ տրված հարցն ու խընդիր.
Հաւատարի՛մ իրենց շաւղին ընական
Անպատասխան նոքա անցա՜ն անխոտիր.
Անգիտակի՜ց անգա՛մ իրենց գոյութեան։

Ողջ աստղերի լռութիւնից յուսահատ,
Ես դիմեցի խաղա՛ղ նիրհող ծովերին՝
Խընդրելով մի նո՜ր աստուած և նո՜ր հաւատ.
Նոքա նոյնպէս ինձ պատասխան չտրին,
Երբ խընդրեցի համր աստղերից յուսահատ։

Հեռո՜ւ հեռո՜ւ հորիզոնից ժամանած՝
Քամիներին ես դիմեցի նո՛յն խընդրով.
Իմ որոնած նո՜ր հաւատն ու նո՜ր աստուած
Նոքա չէի՛ն տեսել աստղե՜ր չափելով
Հեռո՜ւ հեռո՜ւ հորիզոնից ժամանած։

Ու իմ հոգի՜ն դարձեալ ցո՜ւրտ է ու դատա՜րկ,
Տիեզերքի լռութիւնից վիրաւո՜ր.
Ա՛յն գիշերից յե՛տ է կանչում, ա՜խ, անդարձ
Ձերմ հաւատի վարդ օրերը բաղդաւո՜ր,
Երբ լոյս ունէր, և ո՛չ ցո՜ւրտ էր, ո՛չ դատա՜րկ։

ՀՍԿՈՒՄԻ ԳԻՇԵՐ

Տիեզերքի՜ առաջ հոգի՜ս եկած ծո՜ւնկ,
Աչերը պի՜շ, խորասուզուա՜ծ յուշերում,
Հին հաւատիս մահն է հրսկում անարցունք,
Սև՜ մրրրկով լրդի այս մո՜ւթ գիշերում.

Տիեզերքի՜ առաջ հոգի՜ս եկած ծո՜ւնկ։

Տըրտո՞ւմ ինչպէս որբն անծանօթ վայրերո՞ւմ,
Մեռելական դալկութիւնը ճակատին,
Արցունքները սառած իր պա՞ղ բիրերո՞ւմ,
Լո՞ւռ դիտում է հին հաւատին մահուդին.

Տըրտո՞ւմ ինչպէս որբն անծանօթ վայրերո՞ւմ։

Օ՜, այս գիշեր աղօթեցէ՛ք ինձ համար
Դո՛ւք որ հաւա՛տ ունիք կեանքում և Աստուա՛ծ.
Աղօթեցէ՛ք եղբայրարա՛ր, հայրարա՛ր
Հոգո՛ւս համար, որ մեռա՛ւկ է ու լքուա՛ծ.

Օ՜, այս գիշե՛ր աղօթեցէ՛ք ինձ համար։

Զըլինի՛ թէ իմ հրկումի՛ այս գիշե՛ր
Քընա՛ծ մընաք, հոգինե՛ր կոյս ու արդա՛ր.
Արթո՛ւն կացէ՛ք մըրըկարօ՛թ այս գիշե՛ր.
Ու բոլորո՛վ ծունկի՛ եկած՝ ինձ համա՛ր

Աղօթեցէ՛ք, աղօթեցէ՛ք այս գիշեր։

ՄԵՌԵԼԱՑՅԻ ԳԻՇԵՐ

Տաճարների՛ պատերին տակ դողահա՛ր
Քո՛յր հոգիներ ըսպասո՛ւմ են այս գիշե՛ր
Իմ հոգո՛ւն, որ խաւարի մէջ հողմավա՛ր
Այցի՛ երթանք մեռելների՛ն անընկե՛ր.
Տաճարների՛ պատերին տակ հաւաքուա՛ծ։

Մեռելների՛ն ծայն պիտի տանք այս գիշե՛ր,
Որ մեզ իրե՛նց անդըրշիրմեա՛ն աշխարհի՛ց
Անծա՛մբ պատմեն, ինչ պատմել են սուրբ գըրքեր
Ա՛յդ իսկ կեանքից, որ չունի մա՛հ ու թախիծ.
Մեռելների՛ց պիտի լըսենք այս գիշե՛ր։

Զրկինի՞ թէ արթուն մընա՞ք այս գիշե՞ր,
Ո՞վ բարեպաշտ, աստուածավա՞խ հոգիներ,
Ու լսէ՞ք մեր խօսակցութիւնն ու հարցեր...
Օ՜, նիրհեցէ՞ք, վա՞ղ ներհեցէք աղօթքո՞վ.
Զրկինի՞ թէ արթուն մընաք այս գիշե՞ր։

ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ԳԻՇԵՐԸ

Ղօղանչո՞ւմ են մեծ զանգերը համիրօէ՞ն
Աստուածայի՞ն ցաւի անհո՞ւն կրսկրծո՞վ.
Խրոնիթներէ՞ն, պալատներէ՞ն, բանտերէ՞ն
Հին տաճարներն յեղյեղում են ամբոխով՝
Մեծ զանգերի ղօղանչին հետ համիրօէն։

Եղբայրաբա՞ր նոքա այսօր պիտի լա՞ն
Սրգաճանա՞նչ կերոնների՞ առաջին,
Որոնք ծուխի՞ մէջ թախծո՞տ կը պրպրլա՞ն,
Փրրկչի տանջա՞նքն՝ հայեացքներն իր սև խաչին.
Եղբայրաբա՞ր նոքա այսօր պիտի լա՞ն։

Հոգի՞ս անգամ տաճարների՞ց արտաքսուա՞ծ,
Յա՞ւ է ըզգում նա այս գիշեր անպատո՞ւմ,
Եւ իր դատա՞րկ զանգրուածո՞վ սուգ հագա՞ծ՝
Քոյրանո՞ւմ է հոգիների՞ն այն տրրտո՞ւմ.
Իմ հոգի՞ն իսկ տաճարների՞ց արտաքսուա՞ծ։

Եւ թրուում է՝ թէ տեսնում է Յիսուսի՞ն
Գեթսեմանի՞ պարտէզին մէջ անրնկե՞ր,
Հոգիների փրրկութեան խաչն իր ուսին,
Արտասուաթո՞ր աչերն յառա՞ծ դէպի վեր.
Գեթսեմանի՞ պարտէզին մէջ մեն — մենակ։

Ու ընկճուած աստուածայի՞ն կըսկըծի՞ց,
Սրգաւորուա՞ծ աշխարհի հետ միասի՞ն,
Իմ անծանօթ եղբա՞յր հոգին ջերմօրէն
Արտասուում է վարդ ջարջարանքն Յիսուսին,
Զանգերի խո՞ւլ զօղանչին հետ քայրօրէն։

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ

...Ու տըրտո՞ւմ կ'երթա՛մ մենաւո՞ր ճամբով,
Հոգի՞ս մերժըւա՛ծ հաւատի՞ շէմքից.
Անընկե՞ր կ'երթա՛մ մենաւո՞ր ճամբով՝
Օտա՞ր աշխարհին, խորթացա՛ծ կեանքից.
Ես տըրտո՞ւմ կ'երթա՛մ մենաւո՞ր ճամբով։

Տիեզերքի հե՞տ խօսելո՞ւ կ'երթամ,
Հոգո՞ւս կասկածներ նորա՞ն բա՛ց արած,
Ճըշմարի՞տ հաւատ զըտնելո՞ւ կ'երթա՛մ՝
Յետ տալո՞վ նորան հաւասրս մեռած.
Մի անմա՞հ Աստուա՛ծ առնելո՞ւ կ'երթա՛մ։

Օ՜, ըզգուշացէ՞ք ինձ պատահելիս,
Մե՞ն ճամբաներում խորի՞ն զիշերով
Տիեզերքի հե՞տ երբ խօսում հոգիս,
Ծաղրե՞լ կամ զրթա՞լ, մի խե՞ղճ կարծելով.
Օ՜, ըզգուշացէ՞ք, կը ցաւի՞ հոգիս։

Թողէ՞ք որ տըրտո՞ւմ երթա՛մ մե՞ն ճամբով,
Հաւատի շէմքի՞ց մերժըւա՛ծ հոգով.
Անընկե՞ր երթա՛մ մենաւո՞ր ճամբով,
Հոգուս համար նո՞ր հաւատ փընտրելով.
Օ՜, թողէ՞ք տըրտո՞ւմ երթամ մե՞ն ճամբով...

ՑԱՆԿ

Իմ երգերը 5

ՀԱՅՐԵՆԻ ՓՆՋԻԿ

Հայ Երգչին 9
Օլորոցի երգ 10
Որբերի աղօթքը 13
Մայրերն են խօսում 13
Եկէք եղբայրնե՛ր 14
Մայրի՛կ, անօթի եմ 14
Պատմիր Աստծուն 15
Հայրիկ, ինչո՞ւ 15
Ե՛ւ քեզի համար 16
Դէպի խրճիթներ 17
Ինչո՞ւ զարթեցի 18
Ազա՜տ լուսին, քեզ Գողգոթա կ'ընտրէի . . . 19
Ընկերիս 20
Անդրշիրմեան իրծ 21
Լեռնցին 22
Ասացէ՛ք նորան 22
Կու գայ դարձեալ վառ գարուն 23
Հայուհու աչեր 24
Դանր է քո երգը 25
Մուրացկի զաւակը 26
Մայրը 28
Վերջալոյսին 31
Ամե՛ն գիշեր, երբ անկողին էք մըտնում . . . 32

ՄՐՐԿԻ ՍՈՑԼԵՐ

Կրկնածնունդ 35
Լռում են մի պահ 35
Երբ սև սև ամպեր 35
Ցիշատակներս 36
Ընկերիս 36
Մրրիկներին դարձայ որդեգիր 37
Դար մի ժամանակ 37
Ա՜խ, երբ ծաղրում են 37
Օ՜, եթէ մնան 38
Թո՛ղ անդուլ սուլեն 38
Շա՜տ օրեր առաջ 38
Օ՜, գէթ դո՛ւք լացէք 39
Շա՜տ ուշացան 39
Էլ ո՞ւմ աղօթեմ 40
Սէրս երգեցի 40
Ես զալկութիւն սիրեցի 40
Եթէ չլինէր 41
Թունաւոր իժի զալարումներով 41
Ծո՛վ ու մրրիկ 42

ԳԻՇԵՐԱՑԻՆ ՆՈՒԱԳՆԵՐ

Ծամ է, սիրեկան 45
Դեր տիեզերքը 45
Աղծազանգը 45
Մի ահեղ երգ 46
Ես աստուած եմ 46
Անո՛ւշ վայրկեան 47
Մի հիւանդ ակկորդ 47
Գիշեր 47
Զմրան գիշեր 48
Հաւի երգը 48
Մութի հատերգը 49
Խորհրդաւոր նուագը 49
Առեղծուածը 50
Սին իմաստը 50

Ոգիդ 51
Անմոռաց երազները 51
Ձայնը 51
Դաղաղներ 52
Ազդանշանը 52
Անծրևո՛տ գիշեր 53
Առեղծուածը 53
Արիւնացող սև վարդեր 54
Անմա՛յր ու անտո՛ւն 54
Սև գիշեր 55

ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ

1 — 50 59

ՀԱՆՆԱ

I — XV 85

ԻՄ ՍՐՏԻՆ

Ա — Ե 95

ՇՈՂ ՈՒ ՑՈՂ

1 — 45 99

ԱԼԲՈՄՈՒՄ

Ա — Թ 121

ԻՄ ԵԱՐԸ

Ա — ԺԴ 127

ՎԵՐՋԱԼՈՅՍԻՆ

*** — *** 137

ԻՄ ՄՕՐԸ

Ա — ԺԵ 157

ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ

*** — *** 165

ԵՐԳԵՐ

Առաջին սէր 175
Մի հին երգ 175
Այն վիրջալոյսից· 175
Զորցած մի թերթ 176
Միամիտ մանուկ· 176
Այն օրերը 177
Ամպիկը 177
Փոթորկոտ յուշեր 178
Վերջին վարդը 183
Քեզի հետ մէկտեղ 183
Նոմեաց հովտում 184
Սէրս 184
Հրդեհը· 185
Վերհանդիպումն 185
Դեռ շատ պիտի լաս 186
Մարգարիտները 187
Վարդեր ունէի· 187
Վերջին անգամ 187
Ես քեզ հետ կու գամ 188
Մի տխրիր 188
Գաւառանքներս 189
Աշուն 189
Ամրան մի երեկոյ 189
Սրտիս շեշտերը 190
Անտառի երգը 190
Ասա ինձ ո՞ւր են 191
Գոնէ մի գիշեր 191
Դու սիրում ես 191

Օ՜, դու չգիտես 192
Դժգոյն շուշանը 192
Կ'ուզէի քեզ հետ 193
Ասա, հոգիկ 193
Մռայլ է հոգիս 194
Թոյլ տուր 195
Պատմեցէք նորան 195
Թող մի անգամ էլ 196
Կ'ուզէի գիտնալ 196
Մոռացիր ընդ միշտ 197
Ցիշատակդ 197
Դու լաց ես եղել 198
Լուսնի շողի տակ 198
Քեզ պիտի յիշեմ 198
Սեղմիր ինձ, սեղմիր 199
Վերյուշ 199
Մեր սրտերը 200
Մի փունջ կսկիծ 200
Ցիշիր իմ սիրտը 201
Դալո՛ւ է մի օր 201
Կ'ուզէի գիտնալ 202
Դարձեալ տխրեցիր 202
Յաւիտենական սէր 202
Ո՛չ, դու մեռա՞ծ չես 203
Լուռ մենութեան մէջ 203
Կորցրած ընկերս 204
Մահուան բուրաստանը 204
Հողի տակ 204
Ամեն իրիկուն 205
Ինձ շա՞տ յանախ է պատահել խաբուիլ 205
Երազներս 206
Ինձ հետևում ես 206
Բնազուրկ թուչնիկ 206
Վայրիկ մի հանգիստ 207
Ժամանակ է 207
Ամեն իրիկուն 208
Օրերից ի վեր 208
Սև հողը միայն 209
Վերյուշ 209
Ասա ինձ, ինչու 210

Ե՛կ իմ սիրեկան 210
Ես հիւանդ էի· 211
Միամի՛տ մանուկ 211
Դու չհասկացար 211
Սրտիս թախիծը 212
Քեզ սպասեցի· 212
Ծաղիկները 213
Առաջին իղձ 213
Վերյուշներ 213
Պատասխանի տեղ 214
Ցիշի՛ր ինձ 215

ՓՇՐԱՆՔՆԵՐ

*** — *** 219

ԹԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Իմ ցաւը 225
Ծովակի նիրը 226
Գերեզմանոցում 226
Տգէտ ազգի հանճարին 227
Գիսաւորը 228
Ժայռերը· 229
Խաղի մէջ 229
Երկու էջեր 230
Ժողովուրդների երգը 231
Սիրե՛նք իրար· 232
Վարդը 233
Փառքի ծիածանը 233
Ցուշ ու նուագ 234
Սև՛ գարունը 234
Վարդ – մամուռ – փուշ 234
Երազելը· 235
Գետակը· 236
Անտառի յիշատակը 237
Երբոր մեռնում եմ· 237
Ցաւի խաչին տակ 238
Հեռո՛ւ ընկերներիս· 238

Գ'ուզէի և՛ս էլ 239
Իմ յիշատակը 239
Մահուան աշխարհը 240
Տիեզերքի մէջ 240
Երկու գարուն 241
Պատկերի առաջ 241
Լեռը 242
Գարնանամուտին 243
Արի ընկեր, հեռո՛ւ վանենք 243
Հատուածներ 244
Իմ կռիւը 245
Ցառա՛ջ եղբայր 246
Այսօր էլ մթնեց 247
Նոճիների խորերում 247
Դու յոգնա՞ծ ես 248
Գեղեցկուհին 248
Աշխա՞րհ մ'ունիմ 249
Փոթորկի պահին 250
Պղտո՞ր արցունքները 250
Երկու օրօրոցներ 251
Վարդի երազը 251
Վերյուշ 252
Մեռա՛ւ սիրուհիս 253
Ո՞վ մայր երկիր 253
Դարերի երգը 254
Մահը 255
Պարապի երգը 255
Թումբերը 256
Կրծքիս տակ 256
Իմ տապանագիրը 257

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Կարմիր գիշեր 261
Մի գիշեր 262
Հսկումի գիշեր 263
Մեռելայցի գիշեր 264
Զարչարանքի գիշերը 265
Իմ ճանապարհը 266

24718